ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(78-րդ տարի) Թիվ-8 (1690) Օգոստոս 2024

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Որ ճանապարհն է ընտրելու մեծամասնությունը (էջ 1-3)

2- Հարցազրույց

Հարցազրույց Գառնիկ Դանիելյանի հետ
Հասնել իշխանափոխության՝ երկիրը փրկելու համար (էջ 4-7)

3- Թարգմանություն

Տիգրան Բաղրամյան
Հայ զինվորականներին պատել է Ստոկհոլմյան համախտանիշը (էջ 8-10)

Ահմադ Քազեմի
ՆԱՏՕ-ի Թուրանական միջանցքը և Ռուսաստանի արատավոր տրամաբանությունը (էջ11-14)

4- Հասարակություն

Մանվել Մկրտչյան
Որտե՞ղ են ապրում հակազգային և հակապետական մանրէները (էջ 15-17)

5- Պատմության լուսարձակ

Անի Մելքոնյան
Հայ եկեղեցու պատմական առաքելությունը ազգային ինքնության պահպանման գործում (էջ 18-22)

6- Տարածաշրջանային

Վահե Սարգսյան
Ռուս-վրացական հարաբերություններն այցագրային և հաղորդակցության ոլորտներում - մաս 2 (էջ 23-30)

7- Աշխարհաքաղաքական

Լիանա Պետրոսյան
Իրանա-իսրայելական հակամարտությունն ու Ադրբեջանի դիրքորոշումը (էջ 31-33)

Նարե Գևորգյան
Իրան-Իսրայել առճակատումը և տարածաշրջանային նոր մարտահրավերները (էջ 34-35)

8- Գաղափարական

Կարէն Խանլարեան
Գարեգին Խաժակը՝ Կարլ Մարքսի ռասիստական հայացքների քննադատ (էջ 36-43)

9- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Խօսքէն անդին (էջ 44)

Որ ճանապարհն է ընտրելու մեծամասնությունը

Այսն թվականի հուլիսի 28-ին Թուրքիայի նախագահ Էրդողանը հրապարակայնորեն հայտարարեց. «Ինչպես մենք մտանք Ղարաբաղ ու Լիբիա, նույն կերպ կարող ենք մտնել Իսրայել: Չկա պատճառ, թե ինչու մենք չպետք է դա անենք»: Ադրբեջանի պաշտոնական ներկայացուցիչներն անհամաձայնությամբ և անթաքույց դժգոհությամբ հակադարձեցին «ավագ եղբոր» այս հայտարարությանը: Արդյո՞ք սա առիթ չէր, որ Հայաստանի իշխանությունը ևս որոշ գնահատականներ ներկայացներ միջազգային ահաբեկչական կոալիցիայի ցեղասպանական ոճրագործության այս ինքնաբացահայտման վերաբերյալ: Իհարկե համապատասխան առիթն ընձեռվել էր, բայց այն օգտագործելու համար Հայաստանի իշխանությունը պետք է լիներ գոնե Ադրբեջանի իշխանության չափ քաղաքականապես որձ, և ինքնուրույն: Մյուս կողմից, ծանոթ գործելակերպ է, երբ Հայաստանի իշխանությունն իրեն խուլի տեղ է դնում, երբ անհրաժեշտ է հակադարձել, երբ ոտնձգություններ են թույլ տրվում իր ներկայացրած պետության և ժողովրդի դեմ: Իրականում նման հայտարարությունները, ադրբեջանցիներից ոչ պակաս, անհարմար վիճակում են դնում Հայաստանի իշխանությանը՝ «խաղաղասիրական, եղբայրական» մտայնությունների և մոլորությունների համար: Հիշենք, որ 2020 թվականի պատերազմից հետո Հայաստանի իշխանությունը ծպտուն չհանեց Թուրքիայի վճռորոշ դերակատարության մասին, թեև տիրապետում էր բազմաթիվ ակնհայտ փաստերի: Ընդհակառակը, երկու շաբաթ չանցած ՔՊ-ականները խանդավառված հայտարարում էին, թե այլևս ոչինչ չի խանգարում Թուրքիայի հետ տնտեսական և քաղաքական ակտիվ գործակցության համար: Ակնհայտորեն այդ քաղաքականության նախագիծը հաստատված էր վաղուց, և թերևս միայն Արցախի անկախ գոյության փաստն էր խանգարում հայության թիկունքում կայացված այդ դավադիր գործարքի իրագործմանը: Հարաբերությունների գործնականացման երկրորդ օրինակը վերաբերում է հենց Ադրբեջանին: Համաձայն իր խոստովանության, դեռևս 2018 թվականին Փաշինյանը «իմացել էր», որ Արցախը լինելու է Ադրբեջանի կազմում: Մենք տեսնում ենք ներդաշնակված գործողություններով այս ծրագրի գործարկումը նշյալ շրջանից մինչև 2020 թվականի պատերազմ և դրանից հետո: Փաշինյանը, օրինակ, մինչև պատերազմը հասարակության «ականջում եփում էր» այն միտքը, թե գլխավորը Արցախի ժողովրդի անվտանգությունն ու մարդկային իրավունքներն են, հայտարարում էր, որ պատերազմում պարտությունը դեռևս պարտություն չի նշանակում, այնուհետև մերժեց կեսից պատերազմը դադարեցնելու և ազատագրված տարածքների հանձնման դիմաց Արցախը պահպանելու Ռուսաստանի նախագահի առաջարկը: Նա ավելի շատ տարածքներ հանձնեց ոչ

թե պատերազմի ստեղծած ռեալ իրողությունների, այլ բանավոր պայմանավորվածությունների հիման վրա, ստորագրեց փաստաթուղթ, որով ճանաչեց Արցախը Ադրբեջանի մաս, մատը մատին չխփեց սեփական իշխանությամբ կամ միջազգային հարթակներում պաշտպանելու համար ամիսներ շարունակ շրջափակման մեջ գտնվող արցախցիներին, 2023 թվականի սեպտեմբերի 19-ին անմիջապես հայտարարեց, թե Հայաստանը ոչ մի միջամտություն չի ունենա Արցախի նկատմամբ սկսված ագրեսիային, իսկ այնուհետև արյունալի ագրեսիայի մեջ ներքաշված արցախահայության վերաբերյալ հայտարարեց, թե վերջինիս ֆիզիկական վտանգ չի սպառնում: Այնուհետև, զուգահեռաբար, Ալիևը՝ Ադրբեջանում, իսկ Փաշինյանը Հայաստանում ձեռնարկեցին Արցախի տարբեր մակարդակի քաղաքական-վարչական ղեկավարների, բարձրաստիճան զինվորականների հալածանքն ու ձերբակալությունները: Ալիևը՝ Բաքվից, իսկ Փաշինյանը Երևանից ամեն փորձ գործադրում են փաստելու համար, թե Արցախի հարց այլևս գոյություն չունի, Փաշինյանը շատ վաղուց մոռացել է Արցախ բառը և փոխարինել այն Ադրբեջանի համար ընդունելի Լեռնային Ղարաբաղ եզրով, ցայսօր նա որևէ հանդիպում չի ունեցել Հայաստանում գտնվող Արցախի որևէ ղեկավարի հետ՝ վախենալով, թե Ադրբեջանին դուր չի գա: Նա ձախողում է Արցախի հարցի հետապնդմանն ուղղված ցանկացած միջոցառում Հայաստանում, և դրա վերջին փաստը համապատասխան հրահանգով պետական և այլ կազմակերպությունների մերժումն էր դահլիճ տրամադրել ազգային ուժերին՝ Արցախի անկախության օրը նշելու համար: Ադրբեջանի ղեկավարությունը հայտարարում է, թե Հայաստանի հետ խաղաղության հասնելու համար պետք է տեղի ունենա սահմանազատում և սահմանագծում կոչված հայկական տարածքների միակողմանի զիջումների գործընթացը, և Փաշինյանն իրականացնում է

դա, Ադրբեջանը հայտարարում է, թե խաղաղության պայմանագիր ստորագրելու համար պետք լուծարվի ԵԱՀԿ Մինսկի խումբ, փոխվեն Հայաստանի Հռչակագիրն ու Սահմանադրությունը, և նույնը կրկնում է Հայաստանի իշխանությունը: Հայաստանի իշխանությունը ոչ միայն լռում է, երբ Ադրբեջանը Հայաստանի տարածքը ներկայացնում է որպես Արևմտյան Ադրբեջան, այլև շտապում է ժխտել հայց ցեղասպանությունը, խեղաթյուրել հայոց պատմության դասագրքերը՝ ի օգուտ Թուրքիայի և Ադրբեջանի: Հայաստանի իշխանությունը պապանձված է, երբ Ադրբեջանն օրը ցերեկով Արցախում իրականացնում է մշակութային ցեղասպանություն... Թերևս հաստատելու համար իրենց խառնախմբից մեկի խոսքը, թե ավելի լավ է լինել թուրքի շուն:

Ըստ aravot.am կայքէջի նույն օրվա հրապարակման՝ 2024 թվականի հուլիսի 30-ին, Թեհրանում ՀՀ վարչապետի հետ հանդիպման ժամանակ Իրանի հոգևոր առաջնորդ Ալի Խամենեին. «վերահաստատել է ՀՀ տարածքային ամբողջականության պահպանման անհրաժեշտությունը և հայտարարել. «ԻԻՀ-ն Զանգեզուրի ճանապարհը համարում է ի վնաս Հայաստանի և հաստատակամ է իր այս դիրքորոշման մեջ»: Խամենեին շեշտել է, որ օտարները չպետք է սահմանափակումներ ստեղծեն հարևանների հետ հարաբերությունների համար և հավելել, որ երկրների անվտանգությունն ու խաղաղությունն ապահովվում է սեփական ուժերին և մերձավորներին ապավինելով: Նա ընդգծել է, որ «երկու երկրների միջև համագործակցությունը հաստատակամորեն կշարունակվի՝ հիմնված սահմանված շահերի վրա և այլոց քաղաքականությունից անկախ»: Ինչ է պատասխանել սրան Հայաստանի ղեկավարը, հայտնի չէ, իսկ հայտնի չէ, որովհետև նա ընդունակ չէր Հայաստանի ինքնիշխանության և շահերի վերաբերյալ նույն ոգով արձագանքել դիմացինին: Ըստ էության, սա ոչ թե երկխոսություն է, այլ Իրանի Իսլամական Հանրապետության փաստական առաջնորդի զգուշացումը Հայաստանի ղեկավարին՝ հատկապես շեշտելով, որ Հայաստանի իշխանությունը պարտավոր է պաշտպանել իր Երկրի տարածքային ամբողջականությունը, որ իրենք տեղյակ են այսպես կոչված, Զանգեզուրի միջանցքի վերաբերյալ Հայաստանի իշխանությունների գաղտնի պայմանավորվածությունների մասին և դեմ են լինելու դրա իրագործմանը, որ օտար տերությունները չպետք է թելադրեն և սահմանափակեն Հայաստանի իշխանություններին՝ վարելու անկախ, ինքնուրույն քաղաքականություն հարևանների հետ: Սրան էլ Իրանի առաջնորդը հավելել է այն դասը, որից, դժբախտաբար, հեռու է Հայաստանի խամաճիկ ղեկավարը. «Երկրների անվտանգությունն ու խաղաղությունն ապահովվում է սեփական ուժերին և մերձավորներին ապավինելով»:

Շատ հայտարարություններ, տեսակետներ, որոնք հնչում են Ռուսաստանից, նույնպես պետք է ընկալել որպես հիշեցումներ և զգուշացումներ Հայաստանի իշխանությանը: Օրինակ, այն մասին, որ Ռուսաստանը չի պատրաստվում լքել Անդրկովկասը, և Հայաստանի իշխանությունը թող չփորձի իրենց փոխարեն այստեղ տեղավորել ՆԱՏՕ-ական ուժերի: Օրինակ, այն մասին, որ ինչպես եռակողմ, այնպես էլ երկկողմ մակարդակով եղել են մի շարք գրավոր և բանավոր հայտարարություններ ու պայմանավորվածություններ, որ Զանգեզուրով պետք է անցնեն ճանապարհներ և ոչ միջանցքներ, և դրանք պետք է գտնվեն Հայաստանի գերիշխանության ներքո, որոնց վրա գտնվող մաքսակետերն էլ կվերահսկվեն Հայաստանի և ապա Ռուսաստանի մաքսատների կողմից: Այս

մասին մեկ-երկու տարի առաջ խոսում էր նաև Նիկոլ Փաշինյանը, սակայն Արևմտյան «հովանավորների» թելադրանքով այս ծրագիրը մերժվում է, և դրա փոխարեն, ժողովրդից գաղտնի, Հայաստանի իշխանությունը համաձայնվել է միջանցքի գաղափարի հետ, որը կվերահսկեն ադրբեջանցիները և գուցե թուրքերը: Այս մասին հնչել են վերջինների ներկայացուցիչների հայտարարությունները, և այս դեպքում էլ Հայաստանի իշխանությունը որդեգրել է խուլ ձևանալու քաղաքականությունը: Ակնհայտ է, որ Հայաստանի այս իշխանությունը հաստատվել է երկրում որպես Արևմտյան նախագիծ, շարունակում է ծառայել Հայաստանը Ադրբեջանա-թուրքական և Արևմտյան շահերի ֆորպոստի վերածելու քաղաքականությանը: Այդ քաղաքականությունը ներկայումս դարձել է ավելի ագրեսիվ և դինամիկ, կապված Ուկրաինական ճակատում Ռուսական ուժին հակակշռելու նպատակի հետ: Իրականում այդ նախագիծը ծառայում է շատ ավելի գլոբալ ծրագրի՝ Միջին միջանցք անվանված հաղորդակցական եղած և նոր ուղիների տնօրինմանը, որոնց կայացմամբ մի կողմից պետք է չեզոքացվի Ռուսաստանի ու Չինաստանի տնտեսական և քաղաքական ազդեցությունը, մյուս կողմից Միջին միջանցքով Արևմուտքը իրար կշաղկապի Եվրոպան և Ասիան, կտնօրինի այս տարածաշրջանը քաղաքականապես, ինչպես նաև այստեղ գտնվող բնական հարուստ և հազվագյուտ պաշարները: Սա, իհարկե, նոր ծրագիր չէ, այլ նախագծվել է դեռևս խորհրդային տարիներին, սակայն այժմ գործնականացման փուլ է մտել, հատկապես վերջին տասնամյակների ու տարիների աշխարհաքաղաքական փոփոխություններից հետո: Ինչ վերաբերում է կոնկրետ Հայաստանին վերաբերող հատվածին, ապա մեջբերենք մի միտք Եգոր Լիսովենկոյի հոդվածից, որը հրապարակվել է «Ритм Евразии» կայքէջում, սույն թվականի օգոստոսի 7-ին. «Վաշինգտոնը ակտիվորեն ձգտում է իր վերահսկողության տակ վերցնել Հայաստանի եւ Ադրբեջանի տարածքով, այդ թվում, այսպես կոչված, Զանգեզուրի միջանցքով բեռների տարանցման հարցի լուծումը: Դ. Օ՝ Բրայենը (ԱՄՆ պետքարտուղարի՝ Եվրոպայի և Եվրասիայի հարցերով օգնական - Դրօշակ) նշել է՝ Բաքվի և Երևանի միջև խաղաղության հասնելը և տրանսպորտային նոր հաղորդակցությունների բացումը, որոնք թույլ կտային ստեղծել առևտրային երթուղի՝ շրջանցելով Ռուսաստանը, կարևոր նշանակություն ունեն ոչ միայն Հարավային Կովկասի երկրների, այլև տարածաշրջանի այլ պետությունների համար: Ակնհայտ դարձավ՝ Վաշինգտոնն ամեն ինչ անելու է, որպեսզի այս երթուղին, որը պետք է Ադրբեջանը միացնի Նախիջևանին Հայաստանի հարավով, այնուհետև Թուրքիայի հետ, չհայտնվի ՌԴ ազդեցության տակ»:

Գերուժերի մրցակցության այս դաշտում օգտագործվող գործիքի դեր է հատկացվել Հայաստանին, նրա իշխանությունների քաղաքական կախումների և քաղաքական նույնչափ տգիտության պատճառով: Նախորդող իշխանություններին գրեթե 30 տարի հաջողվեց Հայաստանը զերծ պահել մեծ քաղաքականության մեջ ոտատակ ընկնելուց և գործակցել բոլոր գործընկերների հետ, խուսափելով որևէ մեկի կողմից ընդդեմ մեկ ուրիշի գործելուց: Երիտասարդ դուրսպրծուկներն անհայրենիք, ու ընչաքաղց առաջնորդի հետ փորձեցին մտնել հակառակ խաղի մեջ և իրենց թանկ ծախել: Փոխարենը նրանք կործանեցին Արցախն ու սպառնալիքների հողմապտույտի մեջ նետեցին Հայաստանը, իսկ իրենք հայտնվել են մի իրավիճակում, երբ խաղի դաշտը գնալով նեղանում է, մրցակից բևեռներից յուրաքանչյուրը պահանջում է կոնկրետ կողմնորոշում դա փաստող իրական քայլերով: Միաժամանակ կողմերից յուրաքանչյուրը նրանց պես էժան ապրանքի դիմաց չի ցանկանում վտանգել իր շահերը և զսպել Հայաստանի կոկորդից բռնած թուրքադրբեջանական տանդեմին:

Ինչ է անում այս դառը ճաշը եփած Հայաստանի ղեկավարը՝ հեծանիվ է քշում և զվարճանում է: Սրանով նա ի՞նչ է ցանկանում ասել, որ ինքը անհոգ է հատկապես իր իշխանությանը սպառնացող մարտահրավերների դիմաց: Իրականում նա փաստում է, որ անելիք չունի տարածաշրջանային և աշխարհաքաղաքական գործընթացների մեջ, որոնցում Հայաստանը վերածվել է առևտրի էժան առարկայի, իսկ Հայաստանը ներկայացնողը՝ անարժեք խամաճիկի, որին պարզապես տեղյակ են պահում իր իշխանությանը պատկանող երկրի շուրջ տեղի ունեցող գործընթացների մասին: Հեծանիվ քշելը, թերևս, իրեն գժի տեղ դնելու երկրի ղեկավարի հարազատ հնարքի մի դրսևորումն է, երբ չի իմանում, թե ինչ անել: Նա, իհարկե, փորձում է իրեն կարևորել տպավորություն ստեղծելով, թե Հայաստանի խաղաղությունը կերտելով է զբաղված կամ թե երկիրը տանում է դեպի Եվրամիություն: Նա փորձելու է տպավորություն ստեղծել, թե ինքը մեծ քաղաքականության մեջ դերակատար է, եթե հաջողվի Հայաստան բերել Ֆրանսիայի նախագահին կամ, հյուր գնալ, օրինակ, Կանադայի վարչապետին և հույս ունի, թե իր փչած փուչիկներով դեռ հիացողներ կլինեն Հայաստանի սուտ ինտելիգենտների և ազգային արժանապատվությունը կորցրած ամբոխի շարքերում: Հայաստանի իշխանությունը առևտրի է հանել երկիրը դիմացը մուրալով քաղաքական հովանավորություն և իշխանությունը պահպանելու երաշխիք: Երկրի համար ճակատագրական մարտահրավերների հանդիման այս իշխանությունը իրեն հակառակորդ է տեսնում սեփական ժողովրդին, քանի որ իր իշխանության նկատմամբ եղած հիմնական խնդիրը հենց նա է: Մեր ապրած պատմական ժամանակը հնարավորությունների և կորուստների ժամանակահատված է: Այնուամենայնիվ, որևէ անհատ կամ ուժ չի կարող որոշել մի երկրի ճակատագիր, եթե իր աթոռը հենված չէ որոշակի զանգվածի ուսերի վրա: Հայ ժողովրդի այսօրվա պայքարը գլխավորաբար ինքն իր հետ է՝ ինքնակործանո՞ւմ, թե՞ ինքնափրկություն, որ ճանապարհն է ընտրելու մեծամասնությունը: ■

Հասնել իշխանափոխության՝ երկիրը փրկելու համար

Հարցազրույց «Սրբազան շարժման» ղեկավարության ներկայացուցիչ Գառնիկ Դանիելյանի հետ

Դրոշակ – Հարգելի՛ Գառնիկ, «Սրբազան պայքարի» շարժումը ամռան ամիսներին դադարեցրեց զանգվածային միջոցառումները, սակայն այլ ձևաչափերով շարունակեց գործունեությունը: Որպես շարժման առաջնորդներից մեկը, այս ընթացքում դուք գտնվել եք այդ գործունեության առանցքում: Գրեթե ամեն օր լրատվամիջոցները ներկայացրել են Բագրատ սրբազանի գլխավորությամբ շարժման ներկայացուցիչների հանդիպումները հանրապետության բնակավայրերում: Յուրաքանչյուր շաբաթվա ընթացքում նաև կազմակերպվում էին հավաքներ Երևանի Սուրբ Աննա եկեղեցու բակում: Երբ շարժման այս փուլը ևս մոտենում է իր լրումին, խնդրում եմ ներկայացրեք Ձեր տպավորությունը՝ ի՞նչ տեսաք, ի՞նչ եզրակացություններ կատարեցիք:

Գառնիկ Դ. – Սկսենք նրանից, որ հունիսի 12-ին տեղի ունեցած ոստիկանական վայրագություններից հետո ակնհայտ դարձավ, որ նոր իրականության առջև ենք կանգնած, և Բագրատ սրբազանն անհրաժեշտ համարեց շարժմանը հաղորդել ինստիտուցիոնալ բնույթ: Որոշվեց շարժման կորիզներ ձևավորել քաղաքներում ու գյուղերում, սկիզբ առան քննարկումները ոլորտային խմբերի հետ՝ տնտեսագետներ, բժիշկներ, իրավաբաններ, դասախոսներ և այլն: Ամառվա ընթացքում թվարկված և այլ խմբերի հետ ակտիվ աշխատել ենք, ինչպես նշեցի, ունեցել ենք հանդիպումներ մարզերում, քաղաքներում, գյուղերում, Երևանի բակերում: Ամառային ճամբարներում հանդիպել ենք ավելի քան 3.000 երիտասարդների հետ: Ճամբարների մի մասը կազմակերպվել է շարժման կողմից, մի մասը եղել են Հայ Յեղափոխական Դաշնակցության ճամբարները, իսկ մյուս մասն էլ այլ ճամբարներ են եղել, որոնցից հանդիպման հրավերներ էինք ստացել: Ուսանողներին և առհասարակ երիտասարդներին ներկայացրել ենք շարժման խնդիրներն ու նպատակները, բացատրել վերջինիս կարևորությունը, դրանում երիտասարդության առանցքային դերը, լսել ենք երիտասարդներին, հարցեր ենք քննարկել նրանց հետ: Դեռ շարժման Երևան հասնելու օրերից զգացել էինք, որ վերջինիս նկատմամբ երիտասարդությունը մեծ հետաքրքրություն է դրսևորում: Ճիշտ է, իշխանությունները փորձեցին ճնշում գործադրել, բիրտ ուժ կիրառեցին, սպառնացին հեռացնել համալսարաններից և այլն, բայց մեծ թվով երիտասարդներ դարձան շարժման ակտիվ մասնակիցը, և մենք տեսնում ենք, որ այս բանակն ավելի է մեծանում: Շատ կարևոր են Սուրբ Աննա եկեղեցու բակում կազմակերպվող պարբերական հանդիպումները, որոնք տեղեկատվության փոխանակման, կատարված գործերի վերաբերյալ յուրատեսակ հաշվետվության հնարավորություն են, ինչպես և անհատ քաղաքացիների հետ անմիջականորեն շփվելու առիթ: Շատերը անդամագրվել են շարժմանը, ներգրավվել են տարբեր ոլորտային խմբերում, շատերն առաջարկել են իրենց մասնագիտական աջակցությունը: Մյուս կողմից, այս ձևաչափը հնարավորություն է ընձեռում, որպեսզի մարդիկ իրենց կարծիքը փոխանցեն, առաջարկներ ներկայացնեն շարժման առաջիկա անելիքների վերաբերյալ:

Ի դեպ, ավելացնեմ, որ մենք դիմել էինք Մարզահամերգային համալիրի ղեկավարությանը՝ ցանկանալով դահլիճ վարձակալել, որպեսզի սեպտեմբերյան իրադարձություններից առաջ շարժման ակտիվի բազմահազարանոց հավաք տեղի ունենար, սակայն Համալիրի ղեկավարությունը դահլիճ չտրամադրեց: Սա էլ ասում եմ փաստելու համար, որ իշխանությունները լրջորեն վախեցած են շարժումից և փորձում են ամեն տեսակի խոչընդոտներ հարուցել նրա առջև:

Դրոշակ – Մեր կարծիքով թեև Սրբազան շարժումը դնում է իշխանափոխության պահանջ, սակայն նրա նպատակը ոչ թե իշխանափոխությունն է, այլ այն աղետի կասեցումը, որը երկիրը գլորում է դեպի անդունդ: Լինելով սահմանային գոտու բնակիչ, ինչպես նաև այս ընթացքում մշտապես լինելով վտանգված գոտիներում, ունենալով տվյալ տարածքների հետ ամենօրյա կապ, ի՞նչ է ձեր պատկերացումը, ազգային շարժման շարունակումը որքանո՞վ է արդարացված և պահանջված:

Գառնիկ Դ. – Գաղտնիք չէ, որ այս շարժումը սկսվել է ապօրինի սահմանազատման-սահմանագծման դեմ: Իշխանությունները հերթական անգամ խաբեցին ժողովրդին ասելով, թե սահմանագծման գործընթաց է, և հենց որ սահման ունենանք Ադրբեջանի հետ, բոլոր խնդիրները վերանալու են, և ապրելու ենք խաղաղ ու հանգիստ: Իրականում սա միակողմանի զիջում է՝ Ադրբեջանի պահանջների ամբողջական կատարման պայմանով: Հայաստանն

այս գործընթացի հետևանքով չստացավ ոչինչ, իսկ Ադրբեջանն ամբողջությամբ լուծեց այն խնդիրները, որոնք այդ ժամանակահատվածում դրել էր իր առջև: Իրականում տեղի ունեցածը սահմանագծում-սահմանազատում չէր: Հայաստանի ներկայացրած պահանջը, որպեսզի չորս գյուղերի հանձնման դիմաց մեր 31 բնակավայրերը անցնեին Հայաստանի իշխանությունների վերահսկողության տակ, մերժվեց: Ջեյհուն Բայրամովի գրասենյակը հայկական կողմի նամակին պատասխանեց, թե ոչ մի պահանջ չի կարող լինել, այնպես որ մոռացեք այդ գյուղերի մասին: Ասվածի ապացույցներից մեկն էլ այն է, որ Կիրանցը հանձնելուց հետո ջրամբարի մյուս կողմում գտնվող Բերքաբեր գյուղի 900 հեկտար հայկական հողից Հայաստանը ոչ մի միլիմետր ետ չստացավ: Ավելացնեմ, որ սահմանազատման ողջ գործընթացն ապօրինի է, որովհետև ցայսօր այդ գործընթացի իրականացման կարգը Ազգային ժողովը չի հաստատել: Ասում էին, թե հունիսի 1-ին այդ կարգը պետք է հաստատվի, բայց ոչ կարգն է հաստատվել, ոչ սահմանազատում ու սահմանագծում է իրականացվել: Այնպես որ, տեղի ունեցած ողջ գործընթացն ապօրինի է: Կրկնում եմ, տեղի է ունենում միակողմանի զիջում, որի հետևանքով Ադրբեջանը ստանում է ռազմավարական նշանակության դիրքեր, ստանում ջրային ակունքների նկատմամբ վերահսկողություն, Տավուշի պաշտպանված առաջնագիծը հանձնվել է Ադրբեջանին, և թշնամին հայտնվել է Հայաստան-Վրաստան միջպետական ճանապարհի եզրին՝ դրանից բխող բոլոր աղետալի հետևանքներով հանդերձ:

Դրօշակ – Այսինքն՝ ոչ մի նշան չկա, թե թշնամին պատրաստ է հրաժարվելու բուն Հայաստանից գրաված տարածքից:

Գառնիկ Դ. – Այս ամենը զուգորդվում է նրա հետ, որ Հայաստանից 300 քառակուսի կիլոմետր օկուպացված է թշնամու կողմից, և ոչ մի խոսք չկա այդ օկուպացիայի մասին: Ես հարց եմ տվել Արարատ Միրզոյանին՝ ո՞ր քարտեզներով են առաջնորդվում, և պատասխան եմ ստացել, թե այն քարտեզներով, որոնց հետ Ադրբեջանը կհամաձայնվի: Այսինքն՝ մենք ընդամենը Ադրբեջանի կամքը կատարողներն ենք, և այս ամենի կուլմինացիան եղավ այն, որ Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյաներն արդեն բացահայտորեն ասում են, թե ոնց որ գնացիք ձեր ժողովրդին համոզեցիք, որ, եթե այդ տարածքները չտաք, պատերազմ է լինելու, գնացեք նույն կերպ համոզեք, որ եթե Սահմանադրության ու Հռչակագրի հետ կապված պահանջները չբավարարեք, դարձյալ պատերազմ է լինելու: Այսինքն՝ իրենք գտել են ձևը, ինչպես պետք է հայկական կողմին թելադրեն իրենց պահանջները: Հայկական կողմն էլ, ի դեմս վարչապետի և արտգործնախարարի, հայտարարում են, որ, եթե չզիջենք, պատերազմ է լինելու: Ադրբեջանը ոգևորվում է դրանից և ամեն անգամ առաջ է քաշում նոր պահանջներ՝ ադրբեջանցիների վերադարձի հարց, Արցախը Ադրբեջանի կազմում ճանաչելուց հետո փոխհատուցման հարց, քանի որ այս դեպքում Հայաստանը դառնում է ագրեսոր: Եվ էլի

նմանատիպ հարցեր, որոնք կհանգեցնեն Հայաստանի չգոյությանը: Սրանով ուզում եմ ասել, որ այս խնդիրը մեզ համար գոյաբանական նշանակություն ունի, այդ պատճառով էլ «Սրբազան պայքարի» վերափոխված «Տավուշը հանուն հայրենիքի» շարժումը և նրա առաջ քաշած պահանջներն ինքնանպատակ չեն, այս երկիրը կանգնած է մեծ աղետի եզրին, և այս ընթացքը իշխանությունները ի վիճակի չեն կասեցնել: Պատահական չէ, որ ադրբեջանական և թուրքական կողմերն իշխանություններին աջակցող հայտարարություններ են հնչեցնում՝ ամեն անգամ երբ Հայաստանում ազգային շարժում է սկսվում: Սա այս իշխանություններին աջակցելու ադրբեջանաթուրքական իշխանությունների հստակ որոշման հետևանք է: Ուրեմն և շատ կարևոր է, հայ ժողովուրդը հասկանա, որ գործ ունի կոլաբորացիոնիստական իշխանության օկուպացիոն ռեժիմի հետ: Մի ռեժիմ, որն ամեն ինչ անում է, որպեսզի Հայաստանը կորցնի ինքնիշխանությունը, դառնա կառավարվող, օտարի առջև սպասարկող աշխատող ժողովրդով: Այդ նպատակով գրոհ է սկսվել բոլոր ուղղություններով՝ կրթություն, գիտություն, ազգային մշակույթ: Իրականացվում է տոտալ քարոզչություն ազգային գաղափարախոսության, ազգային ինքնության և արժեքների դեմ: Գիտենք՝ ինչ է ասվել Արարատ լեռան հետ կապված, արշավը եկեղեցու դեմ, Լեմկինի ինստիտուտը քննադատեց Հայաստանի իշխանության կողմից հայոց ցեղասպանությունը ժխտելու փաստը: Եթե լիներ այսպիսի մեկ դրվագ, կարող էինք մտածել, թե անփութության կամ տգիտության հետևանք է, սակայն այս ամենը վկայում է այն մասին, որ իրականացվում է հստակորեն ուղղորդված և ծրագրված քաղաքականություն: Ինչպես վերը հիշեցինք, հայության հարցերը ցանկանում են լուծել արմատապես՝ ներառելով Հռչակագրի ու Սահմանադրության փոփոխության նպատակը: Հետևաբար, շատ կարևոր է հայ ժողովրդի ողջ ներուժի համախմբումն այս իշխանությանը վռնդելու համար: Մեկ ուժը կամ մեկ անձն ի վիճակի չի այս մեծ խնդիրը լուծելու, և ուրեմն համախմբմանը, ուժերի մեկտեղմանը այլընտրանք չկա: Շարժումը Տավուշից սկսելով, մեր խնդիրն է եղել վերջինիս օրակարգը դարձնել համահայաստանյան և ապա՝ համահայկական:

Իշխանության նպատակն է անել ամեն ինչ աթոռները պահելու համար՝ այս պահին իրենք միայն այս խնդիրն են լուծում՝ գոհացնել աշխարհաքաղաքական բոլոր կենտրոններին, որոնք սպառնում են իրենց իշխանությանը և ամուր կառչած մնալ աթոռներին: Իրենք լավ հասկանում են, որ աթոռները կորցնելուց հետո կանգնելու են պատասխանատվության առջև՝ Արցախը հանձնելու, բազմաթիվ ապօրինություններ կատարելու համար: Այնպես որ, շատ կարևոր է այս շարժման շարունակումը, նրա սահմանների ընդլայնումը՝ ի հաշիվ ժողովրդի նորանոր զանգվածների: Համոզված եմ, որ առաջիկա ամիսներին մեր երկրում և նրա շուրջ շատ կարևոր իրադարձություններ են տեղի ունենալու, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է այդ ամենին պատրաստ լինել, որպեսզի կարողանանք մեր ծրագրերն ու նպատակներն իրականացնել:

Դրօշակ – Ցանկանում էինք հարցազրույցի վերջում անդրադառնալ սփյուռքի թեմային, սակայն ազգային համախմբման և միասնականության մասին խոսելիս դուք արդեն ակնարկեցիք այս մասին: Ո՞րն է Ձեր կարծիքը, Սփյուռքն ասելիք և անելիք ունի՞ հայրենիքում ծավալվող գործընթացների վերաբերյալ:

Գառնիկ Դ. – Շատ կարևոր է, որ արտերկրի մեր հայրենակիցները ոչ միայն ուշի-ուշով հետևեն հայրենիքում տեղի ունեցողին, այլև մասնակցեն դրան:

Ի դեպ, թուրքադրբեջանական տանդեմի ռազմավարության մեջ է մտնում Սփյուռքը Հայաստանից կտրելը: Այս թեմայով բազմաթիվ հայտարարություններ են եղել, սկսած ցեղասպանության ճանաչման հարցից: Այս հարցը նրանք փորձել են այնպես ներկայացնել, թե իբր ցեղասպանության խնդիրը Սփյուռքի մի փոքր հատվածի, այսպես ասած, քմահաճույքն է, և այս ձևով նույնպես փորձ է արվել սեպ խրել Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների մեջ: Այս իշխանության գործունեության խայտառակ երեսներից մեկն էլ այն է, որ Զարեհ Սինանյան թյուրիմացության միջոցով փորձ է արվում պառակտել Սփյուռքը: Սրան հակառակ, անհրաժեշտ է, որ Սփյուռքը և նրա կառույցները մասնակցեն Հայաստանում տեղի ունեցող գործընթացներին, աշխատանքներ իրականացնեն զուգահեռաբար, փոխանցեն մեզ իրենց պատկերացումներն ու տեսակետները: Մեր կապը պետք է ամուր լինի, Սփյուռքի ներուժը պետք է ծառայի հայրենիքի խնդիրների հաղթահարման, մեր պետականության հզորացման գործին: Ազգի և պետության շահերով առաջնորդվող ուժը չի կարող մեր կենսական հիմնահարցերի լուծման համար շահագրգռված չլինի ներգրավելու Սփյուռքի հզոր ներուժը: Ակնհայտ է, որ Հայաստանի իշխանությունը նպատակ ունի պառակտելու հայությանը և ոչ միայն նրա Հայրենիք-Սփյուռք հատվածներին: Այսօր նույնը նա անում է անգամ Հայաստանի ներսում: Ապիկար իշխանությունն այսօր ուղղորդված քարոզչություն է տանում արցախցի մեր քույր-եղբայրների դեմ՝ փորձելով թույլ չտալ արցախցիների ինտեգրումը: Հարուցվում են նրանց դեմ իրավական, սոցիալական դժվարություններ ու խոչընդոտներ: Բացահայտ ու բիրտ մեթոդներով փորձ է արվում կանխարգելել բռնագաղթեցված մեր հայրենակիցների պայքարը կորցրած բնօրրան վերադառնալու իրավունքի համար: Որպես պատգամավոր, շփվելով այլ երկրների դիվանագետների, միջազգային կառույցների նրկայացուցիչների հետ, ես լսում եմ նրանցից, թե այդ հարցերով, նախևառաջ, պետք է զբաղվեն Ձեր երկրի պաշտոնական ներկայացուցիչները: Որքան էլ որ արտառոց է, օտարները զբաղվում են մեր հիմնահարցերով, երբ հայրենի անկախ պետության ղեկավարներն ամեն ինչ անում են հրաժարվելու վիժեցնելու համար հանուն մեր իրավունքների իրականացվող օրինական պայքարը: Այս պայմաններում զարգանում է այն միտումը, որ արցախցի տասնյակ հազարավոր մեր հայրենակիցներ լքում են Հայաստանը՝ փորձելով բնակություն հաստատել օտար երկրներում: Սա մեզ համար աղետ է, մենք ամեն ինչ պետք է անենք արցախցիներին Հայաստանի Հանրապետությունում պահելու համար, զուգահեռաբար աշխատանքներ տանենք ապահովելու անվտանգության երաշխիքներով նրանց ետվերադարձի իրավունքը:

Դրօշակ - Աշնան շեմին ենք, ի՞նչ է սպասվում, Սրբազան շարժումը նախապես էլ հայտարարել է, որ պայքարը պետք է թևակոխի մի նոր փուլ:

Գառնիկ Դ. – Իհարկե այդ ուղղությամբ բավականին նախապատրաստական աշխատանք է կատարվել, կարող եմ նշել, որ քաղաքական ուժերի և կուսակցությունների միջև գոյացել է համագործակցության, համատեղ քննարկելու, որոշելու և գործելու հնարավորություն: Կան իրական նախադրյալներ այս աշնանը հաջողությունների հասնելու համար, այդ նախադրյալներից ձևավորվել են հենց կատարված աշխատանքի շնորհիվ: Ի՞նչ կլինի առաջիկայում, ցույց կտա ժամանակը, համենայնդեպս, մենք վճռական ենք տրամադրված: Օր առաջ այս իշխանություններին վռնդելը պետք է լինի մեր ամենօրյա հետևողական աշխատանքի նպատակը: Հենց այնպես սրանք չեն հեռանա, որովհետև մտածելու շատ բան ունեն: Միաժամանակ իշխանության մաս կազմող այն անձիք, ովքեր քրեորեն պատժելի արարքներ չեն կատարել, «Սրբազան պայքարի» հռչակած հաշտության նպա-

տակից կարող են օգտվել: Ի վերջո, նրանք պետք է հասկանան, որ մենք բոլորս մեկ նավի մեջ ենք, իսկ իշխանափոխությունը վաղ թե ուշ անխուսափելիորեն տեղի է ունենալու: Իհարկե, իշխանության մեջ կան նման սթափ մտածող, ինչու չէ, նաև հայրենիքի հեռանկարով մտահոգ մարդիկ: Այս մասին հասկանում է նաև իշխանական վերնախավը և սև ու սպիտակի, մենքի ու նրանքի բաժանարարներ գծելով փորձում է այլընտրանքներ չթողնել նման մարդկանց համար, կանգնեցնել նրանց Նիկոլի անդունդ տանող փակուղու առջև: Նիկոլ Փաշինյանը դրդում է այս մարդկանց կիսել իր հանցավոր գործունեության համար պատասխանատվությունը, փորձում է ներշնչել, թե իշխանափոխությունից հետո ինչ պատասխանատվություն կրելու է ինքը՝ նույնին արժանանալու են թիմակիցները: Այնուամենայնիվ, մենք պետք է նկատի ունենանք, որ մարդիկ տարբեր են, և սև ու սպիտակի բաժանարարներ գծելը խոհեմ չէ լուրջ մարտահրավերների առջև կանգնած մեզ նման փոքրաքանակ ժողովրդի համար:

Դրօշակ – Ձեր խոսքի մեջ նշեցիք, որ վաղ թե ուշ իշխանափոխությունը տեղի է ունենալու և սա քմահաճույք չէ, այլ բխում է երկիրը, հայ ժողովրդին, մեր պետականությունը փրկելու անհրաժեշտությունից: Գուցե վաղ է այս մասին խոսելը, մյուս կողմից, որպեսզի ժողովրդի մեծամասնությունը հավատա ու գործնականորեն միանա շարժմանը, նաև պետք է իմանա, թե ինչ է լինելու իշխանափոխությունից հետո:

Գառնիկ Դ. – Իհարկե, շատ կարևոր է այն, ինչ դուք ասում եք: Նախ ուզում եմ արձանագրել, որ այն, ինչ տեղի է ունենում, մենք բնութագրել ենք ազգային ազատագրական պայքար: Ազգային ուժերը պայքարի են դուրս եկել ապազգային ուժերի դեմ: Մենք ինչ ենք ասում. ասում ենք, որ երկիրը պետք է ղեկավարեն արհեստավարժ մարդիկ, որոնք ունեն համապատասխան փորձառություն ու հմտություն, մինչ այս իրականացրած գործունեությամբ չեն արատավորել իրենց անունը: Ես այս հարցազրույցի ընթացքում նշեցի, որ մենք ամեն ինչ պետք է անենք ազգային ներուժն առավելագույնս համախմբելու, ճգնաժամի հաղթահարման ու երկրի զարգացման գործին ծառայեցնելու համար: Մեր ուշադրության կենտրոնում պետք է լինեն Արցախն ու արցախցիները, ինչպես նաև արտաքին ոլորտը: Պետք է փաստել պարտվողական իշխանության այն թեզի սնանկությունը, թե մենք չունենք բարեկամներ և դաշնակիցներ: Այսօր էլ կան այն ուժերը, որոնք պատրաստ են մեզ հետ դրական երկխոսության: Բնականաբար, նրանք ելնում են առաջին հերթին իրենց շահերից, բայց նրանց հետ մեր շահերը համադրելով պետք է կարողանանք փոխշահավետ լուծումներ գտնել: Ոչ թե լինել աշխարհաքաղաքական կենտրոնների բախման թատերաբեմ, այլ դառնալ բազմավեկտոր խաչմերուկ, կանխատեսելի քաղաքականություն վարել, մեր շահի հնարավոր առավելագույնի հաշվարկմամբ համադրել մեր և այլ պետությունների և ուժերի շահերը: Այդ առումով այսօր կան բազմաթիվ հնարավորություններ, որոնցից խելամիտ օգտվելու դեպքում կկարողանանք հասնել մեր նպատակներին: Շատ կարևոր է նաև սոցիալական արդարության հարցը, երբ հասարակության կյանքում կգերիշխի արդարությունը, հնարավորությունների, պարտականությունների ու իրավունքների հավասարությունը և մարդկանց իրավունքների պաշտպանության սկզբունքը: Այս սկզբունքները, ի դեպ, կարևոր են հենց դաշնակցականներիս համար, որովհետև որպես սոցիալիստական կուսակցության անդամներ դրանք մեր գաղափարական հիմնասյուներն են: Այսօրվա կառավարողները եկան իշխանության՝ բոլոր հայերին կարգելով վարչապետ, սակայն կարճ ժամանակից բացարձակապես հրաժարվեցին հաշվի նստել ժողովրդի կարծիքի ու պահանջի հետ, զբաղվեցին թալանով ու կոռուպցիայով և ձախողվեցին բացարձակապես բոլոր ոլորտներում: Ձախողումներն այսօր հասել են կատաստրոֆիկ չափերի: Առանձին թեմա է տնտեսության վիճակն ընդհանրապես, կարելի է, սակայն, նշել, որ խայտառակ դրության մեջ է գյուղատնտեսությունը: Իշխանություններն առկա հիմնահարցերին լուծումներ չեն տվել, և ընդունակ էլ չեն տալու: Եղած տնտեսական փոքր աճն էլ պայմանավորված է ռուս-ուկրաինական պատերազմով, որից օգտվել է Հայաստանը և բավականին գումարներ է վաստակել: Հայաստանի իշխանությունը, սակայն, այս ընթացքում երկրի տնտեսական վիճակը կարգավորելու, զարգացման համար միջոցառումներ իրականացնելու ուղղությամբ քայլ չի արել: Ընդհակառակը, տնտեսությունը հետընթացի մեջ է: Տարբեր ոլորտներ, ինչպես օրինակ ձկնաբուծությունը կամ ավտոներկրողների գործը փակման եզրին են: Երբ անդրադառնում ենք անվտանգության և պաշտպանունակության հարցերին, անշուշտ, առաջնային նշանակություն ունի բանակի վերականգնման ու հզորացման հարցը: Մենք այն իրավիճակում ենք հայտնվել, երբ բազմաթիվ են խնդիրները՝ սկսած առաջնագծից մինչև որակյալ կադրերի պատրաստում: Շատ չեմ ցանկանում փակագծերը բացել, ասեմ պարզապես, որ թշնամու այս ագրեսիվ պահվածքին, պատերազմ սկսելու մշտական սպառնալիքներին հակադարձելու, դրանք կանխելու միակ ձևն այն է, որ նա հասկանա՝ Հայաստանի դեմ ոտնձգություններ թույլ տալու դեպքում իր համար հետևանքները շատ ծանր կլինեն: Թշնամին պետք է իմանա, որ իր առջև ոչ թե ծնկի եկած ու խաղաղություն մուրացող իշխանություն է, այլ այնպիսի ուժ, որը կարող է ապտակ հասցնել, որից ինքը երկար ժամանակ ուշքի չի գա: Տարիներ շարունակ Ադրբեջանը չի հարձակվել, որովհետև իմացել է, որ դա ծանր հետևանքներ կունենա իր համար:

Իհարկե, սրա հետ անմիջականորեն շաղկապվում է նաև արտաքին քաղաքականության ոլորտը: Այս իշխանությունն ասում է, թե մենք բարեկամներ չունենք, գնում է բանակցությունների և իրեն գժի տեղ է դնում, որովհետև ասելիք չունի, ուժ չկա թիկունքին, և իր հետ հաշվի չեն նստում:

Մենք բոլոր այս խնդիրների վերաբերյալ ունենք պատկերացումներ, ծրագրեր, տեսնում ենք դրանց լուծման ուղիները, և մնում է միայն հասնել իշխանափոխության այդ բոլորը քայլ-քայլ իրականացնելու համար: ■

Հայ զինվորականներին պատել է Ստոկհոլմյան համախտանիշը

Տիգրան Բաղրամյան
vpoanalytics.com Армянских военных накрыло стокгольмским синдромом
09.08.2024

Տեղական ԶԼՄ-ները հայտնում են, որ Հայաստանի և Մեծ Բրիտանիայի գլխավոր շտաբների ղեկավարները քննարկել են պաշտպանական համագործակցության ընդլայնման հարցը:

ՀՀ ԶՈՒ ԳՇ պետ ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, գեներալ-լեյտենանտ Էդվարդ Ասրյանի հանդիպումը բրիտանական բանակի գլխավոր շտաբի պետ, գեներալ Ռոլանդ Ուոքերի հետ տեղի է ունեցել Լոնդոնում: «Քննարկվել են պաշտպանության ոլորտում երկու պետությունների միջև առկա համագործակցության շրջանակներն ու դրա հետագա զարգացման ու ընդլայնման հնարավորությունները», – հայտնել են ՀՀ պաշտպանական գերատեսչության մամուլի ծառայությունից: Լոնդոնում Ասրյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է զինված ուժերի տեսակների Թագավորության միացյալ ինստիտուտի (RUSI) հովանու ներքո կազմակերպված ցամաքային պատերազմների վարման հարցերին նվիրված ամենամյա համաժողովին: Պաշտոնական վարկածի համաձայն՝ միջոցառումը նպատակ ունի ուսումնասիրել պատերազմի վարման ցամաքային հատվածում առկա սպառնալիքները, դրանց դեմ պայքարի հնարավոր ուղիները, ինչպես նաև ծանոթանալուն այդ ուղղությամբ գործընկերային լուծումներին և ռազմաքաղաքական ու արդյունաբերական վերջին իրադարձություններին: Ավելի վաղ՝ 2023-ի աշնանը, Լոնդոնում կայացած երկկողմ պաշտպանական ռազմավարական 6 խորհրդակցությունների արդյունքում Հայաստանն ու Մեծ Բրիտանիան ստորագրել էին ռազմական ոլորտում 2023-2024 թթ. համագործակցության ծրագիր: Այն ժամանակ հայ հյուրերին գլխավորում էր ՀՀ ՊՆ պաշտպանական քաղաքականության և միջազգային համագործակցության վարչության պետ Լևոն Այվազյանը: Խորհրդակցություններին մասնակցում էր նաև Մեծ Բրիտանիայում երկրի դեսպան Վարուժան Ներսեսյանը: Այդ հանդիպումների ընթացքում քննարկվել են տարածաշրջանային և միջազգային անվտանգության, ինչպես նաև պաշտպանության ոլորտում երկկողմ համագործակցության հարցեր:

Այվազյանը բրիտանացի գործընկերներին զեկուցել էր Հայաստանի շուրջ ստեղծված անվտանգության իրավիճակի, ինչպես և «տարածաշրջանային խաղաղությանն ու կայունությանն ուղղված հայկական կողմի քայլերի մասին»: ՀՀ պաշտպանության նախարարության կայքում հրապարակված հաղորդագրության մեջ ընդգծվել է՝ կողմերը հանգամանալից քննարկել են ռազմական երկկողմ համագործակցության ներկա ընթացքն ու զարգացման հեռանկարները, արձանագրել մի շարք նոր ոլորտներում համագործակցության էական ներուժն ու այն կյանքի կոչելու պատրաստակամությունը: Այսպիսով, բրիտանացիների հետ ռազմական համագործակցությունն աջակցություն է գտնում Հայաստանի ամենաբարձր մակարդակի ղեկավարության կողմից:

Մինչդեռ բրիտանական արտաքին հետախուզությունը և նրա ղեկավար Ռիչարդ Մուրը ծրագրեցին ղարաբաղյան երկրորդ պատերազմը, որի ընթացքում Հայաստանը ջախջախիչ պարտություն կրեց, ինչը կասկածի տակ դրեց ինքնիշխանությունը և նույնիսկ պետականության պահպանումը:

Ներկայիս իրականությունն այն է, որ Փաշինյանի կառավարությունը դարձել է անգլո-թուրքական դաշինքի վասալը, որը հայերին վտարել է Լեռնային Ղարաբաղից և հայկական տարածքի հաշվին ձգտում է տարածքային հետագա նվաճումների:

Ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ Մեծ Բրիտանիայի ողջ պատմության ընթացքում Միացյալ Թագավորության հետախուզական հանրույթը հակահայկական և թուրքամետ է տրամադրված: Այսպես, լավ հայտնի են բրիտանացի հանրահայտ հետախույզ Լոուրենս Արաբացու արտահայտությունները հայերի մասին: Ամերիկացի լրագրող Լինքոլն Ստեֆենսը բրիտանացի լրտես-հետախույզի հետ իր հարցազրույցը ներկայացնում է որպես ամե-

նապարտասովորն իր լրագրողական կյանքի ընթացքում: Նյութը պատրաստվել է 1919-ին Փարիզի Խաղաղության կոնֆերանսի ժամանակ, առաջին անգամ տպագրվել է «Outlook and Independent» ամսագրում 1931 թ. և մինչ օրս չի կորցրել իր արդիականությունը: Ահա մեջբերում այս հարցազրույցից՝ Ստեֆենսի շարադրմամբ.

«Հայերին նա համարում էր չափազանց գործնական: Մենք փոխլրացնում էինք միմյանց, այսպիսով դարման էինք մենք՝ նրանց, նրանք՝ մեզ համար. երկու անհույս դեպք, հատկապես հայերը: Ես նկատեցի որ նա անասելի կարեկցանք էր տածում, կամ, եթե կարելի է այդպես ասել, հայերի մասին որոշակի գիտելիքներ, որոնք թույլ էին տալիս նրան մարդկայնորեն հասկանալ թուրքերին կամ հայերի մյուս մերձավոր հարևաններին, ովքեր երբևէ փորձել են ոչնչացնել այդ որբ ցեղին: Թվում էր՝ հենց դա էր նա անհրաժեշտ համարում անել հայերի հետ: Նա հստակ չէր արտահայտվում: Նրա մեթոդն այն էր, որ ինքը հստակ չարտահայտվեր, այդպես ինձ ամեն ինչ գրելու այնպիսի ձևի մեջ, որ անհրաժեշտության դեպքում կարողանար հերքել ամեն ինչ: Այսպես, նա չասաց, թե հայերը պետք է ամբողջությամբ բնաջնջվեն: Նա միայն հասկացրեց, թե դա կլիներ հայկական խնդրի միակ լուծումը, և հենց դրանով էր բացատրվում նրա ցանկությունը, որ մենք՝ ամերիկացիներս, ստանձնենք այդ հոգը:Նա կարծում էր կամ ներշնչեց ինձ, որ թուրքերը չպետք է դա ձեռնարկեն. նրանք չափազանց պարզունակ են և քրիստոնյա չեն: Հույներն էլ դրանից չափից դուրս հաճույք են զգում և անարդյունավետ են. նրանք ոչինչ չեն հասցնում ավարտին, և երբ հայերին բնաջնջելու նրանց հակագեղագիտական հաճույքը բավարարվի, նրանք կանգ կառնեն: Եվ այսպես, բոլոր մյուս մրցակից ցեղերի դեպքում: Նրանք կանգ առան՝ չբնաջնջելով հայերին մինչև վերջինը: Նույնիսկ երբ նրանք գործի էին անցնում միասնաբար, անխուսափելիորեն այստեղ կամ այնտեղ զույգեր էին թողնում՝ Ադամի ու Եվայի, որոնք, հենց որսում էին պահը, բազմանում, բազմանում և բազմանում էին: Այնպես որ, հաջորդ անգամ Հայաստան այցելելիս այնտեղ կարելի էր գտնել միլիոնավոր ու միլիոնավոր հայերի, որոնք ցերեկը խոնարհ բիզնեսով էին զբաղված, իսկ գիշերները գաղտնի բազմանում էին՝ դանդաղ տարածվելով ու սփռվելով: Նա իմ առջև բացեց իր ողջ մալթուսական հուսահատությունն ու սարսափը հայերի առջև, այնպես որ ես քիչ էր մնում կուլ տայի ողջն ամբողջապես՝ հայերի նկատմամբ ամերիկյան մանդատի ամբողջ սխեման: Ինձ փրկեց ամերիկյան հումորս. «Բայց ինչո՞ւ բրիտանացիներն իրենք չեն կատարում այդ խնդիրը»,- հարցրի ես և, կանխավայելելով նրա հումորի զգացումը, ժպտացի: Ավա՜ղ ... Նա չորսաց ամերիկյան հումորը՝ կարծում եմ: Նա ասաց, մինչև դեմքիս քմծիծաղն անհետացավ և լուրջ պատասխանեց:

«Հայերի, բառացիորեն, կուտորածը,– առարկեց նա,- սկանդալ կառաջացնի, եթե բրիտանացիներն այն իրականացնեն»: Եվ նա ասաց՝ թեև կայսրությունը նման ցնցում ապրել է և դեռ պետք է վերապրի, չարժե առանց անհրաժեշտության այժմ ցնցել նրան: «Բրիտանական կայսրությունը համաշխարհային կառավարման նախատիպ է: Մեր բոլոր մեծ խնդիրները՝ պատերազմները, հեղափոխությունները, գործադուլները, աղետները և այլն, բոլորը հետևանք են այն բանի, որ մոլորակը չի կառավարվում որպես ամբողջություն...»:

Նա կանգ առավ՝ ակնկալելով, որ ես ինքս եզրակացություն կանեմ, բայց, քանի որ ես այդ խայծը կուլ չէի տվել, շարունակեց՝ ինձ տալով ևս մեկ հնարավորություն: «Հայերը,- ասաց նա,- չպետք է տիրեն Հայաստանին, բերրի հողերի: Նրանք չեն աշխատի դրա վրա, նույնիսկ իրենց համար: Նրանք ուզում են միայն տիրել հողին, որպես սեփականություն: Նրանք նույնիսկ չեն զբաղվի աշխատանքի կազմակերպմամբ և զարգացմամբ: Նրանք հողը շահագործման կդան



Ռիչարդ Մուր և Նիկոլ Փաշինյան

ուրիշներին: Նրանք ցանկանում են ապրել ափամերձերին, քաղաքներում, վարձավճարով, շահույթով, շահաբաժիններով և բաժնետոմսերից ստացված եկամտով, կապիտալով և աշխատանքով ստեղծված զրնգուն մետաղադրամով»:

Ինչպես մենք գրել էինք՝ 2022-ի դեկտեմբերի 12-ին ՀՀ Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը Լոնդոնում հանդիպել է Ռիչարդ Մուրին՝ Լոնդոնի Արքայազն Ալբերտի 85 հասցեում գտնվող իր գրասենյակում *(տե՛ս «Հայաստանի արտաքին հետախուզությունը՝ լոնդոնյան մառախուղների քողի ներքո՞» խորագրով հոդվածը – Գ. Մ)*: Հատկանշական է՝ այդ հանդիպումը տեղի է ունեցել Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքը փակելու հաջորդ օրը, ինչը 2023-ի սեպտեմբերին նախկին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքների նկատմամբ վերջնական վերահսկողություն հաստատելու ադրբեջանական բանակի գործողության նախերգանքն էր: Շուտով Հայաստանի խորհրդարանն ընդունեց հանրապետության արտաքին հետախուզական ծառայության ստեղծման մասին օրինագիծը: «Արտաքին հետախուզական գործունեության և արտաքին հետախուզության ծառայության մասին» օրենքին կողմ է քվեարկել 67 պատգամավոր, դրա ընդունմանը դեմ է արտահայտվել 37 պատգամավոր:

Այսպիսով, կարելի է պնդել, որ արտաքին հետախուզության ծառայության ստեղծման մասին որոշումը քննարկվել և համաձայնեցվել է Հայաստանի կառավարության կողմից բրիտանական հետախուզության ղեկավարության հետ, որը երկրորդ պլան է մղել ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Ամերիկայի իր գործընկերներին:

Ինչպես բազմիցս նշվել է՝ Ռիչարդ Մուրը «Մեծ թուրան» հայեցակարգի հեղինակն է և Էրդողանի անձնական խորհրդապահը: Երևան կատարած այցի ընթացքում նա երկարատև և գաղտնի առանձնազրույց է ունեցել Փաշինյանի հետ: Նույն օրը Բաքուն վերսկսել է ավելի վաղ դադարեցված գազամատակարարումը Լեռնային Ղարաբաղի այն ժամանակ դեռ «հայկական» հատվածին, ապա տեղեկություն տարածեց՝ թե շուտով կբացվի նաև Լաչինի միջանցքը: Այսպիսով բրիտանական հետախուզությունը Երևանին ցուցադրեց, որ երկրամասի հայ բնակչության ճակատագիրն իր ձեռքում է, և Հարավային Կովկասի փոքր հանրապետության ղեկավարությունը չարժե որ խախտի Լոնդոնում գրված խաղի կանոնները:

Ըստ առկա տվյալների՝ բրիտանական թագի համակիրները և նրա անմիջական գործակալները պարզապես հեղեղել են հանրապետության կառավարությունը և ամեն կերպ քծնում են ենիչերիներին, որոնց մարտական հզորությունը, կարծես, սարսափեցնում է հայկական VIP-ին:

Այսպես, 2023-ի փետրվարի 16-ին կառավարության նիստում Հայաստանի արտաքին գործերի նախարար, ենթադրաբար ՄԻ 6-ի գործակալ Արարատ Միրզոյանը պատմել է իր թուրք գործընկեր Չավուշօղլուի հետ բանակցությունների արդյունքների մասին: Հայկական դիվանագիտության ղեկավարը եղել է Անկարայում և ավերիչ երկրաշարժից տուժած Ադըյամանում: Որոշվել է վերականգնել Անիի կամուրջը սահմանամերձ Ախուրյան գետի վրա, երրորդ երկրների քաղաքացիների համար սահմանով անարգել երթևեկություն հաստատելու համար, ենթադրաբար մինչև զբոսաշրջային սեզոնի սկիզբը: Նկատենք՝ հենց այս հարցերը առանց որևէ հստակության վերջերս քննարկվել են հայ-թուրքական երկկողմ հարաբերությունների կարգավորման հարցերով հատուկ ներկայացուցիչ Սերդար Քըլըչի և Ռուբեն Ռուբինյանի միջև սահմանին տեղի ունեցած հանդիպման ժամանակ: Կհարցնեք՝ բայց ինչո՞ւ գործակալ «Օմեգան» (ենթադրաբար Միրզոյանի օպերատիվ կեղծանունը) այն ժամանակ գնաց Թուրքիա: Անմիջական շեֆերին զեկուցելու համար կատարված քայքայիչ աշխատանքի մասին - այստեղ, ինչպես ասում են, բախտագուշակների մոտ գնալ պետք չէ:

... Գիտե՞ք՝ ինչ է Ստոկհոլմյան համախտանիշը:

Չխորանալով ահաբեկչության պատմության ջունգլիներում՝ հակիրճ կասեմ. դա այն է, երբ զոհը սիրահարվում է իրեն տանջողին: Եվ ահա Հայաստանի առայժմ դեռ երրորդ հանրապետության տիրակալներին պղնձե կաթսայով ծածկեց հենց այդ չարագուշակ սինդրոմը: Չի կարելի ասել, որ նման բան երբեք չի եղել, և ահա նորից:

Թվում է, թե նրանք ակնկալում են, որ դա կօգնի իրենց գոյատևել:

Դե, բրիտանացիներն իրենց այդքան պետք եկած հայոց հայրենիքի դավաճաններին գուցեն ներում շնորհեն: Բայց ահա Հայաստանն ու նրա ժողովուրդն ակնհայտորեն չեն կարող հույս դնել դաժան բրիտանացիների ու նրանց ենթակա անբարյացակամ հարևանների ողորմածության վրա: ■

Թարգմանությունը՝ Գայանե Մանուկյանի

ՆԱՏՕ-ի Թուրանական միջանցքը և Ռուսաստանի արատավոր տրամաբանությունը

Դոկտոր Ահմադ Քազեմի
https://ahmadkazemi.com/view-of-the-day-hy

Իրանցի հայտնի քաղաքականագետ Ահմադ Քազեմիի հոդվածը հայացք է Իրանից, այսպես կոչված, Զանգեզուրի միջանցքի ուղղությամբ: Մյուս կողմից նույն հայացքը համակողմանիորեն գնահատում է միջանցքի և, առհասարակ, Անդրկովկասի աշխարհաքաղաքական կացության և զարգացումների նկատմամբ տարբեր շահագրգիռ ուժերի ու հատկապես Ռուսաստանի դիրքորոշումը: Առանց դիվանագիտական ենթատեքստերի, Ահմադ Քազեմին զարգացնում է նաև այն միտքը, որ Զանգեզուրով Թուրք-ադրբեջանական թուրանական, իսկ դրանից առավել անգլո-սաքսոնական ՆԱՏՕ-ական միջանցքի ձևավորման վտանգավոր ծրագրի դեմ ռուս-իրանական գործակցությունը տրամաբանական է, և անհրաժեշտ ոչ միայն այս երկու երկրների, այլև Հայաստանի ռազմավարական շահերի տեսանկյունից: Թեև իրանցի վերլուծաբանը ներկայանում է որպես մասնավոր անձ, վստահ ենք, որ հարևան և բարեկամ Իրանից նետված այս «հայացքին» ծանոթանալը արժանի է «Դրօշակի» ընթերցողի լուրջ ուշադրությանը:

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի Բաքու կատարած այցից հետո այդ երկրի ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը Ռուսաստանի «Առաջին ալիքին» տված հարցազրույցում, առանց միջանցք բառն օգտագործելու, ընդգծել է. «Մենք կողմ ենք Բաքվի և Երևանի միջև խաղաղության պայմանագրի շուտափույթ կնքմանը և հաղորդակցությունների ապաշրջափակմանը: Ցավոք սրտի, ինչ վերաբերում է Հայաստանի Սյունիքի մարզով հաղորդակցություններին, հենց Հայաստանի ղեկավարությունն է սաբոտաժ անում համաձայնագիրը, որի տակ առկա է վարչապետ Նիկոլ Փաշինյանի ստորագրությունը: Դժվար է հասկանալ, թե ինչն է նման դիրքորոշման պատճառը»:

Լավրովի այս հայտարարություններից հետո կեղծ Զանգեզուրի միջանցքի և Ռուսաստանի դիրքորոշումների մասին ենթադրությունների ու վերլուծությունների ալիք է բարձրացել, և այս առնչությամբ կարելի է ութ կետ նշել.

Առաջին. Լավրովն իր հայտարարություններում միտումնավոր ընդգծել է տարածաշրջանային հաղորդակցության գծերի վերաբացումը, այլ ոչ թե միջանցքը, որն ընդգծում են Բաքուն և Անկարան: Տարածաշրջանային հաղորդակցության գծերի վերաբացումը մի խնդիր է, որը և՛ Իրանը, և՛ Հայաստանը շեշտում են՝ ներկայացնելով Արաքսի միջանցքը և Խաղաղության խաչմերուկը, և նրանք գտնում են, որ այդ վերաբացումը պետք է կատարվի՝ հարգելով երկրների ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը՝ առանց միջազգային սահմանների փոփոխության: Այս տեսակետից Լավրովը գիտակցաբար խուսափել է իր հայտարարություններում միջանցք բառն օգտագործելուց, թեև ռուս պաշտոնյաները, այդ թվում՝ ՌԴ փոխվարչապետը և Ռուսաստանի, Հայաստանի ու Ադրբեջանի միջև եռակողմ բանակցությունների պատասխանատուն նախկինում ընդգծում էին, որ իրենք դեմ են ցանկացած տեսակի միջանցքին: Այդուհանդերձ, Ադրբեջանը, միջանցքի իրականացումից հուսահատված, ռազմական սպառնալիքներով, լոբբիներով ու ինտերնետային տրոլներով փորձում է Ռուսաստանի այս դիրքորոշումը ներկայացնել որպես կեղծ Զանգեզուրի միջանցքի հետ Մոսկվայի համաձայնություն և մեծացնել հոգեբանական ճնշումը Հայաստանի, ինչպես նաև Իրանի դեմ, որը գտնվում է իր 14-րդ կառավարության գործունեության մեկնարկի փուլում:

Երկրորդ, թեև Ադրբեջանի և Հայաստանի միջև հաղորդակցային գծերի վերաբացումը սովորական ձևով օգտակար է տարածաշրջանային համա-

գործակցության զարգացման և ինտեգրման համար, այդուհանդերձ, իրավական տեսանկյունից ռուսական կողմի հղումը 2020 թ. Համաձայնագրին հաղորդակցային գծերի վերաբացման համար լեգիտիմ չէ. քանի որ 2023 թվականի սեպտեմբերին Ադրբեջանի կողմից Ղարաբաղի վրա հարձակման, ինչպես նաև Ղարաբաղի հայերի էթնիկ զտման և վերոհիշյալ համաձայնագրում նշված Լաչինի միջանցքի ոչնչացման պատճառով, 2020 թ. Համաձայնագիրը գործնականում ուժը կորցրել է, բացի այդ, անցյալ ամիս Ադրբեջանը և Հայաստանը կարևոր քայլով պայմանավորվել են, որ տարածաշրջանային հաղորդակցության գծերի բացման հետ կապված կետը հանեն խաղաղության պայմանագրի նախագծից: Սա նշանակում է, որ Երևանն ու Բաքուն համաձայնագիրը համարում են ավարտված:

Երրորդ կետն այն է, որ Ռուսաստանը, որպես համաշխարհային տերություններից մեկը, դժվար թե տեղյակ չլինի Բրիտանիայի առանցքայնությամբ ՆԱՏՕ-ի ծրագրին՝ ստեղծելու, այսպես կոչված, թուրքական աշխարհ՝ անգլիական պանթուրանիզմի տեսքով, որպես Արևմուտքի նոր գործիք՝ տարածաշրջանային և գլոբալ նոր աշխարհակարգին անցնելու գործում, հատկապես որ ՆԱՏՕ-ի նկատի առած թուրանական աշխարհն արդեն ցույց է տվել իր գործառույթը տարածաշրջանային և գլոբալ վերջին զարգացումներում, այդ թվում՝ Պաղեստինում Սիոնիստական ռեժիմի հանցագործություններին աջակցությամբ կամ Ուկրաինայում Զելենսկու կառավարության ամրապնդմամբ՝ ուղարկելով վառելիք, մթերք, սարքավորումներ, զենք և վարձկան ուժեր: Զանգեզուրի կեղծ միջանցքը գլխավոր հիմնաքարն է անգլո-սաքսոնական կարգով, այսպես կոչված, թյուրքական և թուրանական աշխարհ ստեղծելու համար: Ուստի Ռուսաստանը, տեղյակ լինելով այս խնդրին, բայց սխալ, լավատեսական ու թերի գնահատումներով, 2020 թվականի պատերազմից հետո փորձեց իր վրա վերցնել կեղծ Զանգեզուրի միջանցքի վերահսկման և դիտարկման հարցը, որպեսզի այն օգտագործի որպես գործիք ՆԱՏՕ-ի, ինչպես նաև Բոսֆորի ծովի ու Դարդանելի ծովանեղուցների վրա նրա վերահսկողության դեմ: Սակայն դա նրան չհաջողվեց Մոսկվայի միակողմանի քաղաքականությունից Հայաստանի դժգոհության, Փաշինյանի արևմտամետ մոտեցման, Ռուսաստանին Կովկասից հեռացնելու հարցում Բաքվի ու Անկարայի համագործակցության պատճառով: Այնպես որ, Ադրբեջանի Հանրապետության և Նախիջևանի միջև կապի Կալինինգրադի մոդելի առաջարկմամբ Բաքուն գործնականում ցույց տվեց, որ միջանցք է ուզում առանց Ռուսաստանի: Այժմ Մոսկվան, նույն սխալ մոտեցմամբ, ուկրաինական պատերազմի դժվարությունների ազդեցության տակ կարճաժամկետ շահերը երկարաժամկետ շահերին գերադասելով, գնում է մի ճանապարհով, որը տանում է դեպի ՆԱՏՕ-ի ներկայության ուժեղացում Կովկասում և Կենտրոնական Ասիայում:

Չորրորդ. այն իրավիճակում, երբ Ադրբեջանն ու Հայաստանը պայմանավորվել են հանել տարածաշրջանային հաղորդակցության գծերի հարցը խաղաղության համաձայնագրի նախագծից, Լավրովի քննադատությունը Հայաստանի դիրքորոշման

նկատմամբ Սյունիքի հաղորդակցային գծերի բացումը կանխելու հարցում, որը հիմնականում վերաբերում է երկաթուղային կապին, պայմանավորված է երեք հիմնական պատճառներով.

1. 1. Ռուսաստանի նախագահը Ադրբեջան կատարած այցի ընթացքում Իլհամ Ալիևից ստացել է խոշոր և նոր արտոնություններ՝ էներգետիկայի և դրա փոխանցման հարցում. Այդ արտոնություններից են Ռուսաստանի ավելի մեծ ներկայությունը Ադրբեջանի Հանրապետության նավթի և գազի ասպարեզում և Ադրբեջանի գազատարների միջոցով ռուսական գազի փոխանցման ծավալների ավելացումը դեպի եվրոպական շուկաներ՝ առանց Գազպրոմի. ուստի Լավրովի շեշտադրումը հաղորդակցային գծերի վերաբացման վրա՝ առանց միջանցք բառն օգտագործելու, մի տեսակ «շոկոլադե երախտագիտություն» է Բաքվի արտոնությունների դիմաց:

2. 2. Ուկրաինայի պատերազմի ազդեցության տակ, և ռազմաճակատների վիճակի վատթարացման և Կուրսկում ՆԱՏՕ-ի ու Ուկրաինայի կողմից Մոսկվային հասցված հեղինակության հարվածի հետևանքով Ռուսաստանն ավելի ու ավելի է հայտնվում տարածաշրջանում աշխարհաքաղաքական և տարանցման բարդ իրավիճակի մեջ: Այս իրավիճակում, չնայած այլընտրանքային ուղիների առկայությանը, ինչպիսին է Հյուսիս-Հարավ միջանցքը, հատկապես Կենտրոնական Ասիայի և Կասպից ծովի միջով, տարբեր գործոնների պատճառով, ինչպիսիք են Բաքվի կողմից տրված արտոնությունները և ՌԴ ԱԳՆ-ում արևմտյան լոբբիների ազդեցությունը, Մոսկվայի իշխանությունները շեշտում են Սյունիքով տարածաշրջանային տրանսպորտային գծերի բացումը և կարծում, որ անհրաժեշտության դեպքում նրանք կարող են կանխել այդ հաղորդակցության գծերի վերածումը ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքի:

3. 3. Լավրովն այս դիրքորոշմամբ փորձել է ևս մեկ անգամ ճնշում գործադրել Հայաստանի վրա՝ արտահայտելու Ռուսաստանի դժգոհությունը Փաշինյանի արևմտամետ քաղաքականությունից և պաշտոնական Երևանի գործողություններից՝ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունից խուսափելու, Միջազգային քրեական դատարանին անդամակցելու, ինչպես նաև ռուս սահմանապահների արտաքսմանը զուգահեռ Ֆրանսիայի և ԱՄՆ-ի հետ համագործակցությունը ընդլայնելու հարցում: Սա այն դեպքում, երբ հաշվի առնելով Մոսկվայի և ՀԱՊԿ-ի գործողությունները Ղարաբաղյան երկրորդ և երրորդ պատերազմների ժամանակ, այս մոտեցումն Երևանին ավելի հեռացրեց Ռուսաստանից և նոր արդարացումներ տվեց Փաշինյանի կառավարությանը Ռուսաստանից խուսափելու համար:

Հինգերորդ. Ռուսաստանի իշխանությունները քաջ գիտակցում են Արաքսի միջանցքի կարևորությունը Ադրբեջանի Հանրապետությունը Նախիջևանի հետ կապելու գործում, որն այս առումով Իրանի երեք տասնամյա դերակատարության շարունակությունն է: Արաքսի միջանցքը ոչ միայն կբացի հաղորդակցության գծերը Կովկասի երկու կողմերում, այլև կվերացնի աշխարհաքաղաքական ինտրիգների և պատմական ու էթնիկական ցանկությունների հետապնդման Բաքվի և Անկարայի պատրվակը, որոնք հանդես են գալիս որպես անգլո-սաքսոնական կարգի կապալառուներ: Ուստի Ռուսաստանի շահերն ակնհայտորեն Արաքսի միջանցքի աջակցության մեջ են: Այս առումով արդյունավետ կլինի ռուսների պաթոլոգիական մոտեցումը Կովկասում և Կենտրոնական Ասիայում իրենց որոշ սխալների նկատմամբ, որոնք հանգեցրել են Ամերիկայի, ՆԱՏՕ-ի, Անգլիայի և Սիոնիստական ռեժիմի ազդեցության մեծացմանը Կասպից ծովի երկու կողմերում: Նկատի ունենալով Կովկասի բազմաթիվ հարցերում Իրանի և Ռուսաստանի ընդհանուր շահերը՝ Մոսկվայի իշխանությունները չպետք է տպավորություն ստեղծեն, թե իրենք շարունակում են Կովկասի հավասարումները դիտարկել մենաշնորհության մոտեցմամբ: Արաքսի միջանցքը Իրանի և Ռուսաստանի համագործակցության մեծ ներուժն է՝ փոխելու Կովկասի հավասարումները նոր կարգերի անցնելու գործընթացում:

Վեցերորդ. Կա աշխատանքի համակարգված բաժանում Ադրբեջանի ու Թուրքիայի գործողությունների և ՆԱՏՕ-ի գործողությունների միջև ընդդեմ Ռուսաստանի: ՆԱՏՕ-ն արգելափակել է Ռուսաստանի եվրոպական սահմանները և շրջափակել այն Սև ծովում՝ ներքաշելով Ռուսաստանին Ուկրաինայի պատերազմում՝ Թուրքիայի հնարավորությունների օգտագործմամբ: Ի լրումն այս հարցի,

Թուրքիան և Ադրբեջանը առաքելություն ունեն Ռուսաստանի տարանցման հզորությունը կենտրոնացնել անգլո-սաքսոնական հոսանքի նկատի առած երթուղում, այսինքն՝ ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքում, որպեսզի ավելի մեծ վերահսկողություն ունենան Մոսկվայի քայլերի վրա: Բնական է, որ Թուրքիան, որպես ՆԱՏՕ-ի վաղեմի ներկայացուցիչ, և Ադրբեջանը, որպես բրիտանական վերահսկողության տակ գտնվող մասնական կառույց, ինչպես ցույց են տվել Կովկասում երեք տասնամյակների քաղաքական, ռազմական և տնտեսական բազմաթիվ զարգացումները, երբեք հիմք չեն ստեղծում տարածաշրջանում Մոսկվայի երկարաժամկետ ներկայության ամրապնդման համար: Այս երկուսը վերջին տարիներին ամենամեծ դերն են ունեցել Ռուսաստանին թուլացնելու և Կովկասից վտարելու գործում, բացի այդ, այժմ Բաքուն նույնիսկ չի պատրաստվում համաձայնել Ղարաբաղում ռուսական հյուպատոսության բացմանը: Հետևաբար, Ռուսաստանի տրամաբանությունը հաղորդակցային գծերի բացումն ընդգծելու հարցում՝ լինի դա պատերազմական խնդիրների, թե Հայաստանի հանդեպ քինախնդրության պատճառով, երկարաժամկետ հեռանկարում արատավոր է և, բնականաբար, ավելի բացասական հետևանքներ կունենա Ռուսաստանի համար:

Յոթերորդ. Այն իրավիճակում, երբ ՆԱՏՕ-ն ձգտում է Կովկասում ստեղծել հակամարտության նոր օջախ Մոսկվայի դեմ՝ Վրաստանի և Ադրբեջանի քայլերի հիման վրա՝ Ռուսաստանի վրա ճնշումն ուժեղացնելու նպատակով, Լավրովի կողմնակալ հայտարարությունները հաղորդակցության գծերի վերաբերյալ ցույց են տալիս, թե Մոսկվան ինչ աստիճանի է շփոթված կովկասյան տարածաշրջանում: Այդ կարգի հայտարարությունները կարող են խրախուսել Ադրբեջանին ու Թուրքիային դիմելու նոր արկածախնդրության Կովկասում ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքի հարցին հետամուտ լինելու համար, կամ առնվազն հրաժարվելու Երևանի հետ խաղաղության հաստատումից և հարաբերությունների կարգավորումից, մանավանդ որ ներկայումս Բաքուն այս տարածաշրջանում մանկասպան Սիոնիստական ռեժիմի՝ լարվածություն առաջացնող քաղաքականության թիվ մեկ գործընկերն է: Թեև դա քիչ հավանական է տարբեր պատճառներով, ինչպիսիք են Թեհրանի վճռականությունը Կովկասում իր կարմիր գծերի հարցում կամ Իսրայելի ռեժիմին ու նրա կամակատարներին հնարավոր ցանկացած վայրում պատժելու որոշման հարցում, բայց բնական է, որ եթե դա տեղի ունենա, ապա այս սցենարի դեպքում ամենաշատը կտուժի հենց Ռուսաստանը: Այս հարցում ռուսները կարող են դասեր քաղել Կովկասում Չինաստանի համապարփակ մոտեցումից. Մեծացնելով ներդրումները Վրաստանի երկաթուղային գծերում և ավտոճանապարհներում, Պեկինը ցույց տվեց, որ գիտակցելով տարածաշրջանում, այսպես կոչված, տարանցիկ էթնիկ միջանցքի ձևավորման հետևանքները Սինցզյան նահանգի համար, կենտրոնացած է միջին միջանցքը ուժեղացնելու վրա՝ Զանգեզուրի կեղծ միջանցքի փոխարեն:

Ութերորդ. Իրանի սկզբունքային դիրքորոշումը տարածաշրջանում տրանսպորտային հարցերի վերաբերյալ 2020 թվականին հրադադարի համաձայնագրի ստորագրումից հետո եղել է հստակ ու անփոփոխ: Իրանը դեմ է Կովկասում աշխարհաքաղաքական և սահմանային ցանկացած փոփոխության, և այս կապակցությամբ խոսուն են Իրանի Գերագույն առաջնորդի հայտարարությունները 2022 թվականի հուլիսի 19-ին Պուտինի և Էրդողանի հետ հանդիպումներում, ինչպես նաև 2024 թվականի մայիսի 22-ին Փաշինյանի հետ հանդիպմանը: Իրանը դեմ է ցանկացած միջանցքին, որը կհանգեցնի սահմանների փոփոխության: Թեև պաշտոնական Թեհրանը դեմ չէ սովորական տարածաշրջանային հաղորդակցության գծերի վերաբացմանը՝ երկրների ինքնիշխանությունը հարգելու պայմանով, այդուհանդերձ, կարծում է, որ Թուրքիան և Ադրբեջանը, որպես անգլո-սաքսոնական կարգի կապալառուներ՝ այսպես կոչված թուրանական աշխարհ ստեղծելու համար, կօգտագործեն այդ հաղորդակցային գծերը՝ հիմք ստեղծելով աշխարհաքաղաքական էթնիկական ինտրիգների առաջմղման համար: Այս առումով Թեհրանի տեսանկյունից, Երևանը նույնիսկ իրավունք ունի իր ինքնիշխանության լիազորությունների շրջանակներում թույլ չտալ տրանսպորտային գծերի վերաբացումը տարածաշրջանում, և 2020 թվականի ուժը կորցրած համաձայնագրի վկայակոչումն իրավական ուժ չունի: ■

Ինչ է կատարվում մեր հասարակության հետ

Մանվել Մկրտչյան
Հրապարակախոս



Սա մեկն է այն հարցերից, որին պատասխանելը գործնականում անհնար է, քանզի ով էլ փորձի դա անել, կտա ընդամենը սահմանափակ պատասխան: Չկա ու չի կարող լինել մի այնպիսի համընդգրկուն հայացք կամ դիտանկյուն, որն ի զորու լինի ներառել ամբողջը: Անգամ ամենախորագետ վերլուծաբանը չի կարող ասել, թե ինչ գործընթացներ են տեղի ունենում ողջ հասարակության մեջ, մանավանդ որ այն անխզելիորեն կապված է մեծ աշխարհի իրադարձությունների հետ: Մի այսպիսի գողտրիկ պատմություն կա, որը հուշում է, թե ինչն ինչոց է. **«Օվկիանոսի ձուկը որոշեց պարզել, թե որտեղ է այդ օվկիանոս ասվածը: Նա հարցրեց շուրջը եղած ձկներին, սակայն նրանք ևս ոչինչ չգիտեին: Հետո ձուկը սոց. հարցումներ կազմակերպեց, google-ով փնտրեց ու նմանատիպ տարբեր ճիգեր գործադրեց, բայց այդպես էլ չգտավ այն հարցի պատասխանը, թե վերջապես որտեղ և ինչ է այդ օվկիանոս երևույթը»:** Հիմա մենք ինչպե՞ս կարող ենք որևէ սպառիչ բան ասել այն բանի մասին, որի մասնիկն ենք ինքներս, մեզնից յուրաքանչյուրը: Կարո՞ղ է արդյոք մասը իմանալ ավելին, քան ամբողջը, կամ խոսել ամբողջի անունից: Սա այն դեպքն է, երբ. «ինչ է տեղի ունենում հասարակության հետ» հարցը, պատկերավոր ասած՝ նմանվում է մի մեծ սոխի գլխի, որի մի շերտը հեռացնելով, տեսնում ենք հաջորդը, ազատվելով տվյալ շերտից, հանդիպում ենք մյուս շերտին և այսպես շարունակ: Այլ կերպ ասած՝ միշտ նոր հարցերն ավելի շատ են, քան պատասխանները: Ու երբ վիճակը բարդանում է «**ասեղը դրսում, մթության մեջ կորցնելուց հետո, սկսում ենք այն փնտրել ներսում, ինչ է թե տանը լուսավոր է»**: Ասել է թե՝ ամեն բան անհարկի պարզունակացնել… Հիմա, առանց մեծ հավակնությունների, փորձենք լինել ավելի կոնկրետ և ներկայացնենք մեր դիտարկումները: Եթե կյանքում կա մի բացարձակ ճշմարտություն, այն է, որ ամեն ինչ մշտապես փոփոխվում է, շարունակական փոփոխությունը կյանքի բնույթն է, բնությունը: Այլևս դժվար է պատասխանել այն հարցին, թե ինչ գործընթացներ էին տեղի ունենում մեր երկրում վերջին 30 տարում, հետո, ինչեր խաղարկվեցին 2018 թ. գարնանը, ինչպես հասարակության մի շատ մեծ հատված հայտնվեց օտար, ապազգային և թշնական ուժերի երախում, որտեղից դուրս պրծնելը, ասես, դարձել է անհնարին: Արցախի պարտության շոկային ցնցումները և դրանց հաջորդած վախի գիտակցված կամ չգիտակցված տրամադրությունները հանրությանը տեղափոխեցին բոլորովին նոր ու վտանգավոր հարթություն: Դեռ ռուս մեծ բանաստեղծ Ալեքսանդր Պուշկինն է ասել՝ «**Վախեցնելով արտաքին թշնամիով, մեզ սպանում են ներսից»:** Սա այն է, ինչով զբաղված են Հայաստանի ներկայիս դրածո իշխանավորները: Արժեքները նենգափոխելու, արժեզրկելու, ապականելու և ոչնչացնելու գործընթացը դարձել է նպատակ, ծրագիր և գործելաոճ: Այստեղ է, որ ծագում են բազմաթիվ հարցեր՝ որտե՞ղ կամ որտե՞ղից է ՔՊ-ն վերցնում կյանքն ապականողների ու ծախվածների ռեսուրսը: Ո՞վ է այն դատախազը, որը առանց աչքը թարթելու կալանքի որոշում է կայացնում բացարձակապես անմեղ մարդու նկատմամբ, ո՞վ է այն քստմնելի «պատմաբանը», որը նենգափոխում է հայոց պատմությունը, իսկ մյուսն էլ՝ դիվանագիտա-

կան կապիկություններ անում՝ վարչապետ կոչվածի զառանցանքները «սղոցելու» համար: Նմանատիպ կեղտոտ փաստերի շարքն անվերջ է, դրա ականատեսն ենք ամեն օր, ամեն ժամ: Բայց խնդիրը դա չէ, այլ այն, թե ինչու չի ստացվում հասարակական հուժկու ընդվզում առաջացնել դրա դեմ, կամ էլ՝ այդ բողոքը տարվում է այդպիսի մեծ ճիգերով և ոչ բավարար հզորությամբ: Սա քիչ թե շատ լավ պատկերացնելու համար պետք է տեսնենք, թե ինչ է իրենից ներկայացնում «հանրություն» ասվածը: Առհասարակ, հասարակական տրամադրությունները մինչև վերջ ճշգրտորեն ուսումասիրող, ինչպես ասացինք, որևէ մեխանիզմ կամ ձև գոյություն չունի: Պատահական չէ, որ սոցիոլոգիական հարցումները միշտ էլ մնում են կասկածների կամ անհուսալիության թիրախում: **Հասարակական կարծիքը, - ինչպես սրամտորեն նկատել է մի գործիչ, - շատ նման է հին ամրոցում ապրող չարքի, որին ոչ ոք չի տեսել, բայց դրանով մարդիկ վախեցնում են մեկը մյուսին»:** Վերջին հաշվով, հասարակական կարծիքը հենվում է այն կեղծ պատկերացման վրա, որ հանրությունը կարծիք ունի: Հաճախ լսում ենք՝ «**ժողովորդը այս կարծիքին է, համաձայն է սրա հետ, մերժում է սա**» և այլն: Օրինակ, բանկերում լուրջ հաշիվներ, թանկարժեք մեքենաներ, շահութաբեր բիզնեսներ ունեցող մարդը ժողովո՞ւրդ է, թե՞ ոչ: Ինչպիսի՞ն կլինի նրա վարքը քաղաքական բարդ իրադրություններում, նա կկանգնի՞ հրապարակներում հայրենիքին տեր կանգնողների կողքին, թե՞ կպատսպարվի իշխողների թևերի տակ: Սոցիալական տարբեր շերտերի վարքը երբեմն կանխատեսելի է, երբեմն՝ ոչ, իսկ ճակատագրական պահերին միշտ էլ գաղտնիք է: Սրանում բոլորս ենք համոզվել: Եվ միանգամայն ճիշտ է նաև այն, որ պայքարել հասարակական կարծիքի հետ, նույնն է թե՝ «**կռիվ տալ հողմաղացների դեմ»:** Մեկ էլ կտեսնես Երևանի փողոցներում լրագրողները հարցեր են ուղղում մարդկանց, և այն էլ այնպիսի թեմաներից, որոնցից խեղճ անցորդն անտեղյակ է: Ձավեշտն այն է, որ վերջինս էլ լրջորեն պատասխանում է դրանց: Ու տեսնում ենք, թե ինչպես որևէ կշիռ չունեցող մարդիկ հայտնում են իրենց «**խիստ ծանրակշիռ**» կարծիքները: Մեր դեպքում՝ պետությունը, իշխանությունը և օրենքները հանրության համար վարքագծային լուրջ կողմնորոշիչներ չեն: Հայ մարդու կարծիք ասածը նման է հանելուկի: Նա մի բան կմտածի, մեկ այլ բան կասի, իսկ ընտրությունների ժամանակ կընտրի ասածին և մտածածին հակառակ տարբերակով: Անձնական շահն է նրա ուղենիշը, թե՞ պարզ համակրանքը, կարող է այդպես էլ չիմանանք: Սա, իհարկե, պետական օրենքներից ու ազգային արժեհամակարգից զգալիորեն շեղված կյանքով ապրող հանրության վարքագիծ է:

Սովետական երկրի գոյության վերջին տարիներն էին, ռուբլին գահավիժում էր, թանկացումները դարձել էին հաճախակի: Հայաստանում ժողովրդի մեջ մոլեգնում էին ոսկու հնարավոր թանկացման լուրերը: Նույն օրերին գործի բերումով մեկնեցի Մոսկվա: Ո՛չ խուճապ կար, ո՛չ իրարանցում... Հարցրի մի ռուս տիկնոջ. «**Ինչ է, ձեզ չի հուզում, որ ոսկու թանկացում է սպասվում»**: Զարմացած ասաց. «**դա ձեզ ո՞րտեղից է հայտնի, ո՞վ է ասել այդ մասին, թերթերը գրե՞լ են, կառավարությունը հայտարարե՞լ է, ռադիոն ասե՞լ է...»** Ու ես ամոթից կարկամեցի, որովհետև ոչ մի պաշտոնական խոսք չէր եղել, բայց ազգովին արդեն տվայտանքների մեջ էինք: Հասկացա, որ մեզ համար օրենքը, իշխանությունը և կառավարությունը մեր հարևան Վարդուշն ու Գվիդոնն են, հիմնարկի Վաչոն ու Փառանձեմը: Կյանքի այս պարզ դրվագը մատնում է, թե ինչ աղետալի վիճակում է մեր հասարակության պետական մտածողությունը, որն անկախության շրջանում ոչ միայն չնորոգվեց ու չխմբագրվեց, այլև ավելի վատթարացավ: Վերջին պատերազմից հետո Նիկոլի իշխանության ղեկին մնալը մի իրողություն է, որից նորմալ մարդու երակներում պիտի որ արյունը սառեր: Անչափ դժվար է ասել, թե ինչպես դա տեղի ունեցավ, ինչ քարոզչական և գործակալական ցանցերի օգնությամբ դա հաջողվեց, բայց որ դրա հանրային պարարտ հողն ու միջավայրը, այնուամենայնիվ, կար, նույնպես փաստ է: Էթնոհոգեբանների և պատմաբանների դիտարկումները վկայում են, տևականորեն պետականազուրկ ազգերը հետագայում այս կամ այն չափով թշնամանքով են ընդունում նույնիսկ իրենց հարազատ իշխանությանը՝ մտածելով, թե կրկին գործ ունեն օտարների դրածոների հետ: Սա նշանակում է, որ իշխանահպատակությունն այդպես էլ չի արմատակալում տվյալ երկրում և ժողովրդի մոտ: Նույնիսկ քաղաքականապես անկախ գոյաձևը դրան վերջ չի դնում: Չինական մշակույթի համաձայն երե-

խային մանկուց սովորեցնում են իշխանին հարգել և հպատակվել անվերապահորեն: Բայց նույնքան էլ իշխանն է իրեն պահում արժանապատվորեն: Այստեղ է պետականասիրության գաղտնիքներից մեկը: Այսօր մեծ շուքով ընտրելու, իսկ երեք ամիս անց իշխանությանն ատելու և մերժելու երևույթներն արդեն մեր աչքի առջև են: Սա տեղի ունեցավ և՛ Տեր-Պետրոսյանի, և՛ թե Ռոբերտ Քոչարյանի ու Սերժ Սարգսյանի ընտրությունների պարագայում: Մեկ այլ առումով նույնն է տեղի ունենում ընդդիմադիր շարժումների դեպքում. օրինակ, մարդը երկու անգամ մասնակցելով Բագրատ Սրբազանի առաջնորդած հանրահավաքներին, արդեն որոշում է, որ պայքարը վերջնականապես տապալվել է: Պատահական չէ, որ ըստ հավաստի փաստերի՝ մեր հասարակության առավելագույնս 10-12%-ն է գիտակցում քաղաքական վիճակի ողջ լրջությունը, հնարավոր գոյաբանական աղետի մասշտաբները, մինչդեռ զանգվածի 90%-ն այդպես էլ անհաղորդ է ամեն ինչին: Հիշենք, թե պատերազմի, իսկ այնուհետև արցախահայության բռնագաղթի օրերին ինչպես էր այս զանգվածը հորթային պահվածքով «ապրում և վայլում» կյանքը: Այս մասին քաջատեղյակ են բրիտանական և թուրքական կենտրոնները և գիտեն ինչ եղանակներով խաղարկել դրածոյին և նրան աջակցող «սորոսակույտին»: Նրանք նաև լավ գիտեն, որ ազգային և պետական թույլ և խարխուլ մտածողություն ունեցող զանգվածին կառավարելու մյուս ուժեղ միջոցը ՓՈՂՆ է, իսկ դա նրանց համար հաստատ խնդիր չէ: Լավ վճարվող «բերետներ», հատուկ ջոկատայիններ, ազգային անվտանգության ծառայողներ, ստրկամիտ դատախազներ և դատավորներ, զգուշավոր, հավակնոտ ու մանրախնդիր մտավորականներ, տարբեր տրամաչափի ողորմելի ֆունկցիոներներ և այլն: Հիմա պարզ է չէ՞, թե ինչու այս համակարգը ճաքեր չի տալիս: 2018 թվականից ի վեր խաղարկվող սցենարներն այնպես են մտածված, որ զանգվածը, եթե նույնիսկ ինչ-ինչ բաներ կռահի, միևնույն է, անզոր կլինի դրանց վրա ազդելու: Ստախոսությունն ու ցինիզմը քանի որ այլևս միակ գործիքն են, պետք է սպասել նոր հիմարությունների՝ այս անգամ իբրև թե Եվրամիությանը մաս կազմելու հանրաքվեի ճամարտակություններով՝ արամսարգսյանատիպ տկարամիտների միջոցով: Ի հետևանք այս ամենի՝ ողջ հասարակությունը կարող է ալեկոծվել մի տաշտակաչափ ջրում: Հայոց պետականության խարխլման և ինքնության քայքայման գործընթացը ներկայումս թևակոխել է նոր փուլ, որը ևս ենթակա է որոշակի հաշվարկների: Անտառներում և տայգայում կա տիզի մի տեսակ, որին ռուսերեն անվանում են «инцифалитный клещ»: Սա լուցկու գլխիկի չափ տիզ է. ակտիվանում է ամռան ամիսներին և ահավոր վտանգավոր է: Եթե մարդը շուտ է հայտնաբերում այս տիզին, այն վտանգավոր չէ: Կարող է լինել այնպես, որ այն կառչի մարդու մարմնի դժվարահաս հատվածներին, նույնիսկ սկզբում հա-

ճելի քոր պատճառել, բայց հետո դանդաղ ծակում է մաշկը, մտնում է մաշկի տակ և այնտեղ լուծվում է: Այս տիզն ամբողջովին թույն է, ավելի մահաբեր, քան օձի թույնը: Նիկոլը մեր հանրային օրգանիզմի վրայի նույն թունավոր «տիզն» է՝ մարդկային կերպարով, որը, ուր որ է, վերջնականապես կմխրճվի մաշկի տակ, իսկ դրա նշանները մենք տեսնում ենք նրա արած յուրաքանչյուր քայլի մեջ: Այս թունավորումը կաթվածահարում է օրգանիզմը, իրար հետևից շարքից դուրս են գալիս բոլոր կենսական օրգանները: Չպետք է վստահ լինել, թե դա տեղի չի ունենա: Հասարակությունը որքան ներուժ ունի ինքն իրեն ապաքինելու, նույնքան էլ հակված է ամենավատ բաներին հարմարվելու: Ահավասիկ, հենց այս լռելու, հարմարվելու «ընդունակությունն» էլ մոտեցնում է նրա կործանումը: Մի առիթով Սերգեյ Փարաջանովն ասել է՝ «ստրկությունը սկսվում է լռությունից»: Եթե տեսնում ես, որ հաջողել ես հասարակության մի զգալի հատվածին վերածել գլուխն ավազի մեջ խրած ջայլամի, մյուսին դարձնել ամորֆ ու անտարբեր «սուբստրատ», ապա էլ ինչո՞ւ առաջ չգնալ: Օրինակ, ինչ եք կարծում, ինչո՞ւ է կառավարությունը ցանկանում իր ձեռքը վերցնել հատկապես Գրողների միության, կամ կոնսերվատորիայի շենքը, իսկ հաճախ էլ՝ փորձում է իր կեղտոտ թաթը դնել Ցեղասպանության թանգարան - ինստիտուտի, Ազգային արխիվի և Մատենադարանի վրա: Այո, դրանք հայոց ինքնության, հոգևոր մաքառումների և քաղաքական անկախության տաճարներն են: Եթե Մատենադարանը հայի հազարամյակների հոգևոր գանձարանն է, ապա Գրողների միությունն էլ նորանկախ Հայաստանի օրորոցներից է, որտեղ 90-ականների սկզբին ծնվեց մեր նոր պետությունը: Եվ ինչպես ժամանակակից բանաստեղծներից մեկն էր դիպուկ բնութագրել. «**օձը սողում է դեպի թռչնի բույնը, որպեսզի խժռի նրա ձվերը»:** Օձին կասեցնելու մի ձև կա. ջախջախել նրա գլուխը՝ հիմնովին և վերջնականապես, որպեսզի հասարակությունը վերջապես սթափվի և ձգտի առողջանալ: ■

Հայ եկեղեցու պատմական առաքելությունը ազգային ինքնության պահպանման գործում

Անի Մելքոնյան
Պատմաբան

«Եկեղեցին Հայկական, ծննդավայրն է հոգւոյս»
Վահան Թեքեան

«*Հայերիս համար մեր եկեղեցին կարևոր է հանապազօրդ հացի պես, հավիտենություն ճանապարհորդելու մեր ամուր հենարանն է: Մեր եկեղեցին մեր հոգապար մայրն ու մեր անառակություններից դարձի ժամին՝ գրկաբաց մեզ սպասող Հայրն է,*[1]»- սրանք Հայ առաքելական եկեղեցու մասին ասված Նժդեհի խոսքերն են, որոնք ամենևին էլ պատահական չեն, քանզի պարունակում են հայ եկեղեցու 1700-ամյա պատմությունը, որի ընթացքում գրեթե միշտ հայոց եկեղեցու առաքելությունն է եղել ազգային ինքնության պահպանումը, ինչը հաճախ զուգորդվել է խաչի ու սրի միատեղմամբ և հայրենիքի պաշտպանությանը մասնակցելով:

Հայոց եկեղեցու պատմական առաքելությունը սկսվեց նրա կազմավորվան պահից, սակայն առավել մեծ և կարևոր դարձավ, երբ հայոց պետականությունն ապրում էր իր անկման օրերը:

Պատմական ճակատագրի բերումով հայ ժողովուրդը դարեր շարունակ կանգնած է եղել ազգային ինքնության պահպանման հրամայականի առջև, և պետության բացակայության պայմաններում այս խնդիրը դարձել է հայոց եկեղեցու պատմական առաքելությունը: Այս գործին, դեռևս V դարում՝ Արշակունյաց թագավորության մայրամուտին, լծվեց հայոց եկեղեցին: Թագավորության անկման շրջանում և դրան հաջորդած բոլոր դարերում «Հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանման և մշակույթի զարգացման բնագավառում Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին իր լուսամիտ հոգևորականների շնորհիվ մեծ դեր է կատարել[2]»:

Արշակունյաց թագավորությունն իր մայրամուտն էր ապրում, և գալիք արհավիրքներին դիմակայելու համար հայությանն անհրաժեշտ էր միավորող գործոն՝ այդ դերը կատարելու համար քրիստոնեությունը դեռևս շատ թույլ էր, քանի որ օտարալեզու դպրության պայմաններում ժողովրդի լայն խավերն ի զորու չէին ընկալելու և հասկանալու քրիստոնեական գաղափարախոսությունը:

Վիճակը շտկելու համար ժամանակի ամենակիրթ հոգևորականներից մեկը՝ Մեսրոպ Մաշտոցը, ամենայն հայոց կաթողիկոս Սահակ Պարթև Վեհափառի և հայոց արքա Վռամշապուհ Արշակունու հովանավորությամբ ձեռնամուխ եղավ հայոց գրերի ստեղծմանը. «…. Հայոց նշագրերը գտնելով՝ երանելի Մաշտոցը գործի ձեռնարկեց: Հայոց սուրբ հայրապետ Սահակն էլ գործը հարմարեցնելով, տառերի դասավորության և հնչյունային ուղղաձայնության դյուրին ճանապարհ ցույց տալով, ինչպես նաև հայոց քահանաներից նրան օգնականներ կարգելով ճարտաբան ու խելամիտ մարդկանց, որոնք երանելի Մաշտոցի պես, մի քիչ գիտեին հունարեն վանկ-վանկ ընթերցելը: Դրանցից առաջինի անունն էր Հոհան՝ Եկեղյաց գավառից, երկրորդինը՝ Հովսեփ, Պաղնական տնից, երրորդինը՝ Տեր, Խորձյանքից, չորրորդինը՝ Մուշե, Տարոնից…[3]», ազգային ինքնության պահպանման գործում առաջին կարևոր քայլը կատարված էր, որին պետք է հաջորդեին Սուրբ Գրքի, աղոթքների, հոգևոր երգերի հայերեն թարգմանությունները, և իհարկե առաջին դպրոցների հիմնումը (Ամարասում, Վաղարշապատում և այլուր):

Հայ կյանքի Ոսկե Դարում (5-րդ դար) ստեղծված նյութական և հոգևոր զորեղ մշակույթը քաղաքական անբարենպաստ պայմաններում ծառայում էր համազգային կյանքի կայունացմանը և արտաքին ճնշմանը դիմագրավելու նպատակին:

Իրադարձությունների բերումով հայկական թագավորության անկումը հնարավոր չեղավ կանխել, և 387 թ. Հայաստանի Հռոմի և Պարսկաստանի միջև բաժանվելուց հետո՝ 428 թ. հայկական թագավորությունն ընկավ, այս պայմաններում հայոց եկեղեցու առաքելությունն ու պատասխանատվությունը ավելի մեծացավ՝ քանզի այն աստիճանաբար պետք է դառնար հայության թե՛ հոգևոր, թե՛ քաղաքական առաջնորդը:

Հայոց եկեղեցին իր մարտական մկրտությունը ստացավ 451 թ.՝ Ավարայրի դաշտում, ազգային ինքնության համար մղվող պատերազմում, երբ հայոց նախարարների ու ժողովրդի կողքին էին նաև «... սուրբ Հովսեփը, սուրբ Ղևոնդ երեցը և բազմաթիվ այլ քահանաներ և է՛լ ավելի բազմաթիվ (հոգևոր) պաշտոնյաներ: Որովհետև նրանք էլ ամենևին չվախեցան պատերազմի գալ նրանց հետ, քանի որ ո՛չ մարմնական էին համարում այն կռիվը, այլ հոգևոր առաքինության կռիվ, ցանկանում էին իրենք էլ քաջ զինվորներին մահակից լինել[4]»,- հայոց ինքնության համար հայոց եկեղեցու առաջնորդությամբ մղված առաջին մարտը հայ ժողովուրդը շահեց, մարտը, որը միշտ ոգեշնչում ու հոգևոր վահան էր դառնալու հետագա մեկ ու կես հազարամյակում հայության բոլոր աղետների ժամանակ:

Ինչևէ, գնանք առաջ՝ դեպի հայոց եկեղեցու նախաձեռնությամբ հայոց թագավորության վերականգնում՝ այս անգամ Բագրատունիների գահակալմամբ:

Այս շրջանում էր, որ հայոց եկեղեցին՝ Զաքարիա Ա Զագեցի կաթողիկոսի առաջնորդությամբ դիվանագիտական ճկուն հարաբերությունների շնորհիվ կարողացավ արաբական գերությունից ազատել բազմաթիվ հայ իշխանների: Գործուն մասնակցություն ունեցավ հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերություններին, պաշտպանելով Հայոց եկեղեցու դավանաբանական սկզբունքները, 862-ի Շիրակավանի ժողովում մերժեց Կ. Պոլսի պատրիարք Փոտի՝ քաղկեդոնականություն ընդունելու առաջարկը: Կանխեց Բյուզանդական կայսրության մեջ ապրող հայերին քաղկեդոնական դավանանքի պարտադրանքը:

Հայոց եկեղեցին գգալի դեր խաղաց սպարապետ Աշոտ Բագրատունուն Հայոց իշխանաց իշխան, ապա նաև 869-ի հայ իշխանների համաժողովում նրան Հայոց թագավոր ճանաչելու գործում (պաշտոնապես թագադրվել է ավելի ուշ, 885 թ. Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսի ձեռամբ): Հայոց կաթողիկոս Զաքարիա Ա Զագեցին նպաստեց հայ իշխանների միաբանությանը, խրախուսեց շինարարական աշխատանքները:

Բագրատունիների թագավորության շրջանում, և դրանից հետո էլ հայ կրթամշակութային կյանքի զարգացման գործում հայոց եկեղեցին շարունակեց ունենալ իր բացառիկ դերը՝ Անիի, Արգինայի, Կարսի, Հաղպատի, Սանահինի, Կեչառիսի, Այրիվանքի, Նարեկավանքի, Մշո Ս. Կարապետի և երկրի այլ դպրոցներում դասավանդում էին ժամանակի կիրթ հոգևորականները:

Անին Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք հռչակելուց հետո (961 թ.), սկսվեց հայ եկեղեցու և հայկական մշակույթի զարգացման մի նոր շրջան. «հիմնվել են դպրոցներ, մատենադարաններ, վանքերին կից բացվել են գրչության և մանրանկարչության կենտրոններ, կառուցվել թագավորաշեն և իշխանաշեն բազմաթիվ եկեղեցիներ[5]»:

1280 թ. գործում էր Գլաձորի համալսարանը, իսկ ավելի ուշ նրա ավանդույթները շարունակեց Տաթևի համալսարանը:



Սբ. Սահակ Պարթև

Հայոց պատմության մեջ ողբերգականորեն ճակատագրական էր Բագրատունյաց թագավորության անկումը, որը, ավելի քան 800 տարի, իր անջնջելի կնիքը թողեց հայ ժողովրդի հետագա ճակատագրի վրա:

«Բագրատունյաց և Կիլիկիայի հայկական թագավորությունների կորուստները (1045, 1375), քոչվորական ցեղերի ավերիչ արշավանքներն ու երկարատև տիրապետությունը, հայ ժողովրդի հսկայական զանգվածների հարկադրական արտագաղթերն ու օտար ցեղերի վերաբնակեցումը Հայաստանում չափազանց թուլացրին հայերի դիմադրական կարողությունները: Սելջուկ-թուրքերը, իսկ այնուհետև թաթար-մոնղոլները համարյա առանց լուրջ դիմադրության գրավեցին Հայաստանը...[6]», ստեղծված անպատմելի ծանր կացության պայմաններում հայոց եկեղեցու վրա ծանրացավ հայության քաղաքական առաջնորդության գործը:

Հենց հայոց եկեղեցին էր, որ պետք է սկզբնավորեր ու առաջնորդեր հայ ազատագրական պայքարը. «ազատագրական գաղափարների հիմնական կրողը դարձավ Հայոց եկեղեցին, որի բարձրաստիճան սպասավորներից շատերն ազնվականական ընտանիքների շառավիղների՝ սքեմ հագած ներկայացուցիչներ էին[7]»: Ազգային ինքնության պահպանումը միայն կրոնական ու մշակութային առանձնահատկությունների պահպանումը չէ, այլև հազարամյակների հայրենի-

Ներսես Աշտարակեցի

Գևորգ Ե Սուրենյանց

քում՝ ազգային պետության ձևավորումը: Այս պարզ ճշմարտության գիտակցումով էր, որ Հայոց Եկեղեցին հոգևոր և մշակութային արժեքների պահպանությունից զատ՝ քոչվորական տիրապետության ավերիչ դարաշրջաններում՝ շարունակում էր փայփայել հայոց պետականության վերականգնման գաղափարը: Ազգային ազատագրական պայքարի գաղափարախոսության ծավալման և տարածման գործում նշանակալից դեր ունեցան Ամենայն Հայոց կաթողիկոսներ Ստեփանոս Ե Սալմաստեցին, Միքայել Ա Սեբաստացին, Հակոբ Դ Ջուղայեցին:

Ազգային ինքնության պահպանման և պարսկական տիրապետությունից Հայաստանի ազատագրման գործում հայոց եկեղեցին իր կարևոր գործունեությունը շարունակեց Սիմեոն Երևանցի կաթողիկոսի առաջնորդությամբ:

Ազգային ինքնության պահպանման, Հայաստանի Արևելյան հատվածի ազատագրման, հայ ժողովրդի քաղաքական ու մշակութային կյանքի բարգավաճման պայմաններում՝ հայ եկեղեցու առաքելությունը առանձնահատուկ կերպով դրսևորվեց հատկապես ու մասնավորապես Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի և նրա հաջորդների առաջնորդությամբ:

Ներսես Աշտարակեցին մեծ դեր խաղաց 1815 թ. հիմնելով ժամանակի լավագույն դպրոցներից մեկը՝ Ներսիսյան դպրոցը, որը մեկ դարի ընթացքում տվել է 2000 շրջանավարտ, որոնց մեծ մասը գրողներ, գիտնականներ, հասարակական, քաղաքական, պետական գործիչներ ու մանկավարժներ էին և կարևոր դեր ունեցան ազգային ինքնության պահպանման գործում: Ներսես Աշտարակեցուց սկիզբ առած «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր-մշակութային նոր վերելքը շարունակվեց ողջ XIX դ. ընթացքում. Էջմիածնում բացվել է Գևորգյան հոգևոր ճեմարանը, (1874), թանգարանը, 1868-ից լույս է տեսել Մայր աթոռի պաշտոնական «Արարատ» ամսագիրը, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու նախաձեռնությամբ ստեղծվել են գիտամշակութային, ուսումնակրթական բազմաթիվ կենտրոններ ու հաստատություններ Հայաստանում ու հայ գաղթավայրերում[8]»:

Ինչպես տեսանք պատմաքաղաքական հանգամանքների բերումով. «դարեր շարունակ ապրելով այլադավան միջավայրում, այլակրոն ժողովուրդների մեջ, հայերն առավել ամուր են կապվել իրենց եկեղեցուն[9]», և կարելի է ասել, որ այդ կապը «հրով ու սրով» թրծված հոգևոր-ազգային ամուր միություն է, որը խախտել փորձել են բոլոր դարերում հանդիպած թշնամիներն ու արտաքին ուժերը՝ փորձում են նաև այսօր (զանազան աղանդավորական կազմակերպությունների միջոցով), բայց ապարդյուն, որովհետև տագնապներով լի բոլոր օրերին «հայ ժողովրդի հոգևոր, մշակութային և ֆիզիկական կեցության ապահովման դերը հանձն է առել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին…[10]»:

1915 թ. հայոց ցեղասպանության աղետալի օրերին, անչափելի մեծ կորուստներ կրեց նաև հայոց եկեղեցին, և չնայած դրան՝ ապաստան ու ապավեն դարձավ

ցեղասպանությունից մազապուրծ արևմտահայության համար:

Հայոց պատմության բոլոր ժամանակներում. «Եկեղեցին օրհնել է հանուն հայ ժողովրդի ազատության և անկախության մերկացված սուրը[11]», և այդ օրհնանքը 451 թ. մայիսից՝ հասավ 1918 թ. մայիս (այնուհետև արցախյան հերոսամարտ): Երբ դրված էր հայության լինել-չլինելու հարցը, եկեղեցու դերը չսահմանափակվեց միայն նրանով, որ Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը չլքեց Սուրբ Էջմիածինը:

Այդ օրերին՝ Սարդարապատում, Բաշ-Ապարանում, և Ղարաքիլիսայում մի նոր Ղևոնդ Երեց դարձած՝ Գարեգին եպս. Հովսեփյանը, Դանիել, Թադևոս և Եզնիկ վարդապետները, Տաճատ քահանան և այլ հոգևորականներ՝ հայ զինվորի կողքին մարտնչում էին թշնամու դեմ:

Այդ հերոսամարտերի շնորհիվ 1918 թ. մայիսի 28-ին ծնունդ առավ Հայաստանի Առաջին Հանրապետությունը, և Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը ողջունեց ազգային պետականության ծնունդը, ա՛յն պետականության, որի համար հարյուրամյակներ շարունակ պայքարել էր Հայոց եկեղեցին:

Հայ եկեղեցու, ապա նաև հայ ժողովրդի ազգային զարթոնքի մի նոր շրջան դարձավ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի (1955-1994) աթոռակալության երկարատև շրջանը, երբ Հայոց Հայրապետը հնարավոր բոլոր միջոցներով նպաստել է ազգային ինքնագիտակցության բարձրացմանը և աջակցել արցախյան շարժմանը՝ օրհնելով հայկական երկու պետականությունների ծնունդը:

Վազգեն Վեհափառի գործի շարունակողները եղան նախ՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա Սարգիսյանը, (1995-1999) ապա Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ Վեհափառը, որի առաջնորդությամբ էլ Հայոց եկեղեցին շարունակում է իր շինարարական-վերանորոգչական, կրթամշակութային ընդարձակ գործունեությունը:

Հայ եկեղեցին հսկայական ավանդ է ունեցել և ունի Սփյուռքում՝ հայապահպանության գործում. «Վիթխարի դեր կատարելով սփյուռքահայության համայնքների կազմակերպման և զարգացման բոլոր փուլերում՝ Հայ եկեղեցին գաղթաշխարհում եղել է հայապահպանության, ազգային ինքնագիտակցության բարձրացման գլխավոր գործոն[12]»:

Հաղթահարելով հազարամյակի մարտահրավերները, հայ եկեղեցին՝ հավատարիմ մնալով իր առաքելությանը, մշտապես եղել է ազգային ինքնության ու պետականության պաշտպանության դիրքերում, ուստի հարկ ենք համարում նշել, որ տարիներ շարունակ՝ որոշ շրջանակների կողմից, եկեղեցին պետությանը հակադրելու փորձերն անիմաստ են ու անհիմն, քանզի «Եկեղեցու հաստատման օրերից սկսյալ պետական իշխանությունը դիտվել է որպես ի վերուստ, Նախախնամությամբ կարգված միավոր: Հետևաբար պետությունը Եկեղեցուց միշտ աջակցություն է ստացել, սակայն հոռի բարքերն ու ոչ ավետարանական ընթացքն իրենց հերթին Եկեղեցու քննադատությանն ու շտկվելու կոչին են ենթարկվել[13]»- ինչը մեր կարծիքով միանգամայն ճիշտ է, և բնական, քանի որ «Եկեղեցին իր ազդեցությունն է բերում հոգևոր ոլորտի միջոցով՝ քրիստոնեական դաստիարակությամբ կրթելով… վերափոխելով մարդկանց, որպեսզի լինեն ազնիվ ու արդար, բարեսեր ու ողորմած, առաքինի և ծառայասեր[14]», ինչը կարևոր է թե պետության ղեկավարների թե քաղաքացիների համար:

Գարեգին Եպիսկոպոս Հովսեփյան

Ազգային ինքնության պահպանման իր պատմական առաքելությունն իրականացնելիս՝ հայ եկեղեցին այսօր էլ կանգնած է դժվարին մարտահրավերների առջև, որոնցից գլխավորը՝ թշնամի պետությունների ֆինանսավորմամբ հրապարակ իջած տարատեսակ «կրոնական կազմակերպություններն» են՝ այլ կերպ ասած աղանդավորները, որոնք ուղիղ սպառնալիք են թե մեր ազգային ինքնությանը, թե պետական անվտանգությանը, նրանց քայքայիչ գաղափարախոսության մեջ չկա ազգ, չկա հայրենիք, չկա հայրենասիրություն, իսկ «իրենց հետևորդներին արգելում են զենք վերցնել ու ծառայել բանակում: Այս ամենը մեծապես սպառնում է մեր երկրի անվտանգությանը, ժողովրդի միասնականությանը, ազդում մեր երկրի ռազմական ուժերի մարտունակության վրա[15]»:

Մեր ինքնությունն ու արժեհամակարգը քայքայող օտարոտի ու խորթ աղանդների՝ հայավնաս քարոզչությանը հակառակ, բոլոր դժվարին օրերին.

«Մեր եկեղեցին ոտքի է կանգնել և իր զավակներին առաջնորդել ազատագրական պայքարների: Նա դժվարությունների ժամանակ աղոթել է «ազատութիւն եղբարաց մերոց գերելոց, իսկ պատերազմների ժամանակ ղևոնդների ձեռքը սուր է դրել և առաջնորդել մեր ազգը «վասն հաւատոյ, վասն հայրենեաց» ազատագրական սուրբ պատերազմներին[16]»:

Հայ եկեղեցու պատմական առաքելության, հայ ժողովրդի ազգային-հոգևոր արժեհամակարգի ձևավորման գործում նրա ավանդի մասին անդադար կարելի է խոսել, քանզի իր պատմության ավելի քան 1700 տարիների ընթացքում հայ եկեղեցին միահյուսվել է հայ ժողովրդի հետ, դարձել նրա ինքնության անբաժան մասը, սակայն անհրաժեշտ ենք համարում ամփոփել, նշելով, միայն որ «Հոգևոր արժեքների, հասարակության ազգային ինքնության և պետության պահպանությունը այն կարևոր ու անբաժան գործոնոյթներից է, որ իրականացրել և իրականացնում է Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին պատմության անանցանելի ճանապարհներին[17]» - հետևաբար մեր պետությունն ու ժողովուրդը ճակատագրական այս օրերին պետք է իրենց համար Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին ընդունեն, որպես հոգևոր հզոր վահան մարտահրավերներին դիմակայելու համար՝ որովհետև անցյալում, ներկայում ու ապագայում «հայ եկեղեցին տունն է հայուն» - հոգևոր ցրտից, պղծություններից, մոլորություններից պաշտպանող հարազատ ու ջերմ տունը:

Ծանոթագրություններ

1. Նժդեհը և եկեղեցին., http://www.irates.am/hy/1707370147
2. Սարգիս սարկավագ Սարգսյան, Հայաստանյայց եկեղեցին և նրա դերը հայ ժողովրդի հոգևոր և մշակութային կյանքում, Էջմիածին, պաշտոնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռ Սրբոյ Էջմիածնի, 1958 №7., էջ 29:
3. Ղ. Փարպեցի, Հայոց պատմություն, Եր.,1982., էջ 35:
4. Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Եր., 1994, էջ 73:
5. https://ter-hambardzum.net/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B5%D6%81-%D4%B1%D5%BC%D5%A1%D6%84%D5%A5%D5%AC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%8D%D5%B8%D6%82%D6%80%D5%A2-%D4%B5%D5%AF%D5%A5%D5%B2%D5%A5/?fbclid=IwAR1tSgMwWLpRlYtB45p0o2CJROMjmkRrt2qty-IhSA9HjXQ7-a1_eYwwptw.
6. Հայոց պատմություն, խմբ. Հր. Սիմոնյան, Եր., 2012, էջ 131:
7. Հովհաննիսյան Պ., Հայ ազատագրական շաժումները (XV դարի կես-XVIII դարի վերջ), Եր., 2010, էջ 10:
8. https://ter-hambardzum.net/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B5%D6%81-%D4%B1%D5%BC%D5%A1%D6%84%D5%A5%D5%AC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%8D%D5%B8%D6%82%D6%80%D5%A2-%D4%B5%D5%AF%D5%A5%D5%B2%D5%A5/?fbclid=IwAR1tSgMwWLpRlYtB45p0o2CJROMjmkRrt2qty-IhSA9HjXQ7-a1_eYwwptw.
9. Անտինյան Ս., Սփյուռքի հայկական կազմակերպությունների, միությունների և հայ եկեղեցու դերը հայկական դպրոցների ստեղծման ու զարգացման գործում, 21-րդ ԴԱՐ, թիվ 5 (39), 2011, էջ 53:
10. Տեր Վրթանես եպիսկոպոս Աբրահամյան, Ազգային-հոգևոր արժեքների նկատմամբ սպառնալիքները և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դերը հոգևոր արժեքների, հասարակության ինքնության, պետության պահպանման գործում, Հայկական Բանակ, ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի ռազմագիտական հանդես, № 3 (97)., 2018., էջ 43:
11. Սարգիս սարկավագ Սարգսյան, Հայաստանյայց եկեղեցին և նրա դերը հայ ժողովրդի հոգևոր և մշակութային կյանքում, Էջմիածին, 1958 №7, էջ 31:
12. Անտինյան Ս., Սփյուռքի հայկական կազմակերպությունների, միությունների և հայ եկեղեցու դերը հայկական դպրոցների ստեղծման ու զարգացման գործում, 21-րդ ԴԱՐ, թիվ 5 (39), 2011, էջ 54-55:
13. Տեր Վրթանես եպիսկոպոս Աբրահամյան, Ազգային-հոգևոր արժեքների նկատմամբ սպառնալիքները և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դերը հոգևոր արժեքների, հասարակության ինքնության, պետության պահպանման գործում, Հայկական Բանակ, № 3 (97)., 2018., էջ 41:
14 .https://surbzoravor.am/post/view/ekeghecu-masin?fbclid=IwAR1AOpK7GBYhUTElEx-31yHmRTcWUDiLgpx83PTx-t9m0fH0RdoZ_o5lYv8.
15. Տեր Վրթանես եպիսկոպոս Աբրահամյան, Ազգային-հոգևոր արժեքների նկատմամբ սպառնալիքները և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դերը հոգևոր արժեքների, հասարակության ինքնության, պետության պահպանման գործում, Հայկական Բանակ, № 3 (97), 2018., էջ 45:
16 .http://www.hayzinvor.am/5817.html?fdx_switcher=true&fbclid=IwAR1D_ awIz7CR-cajaKSxlY3qI2sx66tbj8KQRtDMIV3anLjHkKP_6QpLc5M.
17. Տեր Վրթանես եպիսկոպոս Աբրահամյան, Ազգային-հոգևոր արժեքների նկատմամբ սպառնալիքները և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դերը հոգևոր արժեքների, հասարակության ինքնության, պետության պահպանման գործում, Հայկական Բանակ, № 3 (97), 2018., էջ 48-49:

Օգտագործված գրականության ցանկ

ա) Գրականություն

1. Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Եր., 1994:
2. Հայոց պատմություն, խմբ. Հր. Սիմոնյան, Եր., 2012:
3. Հովհաննիսյան Պ., Հայ ազատագրական շաժումները (XV դարի կես-XVIII դարի վերջ), Եր., 2010:
4. Ղ. Փարպեցի, Հայոց պատմություն, Եր.,1982:

բ) Մամուլ

1. 21-րդ ԴԱՐ, թիվ 5 (39), 2011:
2. Էջմիածին, պաշտոնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռ Սրբոյ Էջմիածնի, 1958 №7:
3. Հայկական Բանակ, ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի ռազմագիտական հանդես, № 3 (97), 2018:

գ) Համացանցի նյութեր

1. http://www.irates.am/hy/1707370147
2. https://ter-hambardzum.net
3. https://surbzoravor.am
4. http://www.hayzinvor.am

Ռուս-վրացական հարաբերություններն այցագրային և հաղորդակցության ոլորտներում

Այցագրային կարգը ռուս-վրացական հարաբերություններում (մաս 2)

Վահե Սարգսյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող

Ռազմավիրական մայրուղի. ՌԴ-Վրաստան գործող միակ ցամաքային կապը Պատմական էքսկուրս

Ռուսաստանը Վրաստանին և Այսրկովկասին կապող Ռազմավիրական ճանապարհով մշտական հաղորդակցությունը բացվել է 1799 թվականին: Ճանապարհը մեծ դեր է խաղացել Ռուսական կայսրության՝ դեպի հարավ ներթափանցման, Ռուսաստանի և Այսրկովկասի տնտեսական կապերի զարգացման գործում: Ռուսական կայսրության տիրապետության ժամանակ լեռնանցքային ճանապարհի վրա կատարվել են բարելավման աշխատանքներ, Վլադիկավկազից մինչև Թիֆլիս ճանապարհի երկայնքով գիշերակացի համար հիմնվել են մեկ տասնյակից ավելի կայարաններ:

Դժվարամատչելի, բայց միևնույն ժամանակ գեղատեսիլ այս ճանապարհով անցել և հիացել են բազմաթիվ նշանավոր մարդիկ, այդ թվում՝ անվանի գրողներ, մտավորականներ, պետական ու հասարակական գործիչներ, որոնցից շատերն իրենց տպավորությունները հանձնել են թղթին: Այդ շարքում առանձնանում է ռուս մեծ բանաստեղծ, դրամատուրգ և արձակագիր Ալ. Պուշկինը, ով 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ՝ 1829 թ., Էրզրում (ռազմաճակատ՝ կոմս Ի. Պասկևիչի մոտ) է մեկնել Ռազմավիրական ճանապարհով: Ճանապարհորդության հաջորդ տարում՝ 1830 թ., Ալ. Պուշկինը ճամփորդական նշումների հիման վրա «Լիտերատուրնայա գազետա» շաբաթաթերթում (տե՛ս «Литературная газета», 1830, 5 февраля, № 3) հրապարակում է իր էսսեն՝ «Վրացական ռազմական ճանապարհ» («Военная Грузинская Дорога») վերնագրով: Մի քանի տարի անց՝ 1836 թ., բանաստեղծը, ներառելով հիշյալ էսսեն, հրատարակում է իր նշանավոր ստեղծագործությունը՝ «Ճանապարհորդություն դեպի Արզրում» խորագրով, որի առաջին գլխում նկարագրում է Ռազմավիրական ճանապարհով, Մեծ Կովկասի ձյունապատ լեռներով, Թերեք գետով ու Դարիալի կիրճով անցումը դեպի Վրաստան և ժամանումը Թիֆլիս[1]:

Այդուհանդերձ, մշտական բնական երևույթները՝ սողանքները, սելավները, ժայռերը, քարաթափումները և, հատկապես, ձնահոսքերը, մեծ դժվարություններ են ստեղծել երթևեկության համար, և շահագրգիռ կողմերին մշտապես ստիպել են փնտրել նոր, ավելի անվտանգ երթուղիներ: 1830-ական թթ. նաև փորձ է

արվել շրջանցել Ռազմավիրական մայրուղու ամենաբարդ և դժվարանցանելի հատվածը՝ Խաչի լեռնանցքը (2379 մ.)[2], ինչը, սակայն, չի հաջողվել:

Ռուս-վրացական ցամաքային անցակետը քաղաքական հարաբերությունների ինդիկատոր

ՌԴ-ի և Վրաստանի միջև գործող միջազգային ավտոմոբիլային սահմանային միակ անցակետը՝ «Վերին Լարսը», միջազգային երթևեկության և ռուս-վրացական սահմանը հատելու համար փակ էր 2006 թ. հուլիսից մինչև 2010 թ. մարտը: Չնայած պաշտոնապես հայտարարվել էր, որ անցակետը փակվել էր վերակառուցման նպատակով, այդուհանդերձ, պարզորոշ էր, որ այն 2006 թ. հուլիսի 8-ին փակվեց Մ. Սաակաշվիլու վարչակարգի՝ սրընթաց դեպի Արևմուտք և ՆԱՏՕ գնալու ճանապարհին ՌԴ-ի դեմ ուղղված գործողությունների խորապատկերին[3]: Վրաստանում անցակետի փակումը գնահատեցին որպես «անբարյացակամ քայլ», քանի որ Թբիլիսիում «Կազբեգ» [4]-«Վերին Լարսը» համարվում էր սահմանի միակ օրինական անցակետը: Երկու այլ սահմանային անցակետեր՝ Գանտիադի-Ադլերը՝ Աբխազիայում և Ռոկ-Ներքին Ձարամագը՝ Հարավային Օսիայում, ըստ Թբիլիսիի, գործում էին անօրինական[5]:

Դարիալի կիրճ. Ռազմավիրական մայրուղին Վերին Լարս անցակետի մոտ 2013 թ.

2008 թ. տեղի ունեցած վրաց-հարավօսական հնգօրյա պատերազմից, ՌԴ-ի կողմից Աբխազիայի և Հարավային Օսիայի ճանաչումից հետո Վրաստանի կողմից ՌԴ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների խզումը չափազանց դժվարացնում էր անցակետերի աշխատանքների վերսկսման գործընթացի կազմակերպումը:

Մոտ երեք տարի անց՝ 2009 թվականի մարտի 1-ին, Հայաստանի Հանրապետության միջնորդությամբ Վրաստանի և Ռուսաստանի շահագրգիռ շրջանակների միջև ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն վերսկսվեց երթևեկությունը «Կազբեգ» (Վրաստան) - «Վերին Լարս» (Ռուսաստան) անցակետերով: Հյուսիսային Օսիայի մաքսատան «Վերին Լարս» բազմակողմ ավտոմոբիլային անցակետում զուգահեռ ընթացած շինարարությունն ավարտվել է 2009 թ. մայիսի 5-ին[6] ՌԴ նախագահի հանձնարարականներին համապատասխան և «ՌԴ պետական սահման» դաշնային թիրախային ծրագրի (2003 -2010 թթ.) շրջանակներում: Մի քանի ամիս անց՝ 2009 թ. սեպտեմբերին, Վրաստանը պաշտոնապես բացեց Ռուսաստանի հետ սահմանին՝ «Վերին Լարս» միջազգային ավտոմոբիլային անցակետի մոտ, նույն Ռազմավիրական ուղու վրա գտնվող «Կազբեգ» անցակետը[7]: Միջազգային ճանապարհային երթևեկությունը Հյուսիսային Օսիայի «Վերին Լարս» միջազգային ավտոմոբիլային անցակետով պաշտոնապես բացվել է 2010 թ. մարտի 1-ին, առավոտյան ժամը 06:00-ին, ռուսական և վրացական կողմերի միջև նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն: Այդ օրվանից ֆիզիկական անձինք, ապրանքներն ու տրանսպորտային միջոցները ռուս-վրացական սահմանով շարժվել են նույն այն կարգով և կանոններով, որոնք գործում էին մինչև մաքսակետի փակումը 2006 թվականին[8]:

Վերակառուցման աշխատանքներ Ռազմավիրական մայրուղու անցակետերում

2018 թվականին ռուսական և վրացական անցակետերի միջև չեզոք գոտում երթևեկության գոտիների թիվը երկուսից հասցվել է յոթի[9]:

«Վերին Լարս» միջազգային ավտոմոբիլային անցակետի թողունակության բարձրացման նպատակով Ռուսաստանը 2020 թ. որոշեց վերակառուցել այն: 2022 թ. հուլիսին ռուսական կողմից մարդատար տրանսպորտային միջոցների համար բացվել է ելքի 12 գոտի: 2021-2023 թթ. տեղի ունեցած վերանորոգման արդյունքում, տրանսպորտի ոլորտում վերահսկողության ՌԴ դաշնային ծառայության (Ռոստրանսնադզորի) փոխանցմամբ, 2023 թ. հունիսից աշխատանքները վերագործարկած անցակետում գործում է 39 գոտի, որից 15-ը նախատեսված է բեռնափոխադրումների համար: Ըստ գերատեսչության՝ բեռնատարների թողունակությունը կավելանա օրական 1,2 հազարից մինչև 1,5 հազար ավտոմեքենա[10]: Ռուս-վրացական սահմանի «Կազբեգ» մաքսային անցակետում 2023 թ. մայիսի 5-ից մեկ ամսով վերանորոգման աշխատանքներ են իրականացրել նաև Վրաստանի իշխանությունները: Ըստ Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հաղորդագրության՝ շինարարական-վերականգնողական աշխատանքներն իրականացվել են թեթև մեքենաների համար նոր ելքեր կազմակերպելու նպատակով[11]:

Սաակաշվիլիական արկածախնդրություններն ու Ռազմավիրական մայրուղու «ձնհալը»

Վրաստանում լավ են հիշում 2006-2013 թթ. տխրահռչակ ժամանակահատվածը, երբ ռուս-վրացական հարաբերությունների ծայրաստիճան վատացման պատճառով 2006-2010 թթ. փակ էր Վերին Լարսով անցնող Ռազմավիրական միջպետական մայրուղին, իսկ 2006-2013 թթ. Ռուսաստանում արգելք էր դրվել վրացական գինիների և հանքային ջրերի ներմուծման վրա: Բոլորի համար պարզորոշ էր, որ թե՛ վերանորոգումը (անցակետի պարագայում), թե՛ որակի չափանիշներին չհամապատասխանելը (արտադրանքի պարագայում) սոսկ պատրվակ էին: Իրական պատճառները քաղաքական էին. ՌԴ-ն պատժում էր Վրաստանի արկածախնդիր ղեկավարությանը, որի գլուխն էր արևմտաթուրքական շահերի վառ ներկայացուցիչ Մ. Սաակաշվիլին: Բնականաբար, ՌԴ-ի կողմից «Վերին Լարս» միջազգային ավտոմոբիլային անցակետի փակումը խոշոր վնաս հասցրեց նաև ՀՀ տնտեսությանը: Իբրև ՌԴ-ի հետ կապող միակ ցամաքային ուղի՝ «Վերին Լարս» անցակետի գործունեության դադարեցումը առաջին հերթին ծանր հարված հասցրեց ՀՀ արտաքին առևտրին և ապրանքային հոսքերին: Բացի այդ, տվյալ ժամանակահատվածում արտահանողներն ստիպված էին ապրանքները ՌԴ շուկա հասցնել մեծ դժվարություններով՝ գերազանցապես համակցված բեռնափոխադրումների միջոցով.

Ռազմավիրական մայրուղու քարտեզը 1913 թ.,

բեռները ավտոմոբիլային կամ երկաթուղային տրանսպորտով հասցնում էին մինչև Փոթիի նավահանգիստ, ապա տեղափոխում լաստանավ, Սև ծովով տեղափոխում ՌԴ նավահանգիստներ, այնուհետև վերստին ցամաքային տրանսպորտով հասցնում նախանշված վայրեր[12]:

Իշխանափոխությունից մի քանի ամիս անց՝ 2013 թվականի մայիսին, շնորհիվ ՌԴ փոխարտգործնախարար Գրիգորի Կարասինի ու Վրաստանի վարչապետի՝ ՌԴ-ի հետ հարաբերությունների կարգավորման հարցերով հատուկ բանագնաց Զուրաբ Աբաշիձեի բանակցությունների (Պրահայան բանակցություններ, որոնք սկզբնավորվել են 2012 թ. դեկտեմբերին), երկրները պայմանավորվել են վերականգնել ապրանքների այս կատեգորիաների առևտուրը, և Վրաստանից ՌԴ «Բորժոմի» հանքային ջրի, գինու և կոնյակի ներմուծման սահմանափակումները հանվել են:

Այսպես, 2013 թ. հունիսի 5-ին Պրահայում կայացած Կարասին-Աբաշիձե հանդիպմանը շարունակվել է ոչ պաշտոնական երկխոսությունը ռուս-վրացական հարաբերությունների բարելավման ուղիների շուրջ այն ոլորտներում, որտեղ դիվանագիտական հարաբերությունների բացակայության դեպքում հնարավոր է առաջընթաց: Կողմերն ամփոփել են 2012 թ. դեկտեմբերին սկսված աշխատանքների որոշ արդյունքներ, փաստել փոխգործակցության հիմնական համաձայնեցված ոլորտներում (առևտուր, տրանսպորտ, մշակութային և հումանիտար ոլորտներ, գիտություն և առողջապահություն) մի շարք հարցերի գործնական լուծման գործում առկա դրական դինամիկան՝ հայտարարելով, որ վրացական հանքային ջրի մատակարարումները Ռուսաստանի Դաշնություն վերսկսվել են 2013 թ. մայիսին, իսկ վրացական գինեգործական արտադրանքի առաջին առաքումները սպասվում են հունիսին: Հայտարարվել է, որ առանձնահատուկ դրական տեղաշարժեր են արձանագրվել տրանսպորտի ոլորտում. 2013 թ. հունիսի 1-ից ռուս-վրացական սահմանի «Վերին Լարս»-«Կազբեգ» անցակետը սկսել է գործել շուրջօրյա, սկսվելու էին կանոնավոր ցամաքային և օդային հաղորդակցությունների վերսկսման շուրջ բանակցությունները[13]:

Արդեն 2013 թ. սեպտեմբերի 19-ին պրահյան հերթական հանդիպմանը կողմերն ամփոփել են տարվա նախորդ (հունիսի 5-ի) հանդիպման արդյունքները՝ փաստելով, որ ռուսական շուկա են վերադարձել վրացական գինիները, հանքային ջուրը, ինչպես նաև գյուղմթերքի որոշ տեսակներ: Կողմերը հավելել են նաև, որ ռուս-վրացական սահմանի «Վերին Լարս»-«Կազբեգ» ցամաքային անցակետը շարունակում է գործել շուրջօրյա, վերականգնվել է միջազգային ճանապարհային երթևեկությունը, խորհրդակցություններ են ընթացել կանոնավոր ավիափոխադրումների վերսկսման շուրջ[14]:

Ռազմավիրական մայրուղու գերարդիականացման ծրագիրը հյուսիս-հարավ առանցքի ձևավորման նոր խթան

Հաշվի առնելով անցյալի սխալները՝ Ռուսաստանի հետ առևտրատնտեսական և մի շարք այլ ոլորտներում հարաբերությունների խորացման և այդ շրջանակներում հյուսիս-հարավ ճանապարհատրանսպորտային համակարգի զարգացման խնդիրը վրացական կողմի համար դարձել է գլխավոր առաջնահերթություններից մեկը: Վրաստանի իշխանությունների կողմից այդ ուղղությամբ իրականացվող խոշոր ծրագրերից է դեպի ՌԴ սահմանային անցակետ տանող Մցխեթա-Ստեփանծմինդա-ՌԴ սահման (Վերին Լարս) ավտոմայրուղու ամենադժվարանցելի՝ Կոբի-Գուդաուրի հատվածը շրջանցող Քվեշեթի-Կոբի ճանապարհի շինարարությունը: Վրաստանի ճանապարհաշինության պատմության մեջ խոշորագույններից մեկը համարվող հավակնոտ այս ծրագրի՝ նոր ճանապարհի կառուցման նախագիծը հաստատվել է 2019 թ., շինարարությունն սկսվել է 2020 թ. սեպտեմբերին, այն նախատեսված է ավարտել 2024 թվականին: Վրաստանի Տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային դեպարտամենտի հաղորդմամբ՝ Քվեշեթի-Կոբի ծրագրի շրջանակներում կառուցվում է ընդհանուր 23 կմ երկարությամբ 2 գոտի ասֆալտբետոնե ճանապարհ, 5 կամուրջ, 5 թունել, վերականգնվում է 1 կամուրջ: Թունելներից առանձնանում է 9 կմ երկարությամբ և 15 մ տրամագծով թունելը,

Հատված Ռազմավիրական մայրուղուց

որն ամենամեծն է Վրաստանում և եզակիներից մեկը աշխարհում[15]: Վերջինս նաև համարվում է Եվրոպայի ամենաբարդ ինժեներական կառույցներից մեկը[16]: Նոր ճանապարհը Քվեշեթի – Կոբի հեռավորությունը կկրճատի 11 կմ-ով (գործող ճանապարհը 34 կմ է, կառուցվողը՝ 23), երթևեկության տևողությունը՝ մինչև մեկ ժամով (Թբիլիսի-Ստեփանծմինդա երթևեկությունը 2,5 ժամի փոխարեն կտևի 1 ժամ 45 րոպե): Նոր ճանապարհով հնարավոր կլինի զարգացնել մինչև 80 կմ/ժամ արագություն (գործող մայրուղու տվյալ հատվածում 30-35 կմ/ժամ առավելագույն թույլատրելի արագության փոխարեն): Վերջապես, խոշոր այս նախագիծը երթևեկողներին կազատի հայտնի Խաչի լեռնանցքի չափազանց վտանգավոր և ձնահոսքերի պատճառով հաճախակի փակվող հատվածից, որտեղ գտնվում է Ռազմավիրական ճանապարհի ամենաբարձր կետը՝ 2395 մ: Եթե այժմ Քվեշեթի-Կոբի հատվածում ճանապարհորդությունը տևում է մոտ մեկ ժամ (ձմռանը ավելի երկար), և երթևեկությունը հաճախ արգելվում է ձնահյուսի վտանգի պատճառով, ապա ծրագրի ավարտից հետո ճանապարհը հնարավոր կլինի անցնել ընդամենը 15 րոպեում[17]:

Ռազմավիրական մայրուղու Քվեշեթի-Կոբի ճանապարհի ծրագիրն իրականացվում է Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) և Վրաստանի կառավարության միջոցներով, և դրա ընդհանուր արժեքը կազմում է 1,2 մլրդ լարի (558,6 մլն դոլար, որից 415 մլն-ը ներդրվել է ԱԶԲ-ի, 60 մլն-ը՝ ՎԶԵԲ-ի, 83,6 մլն-ը՝ Վրաստանի կառավարության կողմից): Խաչի լեռնանցքի տակով անցնող 9 կմ երկարությամբ խոշոր թունելը կառուցում է միջազգային մրցույթում հաղթած չինական խոշորագույն “China Railway Tunnel Group Co” ընկերությունը: Պայմանագիրը կնքվել է 2019 թվականի սեպտեմբերին: Իր մասնաճյուղի միջոցով Վրաստանում 2002 թվականից գործունեություն ծավալող չինական մեկ այլ ընկերություն՝ “China Railway 23rd Bureau Group Co”-ն, հաղթել է Քվեշեթի-Կոբի ճանապարհի 13 կմ-ի շինարարության մրցույթում[18]:

ՌԴ-Վրաստան առևտրաշրջանառության նոր հնքը. արդի ցուցանիշներ

Ըստ Վրաստանի պաշտոնական վիճակագրության՝ 2022 թ. Վրաստանը Ռուսաստանի Դաշնություն է արտահանել ավելի քան 73,000 տոննա բնական գինի (ավելի քան $160 մլն արժողությամբ), 12,000 տոննա ալկոհոլային խմիչք (ավելի քան $56 մլն), 92,000 տոննա հանքային և քաղցրահամ ջուր (ավելի քան $50 մլն): 2022 թ. տվյալներով՝ Ռուսաստանը Թուրքիայից հետո երկրորդ տեղն է զբաղեցրել Վրաստանի առևտրային գործընկերների շարքում: Երկրների միջև փոխադարձ առևտրի ծավալը 2022 թ. կազմել է մոտ 2,5 միլիարդ դոլար կամ Վրաստանի ընդհանուր արտաքին առևտրաշրջանառության 13,1 %-ը: Երրորդ տեղում Չինաստանն է՝ մոտ $1,9 միլիարդով կամ 9,8%-ով[19]:

Վրաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով՝ 2023 թ. Թուրքիան շարունակել է հանդիսանալ Վրաստանի ամենամեծ առևտրային գործընկերը՝ 2,98 մլրդ ԱՄՆ դոլար ապրանքաշրջանառությամբ (13.8%): Ռուսաստանը կրկին զբաղեցրել է երկրորդ տեղը ($ 2,40 մլրդ, 11.2 %), 3-րդ տեղն զբաղեցրել է ԱՄՆ-ը ($ 2,05 մլրդ, 9.5%), հաջորդիվ Չինաստանն է ($ 1,64 մլրդ, 7.6%), Ադրբեջանը ($ 1,52 մլրդ, 7.0%), Հայաստանը ($ 1,12 մլրդ, 5.2%) և այլն[20]:

2023 թ. Վրաստանից խոշորագույն արտահանող երկրներն են եղել Ադրբեջանը ($ 862 մլն), Հայաստանը ($ 787 մլն), Ղազախստանը ($ 703 մլն), Ղրղզստանը ($ 696 մլն) և Ռուսաստանը ($ 657 մլն): Ներմուծման առումով Վրաստանի ամենամեծ առևտրային գործընկերը Թուրքիան է ($ 2,6 մլրդ), հաջորդը ԱՄՆ-ն է ($ 1,95 մլրդ), Ռուսաստանը ($ 1,74 մլրդ), Չինաստանը ($ 1,33 մլրդ) և Գերմանիան ($ 948 մլն): 2023 թվականին ապրանքախմբերի մեջ արտահանման ծավալով առաջին տեղում են եղել թեթև մեքենաները ($ 2,13 մլրդ), այնուհետև՝ պղնձի հանքաքարերը և խտանյութերը ($ 479 մլն), բնական խաղողի գինիները ($ 259 մլն) և այլն[21]:

Վրացական գինու արտահանումը Ռուսաստան աճել է 5%-ով և հասել 168 մլն ԱՄՆ դոլարի: Ռուսական շուկա արտահանման մեջ երկրորդ տեղում են ալկոհոլային խմիչքները ($ 67,4 մլն, աճը՝ 42%), իսկ երրորդ տեղում է ավտոմեքենաների արտահանումը՝ $ 67,1 մլն, ինչը 2022 թ. համեմատ նվազել է 11%-ով[22]: Այսպիսով, 2023 թ. Վրաստանը Ռուսաստան է արտահանել՝

1. խաղողի բնական գինիներ ($ 168,3 մլն), 2022 թ. համեմատ աճը՝ 5%,
2. ոգելից խմիչքներ ($ 67,4 մլն), 2022 թ. համեմատ աճը՝ 42%,
3. թեթև ավտոմեքենաներ ($ 67,1 մլն), 2022 թ. համեմատ նվազել է 11%-ով,
4. հանքային ջրեր և քաղցրահամ ըմպելիքներ՝ առանց

շաքարի հավելումների ($ 61,8 մլն), 2022 թ. համեմատ աճը՝ 21%,
5. ըմպելիքներ, ներառյալ՝ հանքային և գազավորված, շաքարի հավելումներ պարունակող ($ 60,7 մլն), 2022 թ. համեմատ աճը՝ 54%,
6. այլ ապրանքներ (ընդհանուր՝ $ 231,6 մլն), 2022 թ. համեմատ նվազել է 13,6%-ով[23]:

Ռուսաստանից Վրաստան ներմուծվող ապրանքների ամենամեծ խմբերն են.
1. նավթ և նավթամթերք ($ 552,1 մլն), 2022 թ. համեմատ նվազել է 11,2%-ով, բացարձակ թվով աճը՝ 113.796,1 տոննա,
2. նավթային գազեր և այլ գազային ածխաջրածիններ ($ 131,2 մլն), 2022 թ. համեմատ աճը՝ 14,3%,
3. ածխածնային պողպատից ձողեր, առանց հետագա մշակման ($ 57,9 մլն), 2022 թ. համեմատ աճը՝ 37,7%,
4. ցորեն և մեսլին ($ 56 2 մլն), 2022 թ. համեմատ նվազումը՝ 9,1%, բացարձակ թվով աճը՝ 43.437,2 տոննա,
5. շշեր և այլ ապակե տարաներ ($ 48,6 մլն), 2022 թ. համեմատ աճը՝ 9,9%,
6. այլ ապրանքներ (ընդհանուր՝ $ 898,4 մլն), 2022 թ. համեմատ նվազել է 6,4%-ով[24]:

Ռազմավիրական մայրուղին՝ «Հյուսիս-Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի ներդրումային ծրագրերում

Ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկից, ՌԴ-ի դեմ միջազգային պատժամիջոցների կիրառումից հետո, ինչպես նաև սևծովյան տրանսպորտային ուղիներով բեռների տեղափոխման բարդացման պայմաններում ձևավորվող «Հյուսիս-Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքը (ՄՏՄ) ձեռք է բերել չափազանց կարևոր նշանակություն: Ի՞նչ է «Հյուսիս-Հարավ» ՄՏՄ-ն: Ըստ ՌԴ արտգործնախարարության պաշտոնական տեղեկանքի՝ «Հյուսիս-Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքը մուլտիմոդալ երթուղի է ուղևորների և բեռների փոխադրման համար, Սանկտ Պետերբուրգից մինչև Հնդկաստանի Մումբայ (Բոմբեյ) նավահանգիստ՝ 7200 կմ ընդհանուր երկարությամբ: Այն ստեղծվել է Հնդկաստանից, Իրանից և Պարսից ծոցի այլ երկրներից դեպի Ռուսաստանի տարածք (Կասպից ծովով) և հետագայում Հյուսիսային և Արևմտյան Եվրոպա տարանցիկ բեռնափոխադրումներ ներգրավելու համար: ՌԴ տրանսպորտային քաղաքականության առաջնահերթ ուղղություններից մեկը համարվող «Հյուսիս-Հարավ» ՄՏՄ-ի զարգացումը համապատասխանում է Ռուսաստանի Դաշնության՝ մինչև 2030 թ. տրանսպորտային և երկաթուղային տրանսպորտի զարգացման ռազմավարություններին և համապատասխան այլ դաշնային նպատակային ծրագրերին: Այս նախագծի իրավական հիմքը «Հյուսիս-Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի մասին միջկառավարական համաձայնագիրն է, որը ստորագրվել է Ռուսաստանի, Հնդկաստանի և Իրանի կողմից Սանկտ Պետերբուրգում 2000 թ. սեպտեմբերի 12-ին 2-րդ Միջազգային եվրասիական

Ռուս-վրացական բարեկամության կամարը Ռազմավիրական մայրուղու վրա

տրանսպորտային համաժողովի ժամանակ: 2002 թ. մայիսին Համաձայնագիրը վավերացվել է դրա բոլոր մասնակիցների կողմից և ուժի մեջ մտել[25]: «Հյուսիս-Հարավ» նախագիծը, որի նպատակն է կրճատել Ռուսաստանից Հնդկաստան ապրանքների փոխադրման երթուղին և այլընտրանք ստեղծել Սուեզի ջրանցքին, մեծ հետաքրքրություն է առաջացրել շահագրգիռ երկրների շրջանում, արդյունքում՝ հետագայում Համաձայնագրին միացել են Բելառուսը, Ղազախստանը, Օմանը, Տաջիկստանը, Ադրբեջանը, Հայաստանը, Սիրիան, Բուլղարիան, Ղրղզստանը, Թուրքիան և Ուկրաինան: Այժմ «Հյուսիս-Հարավ» ՄՏՄ-ն ներառում է ընդհանուր առմամբ 14 երկիր:

Այդուհանդերձ, սկզբնական շրջանում այս խոշոր նախագծի հիմնական, առանցքային դերակատարներն են հանդիսացել ՌԴ-ն, Ադրբեջանն ու Իրանը, և ամենևին պատահական չէ, որ Ռուսաստանի ադրբեջանական և ադրբեջանամետ տեղեկատվական-վերլուծական հարթակները հայտարարում են, որ *«…միջանցքի զարգացումը մեծապես կախված է Իրանի հետ Ադրբեջանի և Ռուսաստանի հարաբերություններից»*[26]: 2007 թվականից սկսած այս երկրների շարքն են համալրել Կասպյան ավազանի մյուս երկրները՝ Ղազախստանն ու Թուրքմենստանը, և, սկսած 2000-ական թվականներից, այս երկրների մասնակցությամբ պարբերաբար քննարկումներ են տեղի ունեցել «Հյուսիս-Հարավ» ՄՏՄ-ին առնչվող մի շարք հարցերի շուրջ:

Փաստենք, որ Կասպից ծովի ավազանում «Հյուսիս-Հարավ» միջանցքն անցնում է երեք երթուղիներով. 1. տրանսկասպյան՝ օգտագործելով Ռուսաստանի և Իրանի նավահանգիստները, 2. արևմտյան՝ Ադրբեջանով, 3. արևելյան՝ Ղազախստանով և Թուրքմենստանով[27]: 2023 թ. պայմանագիր է ստորագրվել Իրանի Ռեշտ և Աստարա քաղաքների միջև 162 կմ-ոց երկաթգծի կառուցման մասին[28]:

Վերին Լարսի անցակետը

Միջանցքի բոլոր երեք երթուղիներում ենթակառուցվածքային խոչընդոտները վերացնելու նպատակով իրականացվում կամ նախատեսվում են իրականացնել ավելի քան 100 ներդրումային ծրագրեր $38,2 մլրդ ընդհանուր արժեքով, որի ամենամեծ ծավալը (համապատասխանաբար 35 և 34%) անհրաժեշտ է Ռուսաստանում և Իրանում «Հյուսիս-Հարավ» ՄՏՄ-ի տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման համար: Ղազախստանին բաժին է ընկնում միջանցքի զարգացման նախագծերի ընդհանուր արժեքի 16,5%-ը, Թուրքմենստանին՝ 1,6%, Ադրբեջանին՝ 7,3%, Հայաստանին՝ 4,8%, Վրաստանին՝ 1,5%:

Շուրջ 102 ներդրումային նախագծերը բաշխված են ըստ հետևյալ ոլորտների. 20 ծրագիր երկաթուղային տրանսպորտի ոլորտում, 59՝ ճանապարհային, 7՝ սահմանային անցման կետերի և հարակից ենթակառուցվածքների, 8՝ ծովային նավահանգիստների, 4՝ ներքին ջրային ուղիների, 4՝ նավաշինության ոլորտում: Նախագծերն ըստ երկրների ներկայացված են հետևյալ կերպ. 8-ը՝ Ադրբեջանի տարածքում, 5-ը՝ Հայաստանի, 1-ը՝ Վրաստանի, 11-ը՝ Իրանի, 22-ը՝ Ղազախստանի, 52-ը՝ Ռուսաստանի, 3-ը՝ Թուրքմենստանի: 102 ծրագրից 67-ը ֆինանսավորում են ազգային պետական բյուջեները, 35-ի դեպքում հնարավորություն է տրվում ներգրավել երրորդ կողմի ներդրողներին[29]:

Ինչպես տեսանք, Վրաստանին բաժին է ընկնում միջանցքի զարգացման նախագծերի ընդհանուր արժեքի 1,5%-ը կամ $0,56 մլրդ: Վրաստանի համար առանձնացված նախագծերը մտնում են **ըստ առաջնահերթության երեք խմբի բաժանվող նախագծերի** առաջին խմբի մեջ (միջանցքային հատվածներում բեռնափոխադրումներին խոչընդոտ հանդիսացող կրիտիկական խցանումների և բացակայող օղակների վերացում):

Վերլուծական փաստաթղթերում նշված է, որ **առաջին խմբի նախագծերի** իրականացումը որոշիչ նշանակություն ունի **արևմտյան երթուղու** զարգացման համար, որտեղ հիմնական ենթակառուցվածքային խոչընդոտը Իրանի Ռեշտ-Աստարա երկաթուղային անավարտ հատվածն է: Երկաթուղուց ավտոմոբիլ կրկնակի փոխադրումը ճանապարհի այս հատվածում մեծացնում է բեռների առաքման արժեքը և ժամանակն ընդհուպ մինչև տնտեսական նպատակահարմարությունը կորցնելու աստիճան: Առաջնահերթ ծրագրերով (1-ին խումբ) նախատեսված ներդրումների մեծ մասը (69,1%) նախատեսված է «Հյուսիս-Հարավ» ՄՏՄ-ի Արևմտյան երթուղու զարգացման համար: Առաջնահերթ ներդրումների ընդհանուր ծավալում Տրանսկասպյան երթուղու տեսակարար կշիռը կազմում է 19,1%, ևս 11,8%-ը բաժին է ընկնում միջանցքի Արևելյան երթուղուն[30]:

«Հյուսիս-Հարավ» ՄՏՄ-ի Արևմտյան երթուղու զարգացման առաջնահերթ ծրագրերը (1-ին խումբ) ներառում են.

1. Ռեշթ-Աստարա գծի բացակայող երկաթուղային հատվածի կառուցում Իրանում,
2. Ալյաթ-Աստարա և Սումգայիթ-Յալամա երկաթուղային գծերի արդիականացում Ադրբեջանում,
3. Վերին Լարս (Հյուսիսային Օսիա, ՌԴ-Վրաստան սահմանային անցակետ - Վ.Ս.) և Յարագ-Կազմալյար (Դաղստան, ՌԴ-Ադրբեջան սահմանային անցակետ - Վ.Ս.) ավտոմոբիլային անցակետերի արդիականացում,
4. Սամուր և Աստարա երկաթուղային անցակետերի արդիականացում Ադրբեջանում, ինչպես նաև Դերբենտ երկաթուղային անցակետը՝ Ռուսաստանում,
5. Բաքու-ՌԴ սահման արագընթաց մայրուղու հատվածի կառուցում,
6. «Հյուսիս-Հարավ» ավտոճանապարհային միջանցքի հատվածների կառուցում Հայաստանում,
7. Նեթենզ-Սերջան-Բանդար Աբբաս արագընթաց մայրուղու Սերջան-Բանդար Աբբաս հատվածի կառուցում Իրանում,
8. Վլադիկավկազ, Գուդերմես, Գրոզնի, Դերբենտ և Խասավյուրտ քաղաքների շրջանցիկ ճանապարհների կառուցում Վլադիկավկազ-Մախաչկալա-Ադրբեջանի հետ սահման Ռ-217 «Կովկաս» մայրուղու վրա,
9. Մախաչկալա քաղաքի շրջանցիկ ճանապարհի կառուցում Պ-215 Աստրախան-Մախաչկալա ավտոմայրուղու վրա[31]:

Ինչպես տեսանք, իրականացվում են մի շարք ներդրումային ծրագրեր Հայաստանի Հանրապետությունում և Վրաստանում՝ Ռուսաստանին և Հայաստանին կապող «Հյուսիս-Հարավ» ավտոմայրուղու զարգացման համար, որը ներառում է Ռազմավիրական ճանապարհի և Վերին Լարսի միջազգային ավտոճանապարհային անցակետի հատվածները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցվող նոր արագընթաց մայրուղու հատվածները: Ավանդաբար այս մայրուղին ասոցացվում է «Հյուսիս-Հարավ» ՄՏՄ-ի հետ՝ հատկապես հաշվի առնելով Հայաստանի մասնակցությունը «Հյուսիս-Հարավ» ՄՏՄ Համաձայնագրին, թեև այն աշխարհագրորեն անջատված է միջանցքի Արևմտյան ավտոճանապարհային երթուղուց: Վերլուծական

փաստաթղթերում նշվում է, որ ՀՀ տարածքում «Հյուսիս-Հարավ» ավտոճանապարհային երթուղու կառուցումը պաշտոնապես «Հյուսիս-Հարավ» ՄՏՄ զարգացման նախագծերից է, քանի որ Հայաստանը «Հյուսիս-Հարավ» ՄՏՄ-ի մասին Համաձայնագրի լիիրավ մասնակիցն է:

«Հյուսիս - Հարավ» ՄՏՄ-ի զարգացման ներդրումային նախագծերի ցանկի Հայաստանի Հանրապետության ենթաբաժնում ներառված են թվով 5 ծրագրեր[32], որոնցից 4-ը՝ 1-ին խմբի տակ (առաջնահերթ նախագծեր): Դրանք են՝ 1. Քաջարան-Ագարակ հատվածի կառուցում մինչև Իրանի հետ սահման, 2. Գյումրի-Բավրա հատվածի կառուցում, 3. Քաջարանի թունելի կառուցում՝ Սիսիան-Քաջարան հատվածում, 4. Բարգուշատի թունելի կառուցում՝ Սիսիան-Քաջարան հատվածում: ՀՀ-ին վերաբերող 5-րդ ծրագիրը ներկայացված է 2-րդ խմբի տակ (հիմնական տարածքների որակական բնութագրերի բարելավում և այլընտրանքային վայրերի զարգացում միջանցքի ընդհանուր թողունակությունը մեծացնելու նպատակով), դա Երասխ-Մեղրի-Հորադիզ երկաթուղային հատվածի կառուցման ծրագիրն է:

Նախագծերի ցանկի Վրաստանի ենթաբաժնում կա մեկ ծրագիր՝ նշված 1-ին խմբի տակ (առաջնահերթ նախագծեր): Դա Ռազմավիրական մայրուղու արդեն մեզ քաջածանոթ Քվեշեթի-Կոբի հատվածում ճանապարհների, թունելների և կամուրջների կառուցման խոշոր նախագիծն է: Ռուսաստանի ենթաբաժնում Ռազմավիրական մայրուղուն առնչվող նախագծերը երկուսն են, երկուսն էլ նշված 1-ին խմբի տակ (առաջնահերթ նախագծեր). 1. Վերին Լարսի միջազգային ավտոճանապարհային անցակետի վերակառուցում. II փուլ, 2. «Վերին Լարս» միջազգային անցակետին կից ճանապարհային սպասարկման օբյեկտների, տրանսպորտային լոգիստիկ կենտրոնի, ենթակառուցվածքների կառուցում[33]: Ըստ նախատեսվող պլանի՝ «Վերին Լարս» միջազգային անցակետի ռուսական կողմում կտեղակայվեն ճանապարհային սպասարկման օբյեկտները և տրանսպորտային լոգիստիկ կենտրոնները: Նախատեսվում է կառուցել բաց և փակ ժամանակավոր պահեստներ, այդ թվում՝ փչացող ապրանքների համար, շարժական տեսչական և տեսչական համալիրի համար տեղամաս (գոտի), վարորդների համար հյուրանոց, տրանսպորտային միջոցների համար բաց ավտոկայանատեղի և այլն: Նախատեսվում է ստեղծել «էլեկտրոնային հերթերի» համակարգ: Նախագծով ակնկալվող արդյունքը լինելու է Ռուսաստանի, Բելառուսի, Վրաստանի, Հայաստանի, Թուրքիայի և Իրանի միջև «Հյուսիս-Հարավ» ավտոճանապարհով փոխադրվող ապրանքների փոխադրման, պահպանման և մաքսազերծման պայմանների ստեղծումը[34]:

«Հյուսիս-Հարավ» ՄՏՄ-ի Արևմտյան երթուղու՝ Ռազմավիրական մայրուղուն առնչվող նախագծերից է կրկին 1-ին խմբի տակ (առաջնահերթ) նշված նախագիծը՝ Վլադիկավկազի շրջանցիկ ավտոճանապարհի շինարարությունը: 10-ից 25 կմ երկարությամբ նոր հատվածը գտնվում է Р-217 «Կովկաս» (Վլադիկավկազ - Մախաչկալա - Ադրբեջանի հետ սահման) ավտոմայրուղու վրա, որը կարևոր նշանակություն ունի «Հյուսիս-Հարավ» ՄՏԿ-ի Արևմտյան երթուղով ճանապարհային բեռնափոխադրումների իրականացման համար: Վլադիկավկազ քաղաք մուտքը խոչընդոտ է ինչպես «Հյուսիս-Հարավ» ՄՏԿ-ի ողջ Արևմտյան երթուղու, այնպես էլ «Վերին Լարս» միջազգային անցակետով Ռուսաստան-Վրաստան-Հայաստան ճանապարհային երթուղու համար: Ծրագրով ակնկալվում է թողունակության, արագության և երթևեկության անվտանգության բարձրացում, «Հյուսիս-Հարավ» ՄՏԿ-ով բեռների առաքման ժամանակի կրճատում, «Վերին Լարս» միջազգային անցակետով Ռուսաստան-Վրաստան-Հայաստան երթուղու թողունակության ավելացում[35]:

Մեր կողմից քննարկվող Ռազմավիրական մայրուղին, ինչպես տեսանք, հանդիսանում է «Հյուսիս-Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի բարդ համակարգի մի մասը, և վերջինիս արդիականացման խնդիրը ներառված է «Հյուսիս-Հարավ» ՄՏՄ-ի Արևմտյան երթուղու զարգացման առաջնահերթ ծրագրերի ցանկում:

Ամփոփում

Ռազմավիրական մայրուղին, իբրև քաղաքակրթական, աշխարհաքաղաքական և ռազմավարական իմաստով ուղղահայաց առանցքի եզակի տարանցիկ ուղի, ոչ միայն շարունակում է պահպանել իր կարևոր դերը, այլև ձեռք է բերել նոր ազդեցություն: Հանդիսանալով Սանկտ Պետերբուրգից մինչև Պարսից ծոց և Հնդկաստան ձգվող «Հյուսիս-Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի Արևմտյան երթուղու բաղկացուցիչ մաս՝ Ռազմավիրական մայրուղին ներառված է խոշորագույն նախագծերում, ինչի արդյունքում թե՛ մայրուղու, թե՛ վերջինիս վրա գտնվող «Կազբեգ»-«Վերին Լարս» միջազգային ավտոմոբիլային անցակետում իրականացվում են Ռազմավիրական ճանապարհի պատմության մեջ նախադեպը չունեցող գերարդիականացման ծրագրեր: Հավելենք, որ «Կազբեգ»-«Վերին Լարս» անցակետը ռուս-վրացական ցամաքային սահմանի միակ գործող անցակետն է: Ռազմավիրական մայրուղին իր նշված անցակետով նաև միակն է, որը ցամաքային կապով ՀՀ-ն կապում է իր դաշնակից ՌԴ-ի հետ:

Այդպիսով, Ռազմավիրական մայրուղին իր նոր կարգավիճակով և նշանակությամբ ուղիղ կերպով հակադրվում է թուրք-ադրբեջանական հորիզոնական առանցքի հետ: Մայրուղու աճող ազդեցությունը լրջագույն հիմք է ինչպես Ռուսաստանի, Վրաստանի ու Իրանի, այնպես էլ ՀՀ-ի համար՝ թյուրքական ահագնացող էքսպանսիան չեզոքացնելու գործում: ՀՀ իշխանությունները, ցավոք, թե՛ քաղաքակրթական, թե՛ ռազմավարական, թե՛ անվտանգության տեսանկյունից ՀՀ-ին թթվածնի պես անհրաժեշտ ուղղահայաց առանցքի փոխարեն մոլեգին կերպով ընտրել են հորիզոնական՝ թուրք-ադրբեջանական մահաբեր ուղին:

Հղումներ

1 Путешествіе въ Арзрумъ во время похода 1829 года (изъ сочиненій Пушкина), Санктпетербургъ, 1855, с. 5-23.
2 Խաչի լեռնանցքն անունը ստացել է 1824 թվականին, երբ այնտեղ քարե խաչ կանգնեցվեց՝ նշելու անցակետը:
3 Станислав Тарасов, Верхний Ларс. Зачем Грузия расширяет погранпереход с Россией, https://regnum.ru/article/3786945 (մուտք՝ 05.06.2023):
4 Ռազմավիրական մայրուղու վրա գտնվող միջազգային անցակետի վրացական հատվածը պաշտոնապես կոչվում է «Կազբեգ» (Վրաստանի համանուն շրջանի անունով): Այդուհանդերձ, Վրաստանում պաշտոնականացված է նաև անցակետի 2-րդ անունը՝ «Դարիալ» (համանուն կիրճի անունով): Վրաստանի միգրացիայի հարցերով կառավարական հանձնաժողովի պաշտոնական կայքի Վրաստանի սահմանային անցակետերը ներկայացնող բաժնում, օրինակ, տվյալ անցակետը, իբրև միջազգային/ավտոմոբիլային կատեգորիայի անցակետ, նշված է երկու անունով՝ Կազբեգ / Դարիալ [տե՛ս Ծոցրացուոն Նայոտեթա Նամտավրոթո Յոմոնսոա, Նայվրտեվելոն Նասաեզրո գամթարո Ֆեղեվթեբո, https://migration.commission.ge/index.php?article_id=168&clang=0 (մուտք՝ 02.08.2024)]. Արդյունքում՝ տվյալ անցակետով անցնող քաղաքացիների անձնագրերում դրվող ելքի/մուտքի կնիքների վրա նշվում է «Դարիալ»: Մենք այսուհետ անցակետը նշելի կօգտագործենք միայն «Կազբեգ» անվանումը:
5 Перенаправленный взрыв, Грузияи Южная Осетия обвиняют друг друга в убийстве Олега Алборова, источник: https://www.kommersant.ru/doc/688852 (մուտք՝ 15.03.2024).
6 Завершится реконструкция МАПП «Верхний Ларс» на границе с Грузией, https://ria.ru/20090505/169968254.html (մուտք՝ 05.06.2023):
7 Грузия открыла КПП на границе с Россией, https://ria.ru/20090904/183707467.html (մուտք՝ 05.06.2023): Անցակետը կառուցվել էր ԱՄՆ կառավարության կողմից ֆինանսավորվող Վրաստանի սահմանների անվտանգության և ամրապնդման ծրագրի շրջանակներում: Կառուցման համար հատկացվել է 2,4 մլն դոլար, որը ղեկավարել է ԱՄՆ բանակի ինժեներական կորպուսը: Այդ իսկ պատճառով էլ բացման արարողությանը, ի թիվս Վրաստանի ՆԳՆ պաշտոնյաների, ներկա էր նաև Վրաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Տեֆտը:
8 Открыто международное сообщение на таможенном посту МАПП Верхний Ларс, https://yutu.customs.gov.ru/news/document/36962 (մուտք՝ 05.06.2023).
9 Винокуров Е. (руководитель авторского коллектива), Ахунбаев А., Забоев А., Усманов Н., Международный транспортный коридор «Север — Юг»: инвестиционные решения и мягкая инфраструктура, Доклады и рабочие документы 22/2, Евразийский банк развития, Алматы, Москва, 2022, с. 22.
10 Пропускной пункт «Верхний Ларс» возобновит работу после реконструкции, https://www.rbc.ru/society/15/06/2023/648918669a79471ceec83206?fbclid=IwAR0a8RadqRAuDEfWfNWNgOEtx0_fJXooNy0j2xoYdjmQGysZPm2AAXP_9Y8 (մուտք՝ 19.06.2023).
11 ֆոնենտա նամոնսոտրոն Ցեմոսավելոն նամնանչոնոն գանցնադեթա, https://www.rs.ge/NewsArchive?newsId=978# (մուտք՝ 19.06.2023).
12 2006-2009 թթ. ժամանակահատվածում ՀՀ արտաքին առևտրի վրա ռուս-վրացական հարաբերությունների թողած ազդեցության մասին տե՛ս Ա. Փախլյան, Ռուս-վրացական հարաբերությունների ազդեցությունը ՀՀ արտաքին առևտրի վրա, Լրաբեր հասարակական գիտությունների, N 3, Երևան, 2010, էջ 125-138:
13 О встрече статс-секретаря – заместителя Министра иностранных дел России Г.Б.Карасина со специальным представителем премьер-министра Грузии по вопросам отношений с Российской Федерацией З.Абашидзе, https://mid.ru/ru/maps/ge/1594833/ (մուտք՝ 23.07.2024). ՌԴ արտգործնախարարության պաշտոնական հաղորդագրության մեջ նաև նշված էր, որ աշխատանքները շարունակվում են գյուղատնտեսական մթերքների մատակարարումները վերսկսելու ուղղությամբ:
14 О встрече статс-секретаря - заместителя Министра иностранных дел России Г.Б.Карасина со спецпредставителем Премьер-министра Грузии по вопросам отношений с Российской Федерацией З.Абашидзе, https://mid.ru/ru/maps/ge/1628035/ (մուտք՝23.07.2024).
15 Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքների նախարար Իրակլի Կարսելաձեն 2023 թ. դեկտեմբերի 2-ին հայտարարել է, որ վրաց-ռուսական սահման տանող մայրուղու Քվեշեթի-Կոբի հատվածի վրա ինը կիլոմետրանոց թունելի շինարարությունը կավարտվի 2024 թ. փետրվարին, իսկ թունելում կսկսվեն բարելավման աշխատանքները [տե՛ս Строительство самого длинного тоннеля к границе Грузии с Россией – последние данные, https://sputnik-georgia.ru/20231202/stroitelstvo-samogo-dlinnogo-tonnelya-k-granitse-gruzii-s-rossiey---poslednie-dannye-284661079.html (մուտք՝ 06.04.2024)].
16 Սայարթվելոն Ռեգիոնոն գանցոտարեգնիսա դա Ինֆրասթրուկտուրոն Սամոնիսթրո, Սայարթվելոն Սաավտոմոբիլո գեցեգնի դեպարտամենտո, Քվեշեթի-Յոբնի 9 կմ-իանո գցիրաբո ուկցի 5 կմ-ցա գաչրիլո, http://www.georoad.ge/?lang=geo&act=news&func=menu&uid=1674808507&pid=1340628946 (մուտք՝ 21.06.2023).
17 Строительство самого длинного тоннеля к границе Грузии с Россией – последние данные, https://sputnik-georgia.ru/20231202/stroitelstvo-samogo-dlinnogo-tonnelya-k-granitse-gruzii-s-rossiey---poslednie-dannye-284661079.html (մուտք՝06.04.2024).
18 Китайский чудо-тоннель возле границы с Россией – дорога к Ларсу станет безопаснее, https://sputnik-georgia.ru/20211019/kitayskiy-chudo-tonnel-vozle-granitsy-s-rossiey--doroga-k-larsu-stanet-bezopasnee-260637621.html (մուտք՝ 21.06.2023).
19 Սայարթվելոն Ստատիստիկոն Երովնեբուլո Նամնանչոնոն, Սայարթվելոն Սագարեո ցաչրոբա Սայարթվելոշի, 2022 წელი (წინასწარი შედეგები), 20.01.2023, გვ. 18, 11, https://www.geostat.ge/media/50860/%E1%83%A1%E1%83%90%E1%83%A5%E1%83%90%E1%83%A0%E1%83%97%E1%83%95%E1%83%94%E1%83%9A%E1%83%9D%E1%83%A1-%E1%83%A1%E1%83%90%E1%83%92%E1%83%90%E1%83%A0%E1%83%94%E1%83%9D-%E1%83%95%E1%83%90%E1%83%AD%E1%83%A0%E1%83%9D%E1%83%91%E1%83%90---2022-%E1%83%AC%E1%83%94%E1%83%9A%E1%83%98.pdf (մուտք՝ 21.06.2023)]:
20 Սայարթվելոն Ստատիստիկոն Երովնեբուլո Նամնանչոնոն, Սայարթվելոն Սագարեո ցաչրոբա Սայարթվելոշի 2023 წელი (წინასწარი), გვ. 10, https://www.geostat.ge/ka/single-news/3052/sakartvelos-sagareo-vachroba-2023-tseli (մուտք՝ 24.07.2024).
21 2023 წელს საქართველოში საგარეო ვაჭრობა 12.5%-ით გაიზარდა, https://civil.ge/ka/archives/578283 (մուտք՝ 24.07.2024), հմմտ՝ Սայարթվելոն Ստատիստիկոն Երովնեբուլո Նամնանչոնոն, Սայարթվելոն Սագարեո ցաչրոբա Սայարթվելոշի 2023 წელი (წინასწარი), https://www.geostat.ge/ka/single-news/3052/sakartvelos-sagareo-vachroba-2023-tseli (մուտք՝ 24.07.2024).
22 2023 թ. օգոստոսից արգելվել է ամերիկյան ավտոմեքենաների արտահանումը Վրաստանից Ռուսաստան, իսկ սեպտեմբերից՝ եվրոպական մեքենաների, ինչը հանգեցրել է ուղղակի արտահանման նվազմանը [Ռա գայոդա Սայարթվելոմ Ռուսետշի 2023 წელს? - անգարոշո, https://bm.ge/news/ra-gayida-saqartvelom-rusetshi-2023-tsels-angarishi (մուտք՝ 24.07.2024)]:
23 Սայարթվելոն Ստատիստիկոն Երովնեբուլո Նամնանչոնոն, Սայարթվելոն Սագարեո ցաչրոբա Սայարթվելոշի 2023 წელი (წინასწარი), გვ. 17, https://www.geostat.ge/ka/single-news/3052/sakartvelos-sagareo-vachroba-2023-tseli (մուտք՝ 24.07.2024).
24 Նույն տեղում:
25 Международный транспортный коридор «Север – Юг» (справка), https://www.mid.ru/ru/foreign_policy/economic_diplomacy/1537456/ (մուտք՝ 25.07.2024).
26 Роза Байрамлы, Как МТК «Север-Юг» повлиял на развитие отношений России и Азербайджана, https://vestikavkaza.ru/analytics/kak-mtk-sever-ug-povlial-na-razvitie-otnosenij-rossii-i-azerbajdzana.html#top (մուտք՝ 27.07.2024). Հետաքրքրական է, որ ադրբեջանցու սույն հոդվածը նույն վերնագրով տեղ է գտել նաև Անկախ Պետությունների Համագործակցության պաշտոնական ինտերնետ պորտալում [տե՛ս Интернет-портал СНГ, https://e-cis.info/news/566/114169/ (մուտք՝ 27.07.2024)].
27 Ըստ ՌԴ արտգործնախարարության տեղեկանքի՝ Կասպից ծովի արևելյան ափի երկայնքով (Գորգան (ԻԻՀ) - Էտրեկ - Բերեքեթ (Թուրքմենստան) - Ուզեն (Ղազախստան) երթուղին հանդիսանում է «Հյուսիս-Հարավ» ՄՏՄ-ի այլընտրանքային երկաթուղային նախագիծը, որի վերաբերյալ համաձայնագիրը ստորագրվել է 2007 թ. հոկտեմբերին Թեհրանում՝ մերձկասպյան երկրների ղեկավարների հանդիպման ժամանակ: Նոր երկաթուղային գիծը կրճատում է արևելյան երթուղին 600 կմ-ով: Ճանապարհի երկարությունը 677 կմ է, որից Ղազախստանում՝ 137 կմ, Թուրքմենստանում՝ 470 կմ, Իրանում՝ 70 կմ: 2011 թ. նոյեմբերին ավարտվել է ղազախական հատվածի շինարարությունը [տե՛ս Международный транспортный коридор «Север – Юг» (справка), https://www.mid.ru/ru/foreign_policy/economic_diplomacy/1537456/ (մուտք՝ 25.07.2024)]:
28 Что такое транспортный коридор «Север—Юг», https://www.kommersant.ru/doc/6679748 (մուտք՝ 25.07.2024).
29 Винокуров Е. (руководитель авторского коллектива), Ахунбаев А., Забоев А., Усманов Н., Международный транспортный коридор «Север — Юг»: инвестиционные решения и мягкая инфраструктура, с. 5, 34, 37, 40.
30 Նույն տեղում, էջ 40, 43:
31 Նույն տեղում, էջ 6, 40-41:
32 Հայաստանում, Ղազախստանում և Ռուսաստանում նախատեսվում է իրականացնել 79 ծրագիր (5-ը՝ Հայաստանում, 22-ը՝ Ղազախստանում, 52-ը՝ Ռուսաստանում) 21,8 մլրդ դոլար ընդհանուր գումարով, որը կազմում է միջանցքի զարգացման բոլոր ներդրումների 53%-ը: «Հյուսիս-Հարավ» ՄՏՄ-ի զարգացման համար անհրաժեշտ բոլոր ներդրումների 34%-ը նախատեսված է իրանական ենթակառուցվածքների համար:
33 Винокуров Е. (руководитель авторского коллектива), Ахунбаев А., Забоев А., Усманов Н., Международный транспортный коридор «Север — Юг»: инвестиционные решения и мягкая инфраструктура, с. 39, 44, 56, 66.
34 Նույն տեղում, էջ 67:
35 Նույն տեղում, էջ 75:

Իրանա-իսրայելական հակամարտությունն ու Ադրբեջանի դիրքորոշումը

Լիանա Պետրոսյան
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ավագ լաբորանտ, դասախոս, պատմական գիտությունների թեկնածու

Մերձավոր Արևելքում քաղաքական լանդշաֆտը նշանավորվում է շարունակական հակամարտություններով և փոփոխվող դաշինքներով: Աշխարհի ուշադրության կենտրոնում են Իրան-Իսրայել լարվածությունը, Իսրայելի կողմից Պաղեստինի բնակչության կոտորածը, Սիրիայի քաղաքացիական պատերազմը և Պարսից ծոցում տեղի ունեցող գործընթացները:

Իր հերթին, Հարավային Կովկասն անմիջականորեն իր վրա է կրում մերձավորարևելյան զարգացումների հետևանքները: Տարածաշրջանի երկրները՝ Ադրբեջանը, Հայաստանը և Վրաստանը, ուղղակի և անուղղակի կապված են Մերձավոր Արևելքի ներտարածաշրջանային և արտատարածաշրջանային դերակատարների հետ, ուստի, այս կամ այն կերպ իրենք էլ ազդում կամ ազդեցություն են կրում վերոնշյալ գործընթացներից: Որքան էլ որ Ադրբեջանն ու տարբեր քաղաքական շրջանակներ հայտարարեն, թե Արցախի հարցը լուծված է, ակնհայտ է, որ արցախյան հիմնախնդիրը շարունակում է հանդիսանալ հարավկովկասյան քաղաքական զարգացումների կարևոր բաղադրիչներից մեկը, իսկ հակամարտությունն էլ շարունակվում է Ադրբեջանի և Հայաստանի միջև ընդհատվող բախումներով: Վրաստանը նուրբ հավասարակշռություն է պահպանում Արևմուտքի և Ռուսաստանի հետ հարաբերությունների միջև, սակայն ակնհայտ է, որ գալիք ընտրությունները խախտելու են այդ հավասարակշռությունը՝ հանգեցնելով ներքաղաքական փոփոխությունների: Տարածաշրջանի վրա ազդում է նաև ավելի լայն աշխարհաքաղաքական մրցակցությունը, որը ներառում է Ռուսաստանը, Թուրքիան և արևմտյան երկրները:

Վերոնշյալ գործընթացների համատեքստում բավականին հետաքրքիր և անկանխատեսելի զարգացումներով է լի Իրանի և Իսրայելի միջև հակամարտությունը, որի բաղադրիչները ձևավորում են ներկա իրավիճակը: Նախ, Իրանի միջուկային ծրագիրն այս երկրի հետ լարվածության հիմնական խնդիրներից է, քանի որ Իսրայելն այն դիտարկում է որպես իր գոյության սպառնալիք և, անգամ, ռազմական գործողություններով է սպառնացել Իրանին:

Իրանն աջակցում է տարածաշրջանում որոշ խմբավորումների, ինչպիսիք են Հեզբոլլահը Լիբանանում և ՀԱՄԱՍ-ը Գազայում, որոնք, ըստ իսրայելական իշխանությունների, ուղղակիորեն սպառնում են իր անվտանգությանը: Իսրայելը հաճախակի գործողություններ է իրականացնում այդ խմբավորումների և նրանց ղեկավարների դեմ, որոնցից վերջինը՝

Իրանի տարածքում ՀԱՄԱՍ-ի քաղբյուրոյի ղեկավար Իսմայիլ Հանիայի սպանությունն էր: Անգամ վարկածներ կային, թե հրթիռային հարձակումը Ի. Հանիայի գտնվելու վայրի ուղղությամբ իրականացվել է Ադրբեջանի տարածքից: Հրեա բլոգեր Ռոման Ցիպինը, անդրադառնալով դրան՝ նշել է, որ Ադրբեջանն Իսրայելի ռազմական դաշնակիցն է և որպես դաշնակից՝ կատարել է իր պարտավորությունները[1]:

Հետաքրքիր է, որ Իսրայելի և մի քանի արաբական երկրների միջև «Աբրահամի համաձայնագիր»-ը[2] արդեն իսկ փոխել էր տարածաշրջանային հավասարակշռությունը, քանի որ արաբական որոշ երկրներ կարգավորել էին հարաբերություններն Իսրայելի հետ՝ չնայած Իրանի ընդդիմությանը: Այստեղ երկրորդական չէ նաև ԱՄՆ-ի դերակատարումը, որը հակամարտությունը կառավարելու դիվանագիտական ջանքեր է ներդնում՝ հավասարակշռելով ճնշումն Իրանի վրա և, միաժամանակ, փորձելով զսպել Իսրայելի ռազմական գործողությունները:

44-օրյա պատերազմից հետո Իրանա-իսրայելական հակամարտության արտաքին դեկատարներից է Ադրբեջանը, որը, ուզած թե չուզած, պետք է վճարի Արցախի բռնազավթման ժամանակ Իսրայելից

Ս. Շոյգուն և Իրանի նախագահ Փեզեշքիանը

ստացած աջակցության գինը: Այս համատեքստում Ադրբեջանի դիրքորոշման վրա ազդում են նաև նրա ռազմավարական շահերը և տարածաշրջանային զարգացումների դինամիկան:

Նախ, ռազմական և տեխնոլոգիական համագործակցության տեսանկյունից Ադրբեջանն ամուր գործընկերություն է հաստատել Իսրայելի հետ, մասնավորապես պաշտպանության և տեխնոլոգիաների ոլորտներում: Իսրայելը Ադրբեջանին ռազմական տեխնիկայի և տեխնոլոգիաների, այդ թվում՝ անօդաչու թռչող սարքերի և հակահրթիռային պաշտպանության համակարգերի հիմնական մատակարարն է: Այս համագործակցությունը մասամբ պայմանավորված է Ադրբեջանի ռազմատենչ քաղաքականությամբ, հաշվի առնելով նրա տարածքային պահանջները Հայաստանի նկատմամբ:

Մյուս կողմից, Ադրբեջանի էներգետիկ ռեսուրսները կարևոր նշանակություն ունեն ինչպես տարածաշրջանային, այնպես էլ համաշխարհային շուկաների համար: Նրա էներգակիրների, մասնավորապես նավթի և գազի արտահանումը շատ կարևոր է Իսրայելի համար: Ադրբեջանի էներգետիկ ռազմավարությունը ներառում է շուկայի և գործընկերների դիվերսիֆիկացումը, ինչն ազդում է այդ երկրի աշխարհաքաղաքական դիրքավորման վրա:

Հատկանշական է, սակայն, որ Ադրբեջանի հարաբերություններն Իսրայելի հետ զգալի բարդացնում են նրա հարաբերությունները Իրանի հետ: Իրանը մտահոգություն է հայտնել Ադրբեջանի և Իսրայելի միջև ռազմական համագործակցության վերաբերյալ՝ այն դիտարկելով որպես իր անվտանգության համար պոտենցիալ սպառնալիք: Իրանը մեղադրել է Ադրբեջանին Իրանի անվտանգությանը սպառնացող իսրայելական գործողություններին մեղսակից լինելու մեջ: Իրանական կողմը բազմիցս ահազանգել է, որ Իսրայելն օգտագործում է Արցախի բռնազավթված տարածքները՝ հակահիրանական գործողությունների համար: Ադրբեջանը սահմանակից է Իրանին և պետք է զգուշավոր քաղաքականություն վարի՝ խուսափելով Թեհրանին սադրելուց: Ակնհայտ է, որ Ադրբեջանը գնահատում է Իսրայելի հետ իր ռազմական և տեխնոլոգիական կապերը, միևնույն ժամանակ, ձգտում է կայուն հարաբերություններ պահպանել Իրանի հետ՝ աշխարհագրական և տնտեսական նկատառումներից ելնելով:

Իսրայելի հետ Ադրբեջանի ջերմ համագործակցությունը կարող է մի շարք հետևանքներ ունենալ Իրան-Ադրբեջան հարաբերությունների վրա: Նախ, Իրանը կարող է Իսրայելի հետ Ադրբեջանի սերտ կապերը դիտել որպես ուղղակի սպառնալիք, ինչն էլ, անկասկած, սրելու է տարածաշրջանային լարվածությունը: Սա կարող է հանգեցնել դիվանագիտական լարվածության և Իրանի կողմից պոտենցիալ տնտեսական կամ քաղաքական հետևանքների:

Բացի այդ, Իրանը կարող է մեծացնել իր հսկողությունն ու անվտանգային միջոցառումներն Ադրբեջանի հետ սահմանի երկայնքով, և կարող է գաղափարական ճնշում գործադրել Ադրբեջանի վրա:

Իրանի և Իսրայելի միջև շարունակվող լարվածությունն ուղղակիորեն ազդում է տարածաշրջանային կայունության վրա՝ ներգործելով նաև Ադրբեջանի անվտանգության և դիվանագիտական

Իսմայիլ Հանիա

ռազմավարության վրա: Իրանա-իսրայելական հակամարտության համատեքստում Ադրբեջանի դիրքավորումը, անկասկած, ազդելու է Ադրբեջանի տարածաշրջանային դերի և հարևան երկրների հետ փոխգործակցության վրա: Ասվածի վառ ապացույցը վերջերս Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգույի այցն էր Հարավային Կովկաս: Այցը, կարծես թե, ընդգծեց Ռուսաստանի հանձնառությունը Հարավային Կովկասում իր ռազմական և անվտանգային ներկայությունը պահպանելու հարցում: Այս այցը, հավանաբար, ներառում էր քննարկումներ Հայաստանի և տարածաշրջանային այլ գործընկերների հետ հարաբերությունների կարգավորման շուրջ:

Այցելելով Հարավային Կովկաս՝ Ս. Շոյգուն, կարելի է ենթադրել, որ վերահաստատեց Ռուսաստանի դերը՝ որպես տարածաշրջանային անվտանգության և աշխարհաքաղաքականության առանցքային խաղացողի՝ ընդգծելով Մոսկվայի ռազմավարական շահերը Հարավային Կովկասում:

Այցը տեղի է ունեցել Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանային լարվածության ֆոնին, ուստի այն կարող էր ուղղված լինել այս լարվածությունը կառավարելուն՝ ամրապնդելով Ռուսաստանի դիրքերը որպես միջնորդ և խաղաղապահ: Ըստ էության, ներգրավելով հայ պաշտոնյաների և տարածաշրջանային այլ դերակատարների՝ Ռուսաստանը կարող է օգտագործել իր ազդեցությունը հայ-ադրբեջանական հարաբերությունների վրա:

Հատկանշական է, որ Ս. Շոյգուի այցը ծառայեց որպես Հարավային Կովկասում Ռուսաստանի շարունակական ռազմական և աշխարհաքաղաքական հզորության ցուցադրություն, հատկապես Արևմուտքի աճող ներգրավվածության և տարածաշրջանային մրցակցության պայմաններում: Ասվածի համատեքստում ՌԴ պաշտպանության նախարարի այցը կարելի է դիտարկել որպես տարածաշրջանում արևմտյան ազդեցությանը հակակշռելու Ռուսաստանի ավելի լայն ռազմավարության մաս, որն աճում է դիվանագիտական և տնտեսական տարբեր նախաձեռնությունների միջոցով:

Ընդհանուր առմամբ, Ս. Շոյգուի այցը Հարավային Կովկաս ընդգծեց Ռուսաստանի շարունակական ռազմավարական շահերը և ռազմական ներկայությունը տարածաշրջանում, միաժամանակ անդրադառնալով տարածաշրջանային անվտանգության խնդիրների վրա և ամրապնդելով դրա ազդեցությունը զարգացող աշխարհաքաղաքական դինամիկայի խորապատկերին:

Հղումներ

[1] Азербайджан и Израиль вместе устранили Хание: утверждает израильский блогер (Видео), https://tolishmedia.com/2024/08/50680, 02.08.2024.

[2] 2020թ. սեպտեմբերին Սպիտակ տան սիզամարգում ստորագրված «Աբրահամի համաձայնագիր»-ը առաջին անգամ կարգավորեց դիվանագիտական հարաբերությունները Իսրայելի և արաբական երկու պետությունների՝ Արաբական Միացյալ Էմիրությունների և Բահրեյնի միջև, որոնց օրինակին հետևեցին Մարոկկոն և Սուդանը:

Իրան-Իսրայել առճակատումը և տարածաշրջանային նոր մարտահրավերները

Նարե Գևորգյան
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դասախոս

Հուլիսի 31-ին Թեհրանում ՀԱՄԱՍ շարժման քաղբյուրոյի ղեկավար Իսմայիլ Հանիայի սպանությունից հետո Մերձավոր Արևելքում սկիզբ առավ լարվածության մի նոր ալիք, որի գլխավոր դերակատարները Իսրայելն ու Իրանն են: Թեև Իսրայելը ո՛չ հաստատել, ո՛չ հերքել է իր մասնակցությունը, և՛ Իրանը, և՛ ՀԱՄԱՍ-ը վերջինիս սպանության մեջ մեղադրել են Իսրայելին: Այս մեղադրանքը մտավախություն է առաջացրել, որ Իսրայելի և ՀԱՄԱՍ-ի միջև հակամարտությունը Գազայի հատվածում կարող է վերածվել ավելի լայն պատերազմի՝ պայքարի մեջ ներքաշելով տարածաշրջանային այլ խաղացողների:

Այնուամենայնիվ, միջազգային հանրությունը գրեթե կասկած չունի, որ Թեհրանի պատասխան հարվածը կլինի «ավելի դաժան», քան ապրիլյան հարձակումը, որի ժամանակ նա արձակեց ավելի քան 300 անօդաչու թռչող սարք և հրթիռ՝ ի պատասխան Սիրիայում իրանական դիվանագիտական հաստատության վրա Իսրայելի հարձակման:

ԻԻՀ նոր նախագահ Մասուդ Փեզեշքիանը, որի երդման արարողությանը մասնակցելու համար էր Թեհրան ժամանել Իսմայիլ Հանիան, թվիթերյան իր միկրոբլոգում, վերջինիս մահվան վերաբերյալ գրել է. «Իրանի և Պաղեստինի երկու հպարտ ժողովուրդների միջև կապն ավելի ամուր կլինի, քան նախկինում, իսկ դիմադրության ու ճնշվածների պաշտպանության ճանապարհը կանցնի ավելի ամուր, քան երբևէ: Իրանի Իսլամական Հանրապետությունը կպաշտպանի իր տարածքային ամբողջականությունն ու պատիվը, և կստիպի ահաբեկիչներին զղջալ իրենց վախկոտ արարքի համար»[1]:

Մասուդ Փեզեշքիանի նախընտրական շտաբի լրատվության հարցերով խորհրդական Ալիասղար Շաֆիյանն էլ հարցազրույցներից մեկում նշել է, որ Թեհրանի վրեժխնդրությունը դժվար թե լինի ապրիլյան մի քանի ժամ տևած համազարկի կրկնությունը: Հանիայի սպանությունը «հետախուզության վրա հիմնված առաքելություն էր», և «Իրանի պատասխանը կլինի նույն բնույթի և նույն մակարդակի»[2]:

Իրանի արտգործնախարարի պարտականությունները կատարող Ալի Բաղերի Քանին օգոստոսի 13-ին՝ Իսմայիլ Հանիայի հիշատակի արարողության ժամանակ ևս մեկ անգամ ընդգծել է, որ խախտվել է Իրանի ինքնիշխանությունը, և իրենք անպայման պատասխան կտան սիոնիստական ռեժիմին. «Իսրայելը քաղցկեղ է տարածաշրջանում: Սիոնիստական ռեժիմը անկախ սուբյեկտ չէ, այլ տարածաշրջանում ամերիկյան և արևմտյան քաղաքականության շարունակությունը»[3]:

Թեև ավելի վաղ հաղորդվում էր, որ Իրանը օգոստոսի 5-ին, 8-ին և վերջապես 12-ին հարվածներ կհասցնի Իսրայելին, սակայն մինչ այժմ ոչինչ տեղի չի ունեցել: Թեհրանն այս պահին միայն խաղում է Թել Ավիվի և նրա արևմտյան դաշնակիցների նյարդերի վրա՝ կեղծ ահազանգերի օգնությամբ:

Թեհրանն ամենաբարձր մակարդակով պաշտոնապես հայտարարել է Հանիայի սպանության վրեժը լուծելու մասին և պատրաստվում է դրան, բայց կան մի շարք պատճառներ, թե ինչու է Թեհրանը շարունակում հապաղել:

Մասնավորապես, Իսրայելի շուրջ կրիտիկական մթնոլորտ ստեղծելով և իր դաշնակիցներին լարված պահելով՝ Իրանը ցույց է տալիս, որ ինքը մեծ ուժ է Մերձավոր Արևելքի տարածաշրջանում:

Ժամանակ շահելով՝ նա իր դուռը բաց է պահում Արևմուտքի հետ բանակցությունների համար: Վերջին շաբաթների ընթացքում Միացյալ Նահանգները խաղաղության առաջարկներ է ուղարկել Իրանին, իսկ Ֆրանսիայի և Գերմանիայի վարչապետներն ուղիղ հեռախոսազրույցներ են ունեցել Իրանի նախագահի հետ՝ փորձելով հետ պահել կոշտ պատասխանից: Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի ղեկավարներ Սթարմերը, Մակրոնը և Շոլցը կոչ են արել Իրանին ու նրա դաշնակիցներին զերծ մնալու գրոհներից, որոնք կհանգեցնեն տարածաշրջանային լարվածության սրմանը և վտանգի տակ կդնեն հրադադարի և պատանդների ազատման շուրջ գործարք կնքելու հնարավորությունը, հակառակ դեպքում՝ Իրանն ու դաշնա-

կիցները պատասխանատվության կենթարկվեն: Բնականաբար, դրա դիմաց Թեհրանին որոշակի խոստումներ են տրվում: Սրան ի պատասխան՝ Իրանի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Նասեր Քանանին հայտարարել է, որ Իրանը որևէ մեկից թույլտվություն չի խնդրի սեփական ինքնիշխանությունը պաշտպանելու իրավունքը իրացնելու համար[4]:

Պատասխան գործողությունների հետաձգման միտումներից է նաև ճնշման գործադրումը Իսրայելի վրա: Այնտեղ իշխանության ներսում լարվածությունն աճում է, այդ թվում՝ բանակի և իշխանության միջև, մեծանում են նաև ընդդիմադիր կուսակցությունների ճնշումները:

Պատասխան հարվածը հիմք է հանդիսանում ՀԱՄԱՍ-ի և Իսրայելի միջև հրադադարի շուրջ բանակցությունների համար: Այսինքն՝ Թեհրանը չի ցանկանում դառնալ մի երկիր, որը հարվածելով Իսրայելին՝ խաթարեց խաղաղ բանակցությունները:

Ի վերջո, Իրանը, հետաձգելով պատասխան հարվածները և քաղաքական ու դիվանագիտական արշավ իրականացնելով Իսրայելի դեմ, անում է ամեն ինչ, որպեսզի հարձակումը չհրահրի Թեհրանի դեմ է՛լ ավելի լայնածավալ հարձակում, և մինչ իրանական դիվանագիտությունն ակտիվորեն աշխատում է, պետությունը ժամանակ է շահում, որպեսզի բանակը լիակատար պատրաստության գա: Միևնույն ժամանակ, Իրանի պատասխանը պետք է մանրակրկիտ հաշվարկվի, որպեսզի չփակվեն Արևմուտքի հետ բանակցությունների դռները, ինչը կարող է հանգեցնել պատժամիջոցների չեղարկման: Բարեփոխիչ նախագահ Փեզեշքիանը, ամենայն հավանականությամբ, փորձելու է նվազեցնել արևմտյան տնտեսական պատժամիջոցների հետևանքները և կանխել Իրանի հետագա միջազգային մեկուսացումը:

Ամենայն հավանականությամբ, իրանցիները կարող են հետաձգել հարձակումը նույնիսկ այնքան ժամանակ, քանի դեռ այդ իրադարձությունները չեն մոռացվել: Որովհետև Իրանի ներկայիս ռազմական հնարավորությունների առավելություններից մեկը Իսրայելի և տարածաշրջանում նրա դաշնակից ուժերի նկատմամբ անկանխատեսելի լինելն է: Այդ իսկ պատճառով, հավանական է, որ Թեհրանը չի օգտագործի պաշտոնապես հայտարարված ժամկետները Իսրայելի դեմ հարված հասցնելու ժամանակ: Այստեղ կարևոր է հաշվի առնելը, որ Իրանը կարող է թիրախավորել Իսրայելին տարբեր ձևերով: Թեհրանն ունի վստահված ուժերի ցանց, ներառյալ ՀԱՄԱՍ-ը, Հեզբոլլահը և Եմենի հութիները, և դա Իրանին թույլ է տալիս հարձակվել Իսրայելի հյուսիսում և Կարմիր ծովում գտնվող թիրախների վրա: Ուստի, Իսրայելը պետք է իրանական կողմից առավել լայնածավալ հարձակման պատրաստ լինի: Միաժամանակ, Իսրայելը մտավախություն ունի, որ Իրանը կարող է հարձակման թիրախ դարձնել այն երկրները, որտեղ ծառայություն են մատուցում սիոնիստական ռեժիմի զինվորականները: Հատկապես այն բանից հետո, երբ ԻԻՀ նախագահ Մասուդ Փեզեշքիանն առաջարկեց հարվածներ հասցնել Ադրբեջանի տարածքում գտնվող իսրայելական բազաներին[5], Իսրայելն արգելեց իր զինվորականներին մնալու Ադրբեջանում և Վրաստանում՝ Իրանի կողմից հնարավոր հարվածի սպառնալիքի պատճառով և նրանց հրամայեց անհապաղ վերադառնալ Իսրայել[6]:

Այս ամենի ֆոնին Իսրայելում հասարակական անհանգստությունը հասել է իր պիկին: Փողոցներն օրեցօր ավելի ու ավելի լուռ են դառնում, մարդիկ այստեղ չեն քնում Իրանի հարձակման վախից: Իսրայելում տիրող այս իրավիճակը հիշեցնում է կորոնավիրուսի օրերը, երբ մարդիկ փակվել էին իրենց բնակարաններում և վախենում էին դուրս գալ փողոց:

Այսպիսով, Մերձավոր արևելքի երկու հսկաները այսօր լարվածության մեջ են պահել ամբողջ աշխարհը: Իրան-Իսրայել հակամարտության սրումը տարածաշրջանային գլխավոր վտանգներից մեկն է, որի հետևանքը լայնածավալ պատերազմի սանձազերծումն ու մեծաքանակ մարդկային զոհերն են լինելու: Իրանական կողմի պատասխան հարձակման ուշացումն ու ամենօրյա սպասումները, որոնք ուղեկցվում են վախի մթնոլորտի ծավալմամբ, կարծես յուրօրինակ խաղ լինեն աշխարհի գերտերությունների և, մասնավորապես, Իսրայելի նյարդերի հետ: Ու մինչ բոլորն անհամբեր սպասում են Իրանի պատասխան վրիժառուական գործողությանը, վերջինս հանգիստ ծրագրում է իր հետագա քայլերն ու ևս մեկ անգամ ապացուցում, որ շրջափակված լինելով հանդերձ, ինքը բավականին հաջող պայքարել և պայքարելու է ինչպես տարածաշրջանային, այնպես էլ արտատարածաշրջանային թշնամիների դեմ:

Հղումներ

1. https://x.com/SharghDaily/status/1818551298016391230
2. https://www.washingtonpost.com/world/2024/08/12/iran-israel-attack-haniyeh-assassination/
3. https://www.irna.ir/news/85567132/%D8%A8%D8%A7%D9%82%D8%B1%DB%8C-%D8%B1%DA%98%DB%8C%D9%85-%D8%B5%D9%87%DB%8C%D9%88%D9%86%DB%8C%D8%B3%D8%AA%DB%8C-%D8%A7%D9%85%D8%AA%D8%AF%D8%A7%D8%AF-%D8%B3%DB%8C%D8%A7%D8%B3%D8%AA-%D8%A2%D9%85%D8%B1%DB%8C%DA%A9%D8%A7-%D9%88-%D8%BA%D8%B1%D8%A8-%D8%AF%D8%B1-%D9%85%D9%86%D8%B7%D9%82%D-9%87-%D8%A7%D8%B3%D8%AA
4. https://www.mehrnews.com/news/6194236/%DA%A9%D9%86%D8%B9%D8%A7%D9%86%DB%8C-%D8%A7%DB%8C%D8%B1%D8%A7%D9%86-%D8%AF%D8%B1-%D8%AF%D9%81%D8%A7%D8%B9-%D8%A7%D8%B2-%D8%AD%D8%A7%DA%A9%D9%85%DB%8C%D8%AA-%D9%88-%D8%A7%D9%85%D9%86%DB%8C%D8%AA-%D9%85%D9%84%DB%8C-%D8%AE%D9%88%D8%AF-%D9%82%D8%A7%D8%B7%D8%B9-%D9%88-%D9%85%D8%B5%D9%85%D9%85-%D8%A7%D8%B3%D8%AA
5. https://www.iranintl.com/202408090113
6. https://www.irna.ir/news/85565438/%D9%87%D8%B4%D8%AF%D8%A7%D8%B1-%D8%B1%DA%98%DB%8C%D9%85-%D8%B5%D9%87%DB%8C%D9%88%D9%86%DB%8C%D8%B3%D8%AA%DB%8C-%D8%A8%D9%87-%D9%86%D8%B8%D8%A7%D9%85%DB%8C%D8%A7%D9%86-%D9%85%D9%82%DB%8C%D9%85-%DA%AF%D8%B1%D8%AC%D8%B3%D8%AA%D8%A7%D9%86-%D9%88-%D8%A2%D8%B0%D8%B1%D8%A8%D8%A7%DB%8C%D8%AC%D8%A7%D9%86-%D9%81%D9%88%D8%B1%D8%A7

Գարեգին Խաժակը՝ Կարլ Մարքսի ռասիստական հայացքների քննադատ

Կարէն Խանլարեան
Տեխնիկական գիտությունների դոկտոր, պատմական գիտությունների թեկնածու

ՀՅԴ տեսաբան, խմբագիր, հրապարակախոս, ուսուցիչ, դպրոցի տնօրէն, Մեծ եղեռնի Նահատակ՝ Գարեգին Խաժակն (Զաքալեան - 1867-1915 թթ.) իր «Ինչ է ազգութիւնը» աշխատութեան (Կ. Պոլիս, 1912 թ. եւ Բէյրութ 1974 թ.) երրորդ գլխում, լայն քննարկման առարկայ է դարձրել «Կոմունիստական մանիֆեստ»-ում, ինչպէս նաեւ Կարլ Մարքսի այլ գործերում տեղ գտած գաղափարները՝ «Ազգ» եւ «Հայրենիք» հասկացութիւնների հետ կապուած:

Խաժակը սոյն քննարկումների ընդմիջից վեր հանել եւ քննադատել է Մարքսի ներաշխարհի այնպիսի ծալքեր, որոնք հազուադէպ են հանդիպում մարքսիզմի պաշտօնական գրականութեան մէջ: Գաղափարախօսական եւ տեսաբանական ծալքեր, որոնք էապէս յիշեցնում են նացիզմի, անտիսեմիտիզմի եւ պանթուրքիզմի նման ռասիստական սահմռկեցուցիչ մտայնութիւնները:

Գարեգին Խաժակի կրիտիկական դիրքորոշումները Մարքսի ռասիստական հայացքների հանդէպ խիստ ուշագրաւ են եւ, ինչ խօսք՝ անհուն հպարտութեան առիթ, առ այն, որ հայ նահատակ գաղափարախօսը, աւելի քան մէկ դար յառաջ, ինչպիսի ջանադրութեամբ ծառացել է փոքր ազգերի ոչնչացման գաղափարների դէմ, իրական սոցիալիզմի եւ նրա «գիտական» կոչուած, ամբողջատիրութեան վերածուելու ներքին, բնածին ապականութեամբ օժտուած՝ կեղծ տեսակի միջեւ հստակ ջրբաժան անցկացնելով:

Խմբագրական հպանցիկ միջամտութեամբ, ահաւասիք ընթերցողի ուշադրութեանը եւ դատողութեանն ենք յանձնում Գարեգին Խաժակի հեղինակած «Ինչ է ազգութիւնը» աշխատութեան համապատասխան հատուածը.

«...Արդեօք Մարքսի կարծիքով պիտի վերանայ ազգութիւնն իբր զարգացման, իբր սոցիալիզմի իրականանալուն արգելառիթ մի վնասակար երեւոյթ, թէ պիտի մնայ իբր «Ein Ideales Gut», իբր՝ իդէալական բարիք: Սակայն այդ հարցին մենք կարող ենք գտնել մի կողմնակի պատասխան, երբ քննենք Մարքսի կարծիքը մանր ազգութիւնների եւ նրանց ապագայի վերաբերմամբ:

Այդ առիթով մենք կարող ենք գտնել բաւական նիւթ Մարքսի[1] եւ Էնգելսի[2] գործերի հաւաքածուի մէջ, որ հրատարակուած է Շտուտգարտում, 1902 թուին, «Gessammelte Schriften von K. Marx und Fr. Engels» խորագրով: Բացի այդ մեզ հետաքրքրող հարցի մասին մենք ունենք նաեւ Մարքսի հնագոյն յօդուածներից մէկը. «Հրեաների մասին», տպագրուած 1844 թուին, Պարիզում, «Deutche-Franzosischen Jahabuchern» պարբերական հրատարակութեան մէջ: Նոյն հարցի մասին կան որոշ ակնարկներ նաեւ «Դասակարգային

կռիւը Ֆրանսիայում 1848-50 թուերին», «Յեղափոխութիւն եւ հակայեղափոխութիւն Գերմանիայում» եւ ուրիշ գրքոյկներում: Մի քանի տող էլ, վերջապէս, մենք գտնում ենք Մարքսի հնագոյն գործերից մէկում՝ «Die heilige Familie» (Սրբազան ընտանիք) կամ «քննական քննադատութեան քննութիւնը» գրքում, որ ուղղուած է «Բրունօ Բաուէրի[3] եւ ընկերների դէմ» (1):

1847 թուի վերջերում երեւան եկաւ «Մանիֆէստը», իսկ դրանից քիչ յետոյ, 1849 թուին Մարքսը գրեց իր էապէս նշանաւոր յօդուածը սլաւոնական մանր ազգերի մասին՝ «Der Demokratische Panslavismus» (Դէմոկրատական Համասլաւոնութիւն) վերնագրով (2):

«Յայտնի ռուս փախստական եւ անիշխանական վարդապետութեան սիւներից մէկը հանդիսացող յեղափոխական Միխայիլ Բակունինը[4] 1848 թուին հրատարակել էր մի կոչ, ուղղուած աւստրիական սլաւոնական մանր ազգութիւններին, որոնք կորցրել էին իրենց ազգային անկախութիւնը: Չեխերը, Պալացկու[5] առաջնորդութեամբ, հրաւիրել էին Սլաւոնական համագումար Պրագայում, որին ներկայ էր Բակունինը: Ի զուր նա այդ կոնգրէսում անիշխանական կծու ճառեր էր արտասանում եւ բոլոր ժողովականներն ի զուր էին ընդունում նրա ամէն մի առաջարկը որոտագին ծափահարութիւններով: Վենգրիան ապստամբուած էր, Վիէննայի դեմոկրատիան գլուխ էր բարձրացրել, իսկ սլաւոն (խարվատ) Պան[6] Ելաչիչն[7] օգնում էր Վիէննայի կամարիլլային[8], ընդդէմ Կօշուտ Լայոսի[9], ընդդէմ գերման դեմոկրատիայի, որովհետեւ այդ շարժումն սպառնում էր ոչնչացնել խարվատների ինքնավար իշխանութիւնը:

Շահերի ու գաղափարների այդ գերագոյն հակասութիւնների խառնուածքում, գերման ազատա-

կաններն ու արմատականները երբեք չէին կարող հաշտուել սլաւոն ազգերի ու գործիչների հետ, եթէ նոյնիսկ նրանք լինէին ազատական, արմատական ընկերվարական եւ անիշխանական. ամենայն ինչ որ սլաւոնական էր, ատելի էր գերման ազատամիտ գործիչներին:

Այդ պարագաներում լոյս է տեսնում Բակունինի կոչը, որի մէջ նա սլաւոնական միութիւնն ու դաշնակցութիւնը հիմնաւորելու համար բերում է բազմաթիւ պատճառներ և ապա աւելացնում, որ. «արդարութիւնը, մարդասիրութիւնը, ազատութիւնը եւ այլն նոյնպէս պահանջում է այդ միութիւնը կամ ֆեդերացիան»: Մարքսն անմիջապէս բռնում է այդ «իդէոլոգիական» կամ գաղափարախօսական բառերից. ««Արդարութիւնը», Մարդասիրութիւնը», «Ազատութիւնը» եւ այլն, կարող են հազար անգամ պահանջել այս կամ այն բանը. եթէ դա անհնար է, չի իրականանայ եւ չնայելով այդ ամէնին, կը մնայ «դատարկ ֆրազ»: Արդեօք Բակունինը յանցանք է համարում Ամերիկայի Միացեալ Նահանգների մղած այդ նուաճողական պատերազմը, որը թէեւ խիստ հարուած կը հասցնէր «արդարության» ու «մարդասիրութեան» վրայ հաստատուած նրա թէորիային, բայց որը մղուեց բացառապէս յօգուտ քաղաքակրթութեան: Մի՞թէ դժբախտութիւն է, որ խլեցին մեքսիքացիներից հրաշալի Կալիֆորնիան, որի հետ նրանք չգիտէին թէ ինչ անէին» (3):

«Սքանչելի տրամաբանութիւն մի սոցիալիստի կողմից. որովհետեւ մի արդար, մարդասէր, լաւ բան դժուար է իրականացնել, ուրեմն պիտի լռել... Այդ մեթոտը խիստ ձեռնտու կը լինէր Պլեվէների եւ Համիտների համար: Իսկ յետոյ... Միացեալ Նահանգները յարձակուել եւ նուաճել են Մեքսիկայի Հանրապետութիւնից Կալիֆորնիան, եւ Մարքսն արդարացնում է այդ յարձակողական պատերազմը, որովհետեւ նա մղուած է յանուն քաղաքակրթութեան. կարծես աշխարհում որեւէ բռնակալ մղում է որեւէ պատերազմ, առանց այդպիսի որեւէ բարձր սկզբունքով դիմակաւորուելու: Նապոլէոնը գնում էր տիրելու Բէրլինն ու Վիէննան յանուն քաղաքակրթութեան, Ֆոն Բիլովը[10] Աֆրիկայի Հերերոներին մորթոտել ու լլկել էր տալիս նոյնպէս յանուն քաղաքակրթութեան: Մի՞թէ «Նովոյէ Վրեմիա»-ն[11] նոյն քաղաքակրթութեան տեսակէտից չէ պահանջում կոտորել հայերին, հրեաներին, ուսանողներին:

Տրամաբանական այդ «գեղեցիկ» օրինակից մի երկու էջ յետոյ՝ նա գրում է. «Մենք կրկնում ենք՝ բացի լեհերից, ռուսներից եւ, ծայրայեղ դէպքում, Թուրքիայի սլաւոններից, ոչ մի սլաւոն ժողովուրդ ապագայ չունի լոկ այն հիման վրայ, ու բոլոր մնացած սլաւոնները չունեն պատմական, աշխարհագրական, քաղաքական եւ ինդուստրիական (արդիւնաբերական - ԿԽ) պայմաններ անկախութեան եւ կենսունակութեան համար (էջ 251):

Կրկին երկու էջ յետոյ շարունակում է Մարքսը. «Դեռ դրանից աւելի՝ եթէ աւստրիական սլաւոնները կազմէին մի միաձոյլ կամ կոմպակտ զանգուած, ինչպէս Լեհերը, Մաջարները, Իտալացիները, եթէ նրանք միասին կազմել կարողանային 12-20 միլիոն բնակիչ ունեցող մի պետութիւն, այն ժամանակ նրանց

Գարեգին Խաժակն (Չաբալեան - 1867-1915 թթ.)

յաւակնութիւնները, ինչ էլ որ լինի, կ'ունենային գոնէ լուրջ նշանակութիւն... իսկապէս չափազանց հաճելի կը լինէր Գերմանացիների եւ Մաջարների դրութիւնը, եթէ որ աւստրիական սլաւոնները ձեռք բերէին՝ այսպէս կոչուած՝ իրենց «իրաւունքը»: Սիլեզիայի[12] եւ Աւստրիայի միջեւ չեխօ-մորավեան անկախ պետութիւնը սեպի ձեւով ներս կը մխուէր, իսկ Աւստրիան եւ Շտիրան, «Հարաւային Սլաւոնական Հանրապետութեան» շնորհով, կը կտրուէին իրենց բնական ելքից, այսինքն՝ Ադրիական եւ Միջերկրական ծովերից, իսկ Արեւելեան Գերմանիան նման կը լինէր հացի, կրծոտուած հացի (երեւի մկան կրծոտած հացի – ո՛վ սարսափ, ի՜նչ դժբախտութիւն...-ԳԽ): Եւ այդ ամէնը իբր վարձատրութիւն այն բանի, որ գերմանները ջանք գործ դրին քաղաքակրթելու յամառ չեխերին եւ սլովէններին եւ նրանց երկրին ներմուծեցին առեւտուր, ճարտարարուեստ, արդիւնատու երկրագործութիւն եւ ուսում» (էջ 253-254):

«Գերմանները մի խօսքով քաղաքակրթեցին չեխերին... Ի հարկէ չի կարելի երեւակայել անգամ, որ Մարքսը չգիտէր Բոհէմիայի պատմութիւնը, չգիտէր Յոհան Հուսի[13] փառաւոր կեանքն ու գործունէութիւնը այն ժամանակաշրջանում, երբ գերմանացիները դեռ հլու հնազանդ էին կաթոլիկ եկեղեցուն, նրա այլանդակ ու անբարոյականացուցիչ ազդեցութեանը: Պրագայի հին համալսարանը, Թաբորիաների շարժումները, այն եռուն-զեռուն կեանքն ու յուզումները, որ կազմում են բոհէմեան փառապանծ անցեալը, ի՞նչպէս մոռանալ, ի՞նչպէս ուրանալ եւ ենթադրել, որ այդ ազգն այլեւս անընդունակ է ինքնուրոյն զարգացման, որովհետեւ 12-20 միլիոն թիւ չունի: Ո՛չ, Մարքսն այդ ամէնը լաւ գիտէր, բայց կանխակալ կարծիքը սեփական կառուցուածքը, տնտեսական մատերիալիզմը պահանջել էր այդպէս ասել, եթէ ոչ տնտեսական հիմունքի եւ իդէոլոգիական վերնաշէնքի միաձոյլ, պարզ

եւ արտաքուստ խիստ տրամաբանական տեսութիւնը կը խախտուէր:

Մանր ազգութիւնների դէմ ուղղուած կծու արտայայտութիւնների գլուխ գործոցը կազմում են հետեւեալ բառերը, որոնք աւելի վայել են մի Բիսմարկի, մի Բիլովի, քան «Գիտական» սոցիալիզմի հիմնադրին. «Վերջապէս՝ որտեղ է «յանցանքը», որտեղ է անէծքի արժանի քաղաքականութիւնը այն բանում, որ գերմանները եւ մաջարները, երբ Եւրոպայում խոշոր միապետութիւնները պատմական անհրաժեշտութիւններ էին, միատեղ դարբնեցին այդ բոլոր մանրիկ, խեղճուկ, անօգնական ազգակներին (Nationchen) մի մեծ պետութեան մէջ եւ այդպիսով նրանց ընդունակ դարձրին մասնակցելու պատմական զարգացման, որից նրանք բոլորովին անմաս կը մնային, եթէ որ թողնուած լինէին իրենց գլխի: Ի հարկէ այդպիսի բաները չեն կատարւում առանց բռնի կերպով ոտի տակ տալու մի քանի «ազգային քնքոյշ ծաղիկներ»»:

«Այդ թունալի արհամարհանքը դէպի մանր ազգերը, այդ «խղճուկ», «անօգնական» ածականները Nationchen արհամարհական գոյականի մօտ... Մանր ազգեր... 1-12 միլիոն թուով, բոլորը խղճուկ, բոլորը կլանուելու, ձուլուելու դատապարտուած: Վայ, ուրեմն՝ վրացիներին, հայերին, թաթարներին...: Մանր ազգերը, ասում է Մարքսը, առանց Աւստրիայի եւ Հունգարիայի բռնի գրաւման եւ մի խոշոր քաղաքական միութիւն կազմելուն, երբեք չէին կարող մասնակից լինել պատմական զարգացման: Այստեղ էլ իր տեսութիւնը, ինչ գնով կ'ուզէ լինի, ապացուցելու կիրքը մոլորեցրել է Մարքսին, նրան ստիպել է մոռանալ պատմութիւնը:

Կարծես 1300-ական թուերից ինքնուրոյն ազատ, սակայն այսօր կուլտուրապէս խիստ բարձր կանգնած Զուիցերիան շատ խոշոր պետութիւն է, կարծես նա այսօր, դեռ Մարքսի գրելու ժամանակից 60 տարի անցած՝ 3 միլիոն ազգաբնակչութիւն չունի: Իսկ ինչ ասել Հոլլանդիայի ազգային սքանչելի եւ հերոսութիւններով լի պատմութեան մասին. միթէ Հոլլանդիան 12 միլիոն կամ աւելի բնակիչ ունի: Իսկ հարուստ Բելժիքան, Դանիան, Շվեդեան, Նորվեգիան... Սրանք բոլորն էլ մանր ազգութիւններ են, որոնք, հակառակ Մարքսի մարգարէութեան, ինքնուրոյն կեանք ունեն եւ մասնակից եղան պատմական զարգացման, հասան ամենաբարձր կուլտուրայի, չնայելով որ գերմանները կամ մաջարները միատեղ չդարբնեցին այդ փոքրիկ ազգութիւններին: Ընդհակառակը, Իսպանիան եւ Աւստրիան որքան ուզեցին ձուլել, կլանել Բելժիքային եւ Հոլանդային, չկարողացան, որովհետեւ վերջիններն ապստամբութեան ազգային դրօշը պարզեցին:

Իսկ նրա անպատկառ հեգնութիւնն «ազգային քնքոյշ ծաղիկների» վերաբերմամբ... դա միանգամայն անվայել է Մարքսի նման մի հանճարեղ գիտնականի:

Այդ մասին նա ամիջապէս կցում է հետեւեալը. «Իսկ այժմ քաղաքական կենտրոնացումն աւելի անհրաժեշտ է դառել՝ ճարտարարուեստի, առեւտրի հաղորդակցութեան ուղիների հսկայական պրոցեսի շնորհով»:

Այս տողերն արդէն պարզում են ամբողջ գաղտնիքը: Քաղաքական կենտրոնացումն անհրաժեշտ է ճակատագրօրէն, որովհետեւ տնտեսական կեանքը կենտրոնանում է: Այստեղ արդէն ակներեւ է այն խոշոր թիւրիմացութիւնը, որի մէջ պտոյտ է գալիս Մարքսը, առանց ըմբռնելու ազգութիւնների հարցը: Նա միանգամայն իրաւ է խառնում ազգ եւ պետութիւն գաղափարները: Նա չի ըմբռնում, որ պետութիւնը կարող է մեծանալ, կազմել մի հսկայական ֆեդերատիվ քաղաքական միութիւն, պահպանելով ազգերի միանգամայն ինքնուրոյն զարգացումը, նրանց պետական կիսագերիշխան կեանքը (4): «Այս բոլորը ցոյց են տալիս Մարքսի կոսմոպոլիտիզմը, դրանք ցոյց են տալիս, որ Մարքսը չէր ըմբռնում մարդկային ցեղի ճակատագրօրէն ազգային ձեւերով զարգացումը, որ մարդկութիւնն, իբր մի միաձոյլ ամբողջութիւն, չի կարող գոյութիւն ունենալ: «Մարդկութիւն» - դա մի վերացական ըմբռնում է, իսկ ռէալը կամ իրականն ազգն է, իր ներքին շերտաւորումներով կամ դասակարգերով եւ այդ դասակարգերը կազմող անհատներով:

Մանր ազգերը պիտի ձուլուեն մեծերի մէջ, մեծերն էլ պիտի իրաւ կլանեն: Կենտրոնանում է տնտեսութիւնը, ուրեմն՝ թո՛ղ կենտրոնանան, միաձուլուեն մանր ազգութիւնները, հրամայում է Մարքսը: Իրականութեան մէջ այդպէս կատարուել է թէ ոչ, այդ ոչինչ: Մարքսի համար անհրաժեշտ է կենտրոնացումը եւ նա այդ ակնոցներով է նայում ամէն ինչի վրայ:

Ինչպէս ասացինք, չեխերը 1848-ին յարեցին յեղափոխութեան Պալացկու ղեկավարութեամբ, բայց Վինդիշգրեցն[14] իր բանակով Պրագայում լինելով, յաղթեց ժողովրդական ալիքներին եւ ռէաքսիոնը հաստատեց չեխերի երկրում: Մարքսն, իբր բողոքող, յեղափոխական տարր, անշուշտ պիտի համակրէր այդ կտրիճ, բայց փոքր ազգին: Սակայն այդպէս չէ. Մարքսը հանդիսանում է իբր գերմանացի լիբերալ, որ Պան Ելաչիչի, այդ սլաւոն ռէաքսիոնների յանցանքը փաթաթում է բոլորի վզին: Նրա սեփական տեսութիւնը, նրա կուռքը կազմող ցենտրալիզմն (կենտրոնացումը) այնքան ուժեղ է եւ հրամայական իր մէջ, որ ստիպում է նրան նոյնիսկ գիտնականին միանգամայն անվայել մարգարէութիւն անել. «Բայց ամենից աւելի արգահատանքի արժանի են քաջ չեխերը: Կը յաղթեն նրանք, թէ կը յաղթուեն, միեւնոյնն է. նրանք պիտի ոչնչանան» (5):

«Զարագուչակ մարգարէութիւն նախ չեխերի համար, որովհետեւ կարող էին սկզբներում վախենալ, կասկածելով, որ Մարքսի նման մի գիտնականի գուշակութիւնը կարող է իրականանալ: Եւ ապա աւելի եւս չարագուշակ մարգարէութիւն Մարքսի համար, նրա սեփական թէորիայի (տեսութեան) համար, որովհետեւ ահա արդէն գլորուել, անցել են երկար ու ձիգ 60 տարիներ եւ այդ չարագուշակ, սեւ մարգարէութիւնը տապալուել, ջարդ ու փշուր է եղել. չեխերը ոչ միայն չեն ոչնչացել, չեն կորել իբր ազգ, այլ բոլորովին հակառակ երեւոյթ է տեղի ունեցել. նրանք ձեռք են բերել իրենց համար որոշ ազգային եւ կուլտուրական ինքնուրոյն գոյութեան իրաւունքներ Աւստրիայի պետական կազմում, նրանք ստեղծել են ինքնատիպ չեխական կուլտուրա, սեփական բարձր գրականութիւն եւ գեղարուեստ: Մի խօսքով՝ նրանք չեն ոչնչանում, այլ ծաղկում, փթթում են իբր ազգ, թէեւ 12 միլիոն թիւ չունեն:

«Յեղափոխութիւնը եւ հակայեղափոխութիւնը Գերմանիայում» յօդուածի մէջ, Մարքսը հետեւեալ դատավճիռն է արձակում չեխերի մասին. «Չեխ ազգութեան համար մարտնչող պրոֆէսոր Պալացկին ինքը միայն ծպտուած գերմանացի է, որը մինչեւ այժմ էլ չի կարող կանոնաւորապէս եւ առանց օտար արտասանութեան՝ խօսել չեխերէն: Բայց, ինչպէս յաճախ լինում է, չեխական մեռնող ազգութիւնը - մեռնող, այո՛, ինչպէս ցոյց են տալիս վերջին 4 դարերի բոլոր յայտնի փաստերը, - 1848 թուին արեց վերջին ճիգը, որի անյաջողութիւնը պիտի ապացուցանէ, որ Բոհեմիան կարող է գոյութիւն ունենալ միմիայն իբր բաղադրիչ մաս Գերմանիայի, թէ եւ նոյնիսկ նրա բնակիչները շարունակէին էլի մի քանի դար խօսել ոչ գերմաներէն, այլ չեխերէն»:

Կրկնում ենք՝ չի կարելի ենթադրել, ու Մարքսն այդքան թոյլ լինէր ընդհանուր պատմութեան մէջ, դա իր դաւանանքն է, որ կուրացրել է նրան:

Կարլ Կաուցկին[15], այդ եւ միւս յօդուածների տպագրութեան յառաջաբանում յատկապէս խօսում է չեխերի առթիւ եւ խոստովանում է Մարքսի արած սխալը. նա ընդունում է, որ չեխերն ունեն կուլտուրական ազգի բոլոր յատկութիւնները: Եւ ինչպէս չխոստովանէր, երբ կեանքի դասը տուել էր արեւի լոյսի նման պարզ ու փայլուն փաստեր:

Առաջ բերած կտորի մէջ ամենից հետաքրքրական մասը կազմում են հետեւեալ բառերը. «Թէեւ նոյնիսկ նրա բնակիչները շարունակէին էլի մի քանի դար խօսել ոչ գերմաներէն, այլ չեխերէն»... Պէ՞տք է արդեօք բացատրել այդ պարզ ու մեկնելու անկարօտ խօսքերը. պէ՞տք է ասել, որ դրանք Մարքսի «խորհուրդ խորհնն» են, նրա համոզումը, որ չեխերը պիտի վերջ ի վերջոյ գերմաներէն խօսեն, որ բոլոր մանր ազգերը պիտի կլանուեն, ձուլուեն խոշոր ազգերի մէջ, պիտի կենտրոնանան: Չարդարացնո՞ւմ այդ գուշակութիւնը չեխերի վերաբերմամբ:

Դաժան է իրականութիւնը. նա յաճախ է փշրել եւ դեռ փշրում է սխալ տեսութիւններն հաւատալիքների (դոգմ) սիրուն, միաձոյլ կառուցուածքները:

Նոյն գրքի մի այլ յօդուածում, «Ungarn-Վէնգրիա» վերնագրով, Մարքսը հետեւեալն է գրում. «Ֆրանսական պրոլետարիատի առաջին ապստամբութեան հետ միասին աւստրիական գերմանները եւ մաջարներն ազատ կը լինեն եւ արիւնալի վրէժ կը լուծեն սլաւոն բարբարոսներից: Ընդհանուր պատերազմը, որ այն ժամանակ տեղի կ'ունենայ, տաշեղի նման ջարդ ու փշուր կ'անէ այդ սլաւոնական միութիւնը եւ կ'ոչնչացնէ այդ բոլոր մանրիկ, եզագլուխ (stierkopfigen) ազգերը, մինչեւ իսկ նրանց անունները: Մօտակայ համաշխարհային պատերազմը կը ստիպէ ոչնչանալ ոչ միայն ռէակցիոն դասակարգերն ու դինաստիաները (թագաւորող տուն), այլեւ նա կ'ալէ երկրի երեսից ամբողջ ռէակցիոն ազգերը» (6):

«Եզագլուխ ազգեր» - ահա մի նոր հայհոյանք, ուղղուած մանր ազգութիւնների հասցէին: Այդ հայհոյանքը գալիս է ցոյց տալու, թէ ինչպիսի թոյն կար Մարքսի սրտում կուտակուած՝ ընդդէմ մանր ազգերի: Նա ուզում էր, հոգով սրտով տենչում, որ այդ բոլոր մանր ազգերը ձուլուեն, կլանուեն, որպէսզի իր թէորին (տեսութիւն) արդարանայ եւ ինքը գոչէ. «Պրոլետարներ բոլոր երկրների միացէք»: Այդ ֆրազում էլ աչքի է զարնում մի բան. ինչպէս Մարքսը չէր ըմբռնել ազգ եւ ազգային ու միջազգային շարժումները: Նա կոչ է անում պրոլետարներին aller Lander (բոլոր երկրների) եւ ոչ՝ բոլոր ազգերի: Նա խօսում էր մանր ազգութիւնների մասին, արհամարհում, ծաղրում, նրանց ոչնչացումը գուշակում, առանց նոյնիսկ հեռաւոր կերպով ըմբռնելու այդ հսկայական պրոբլեմը, ազգային ահաւոր խնդիրը:

Այդ բոլորն առաջ բերելով, Դ. Պասմանիկը[16], հրեայ սիոնիստ, բայց շնորհալի գրող, նկատում է. «Չենք խօսում այն մասին, որ այդ բոլոր մարգարէութիւնները չիրականացան, բայց մենք կ'ուզենք մատնացոյց լինել Մարքսի իսկապէս հանճարեղ գիւտի վրայ՝ «ռէակցիոն ժողովուրդներ»: Իսկ այսօր դուրս է գալիս, որ այդ ռէակցիոն ժողովուրդներն ունեն մարքսիստ պրոլետարիատ» (7):

«Եւ՝ իսկապէս, ի՞նչ է նշանակում ռէակցիոն ժողովուրդ, ռէակցիոն ազգ: Եթէ մի ժողովուրդ յետամնաց է, դա դեռ չէ նշանակում, որ նա ռէակցիոն է, յետադիմական: Նա յետամնաց է, բայց, նրա մէջ անշուշտ կը լինեն որոշ դասակարգեր ու որոշ կուսակցութիւններ, որոնց ձգտումները կը լինեն յառաջադիմական: Ճշմարիտ է, օրինակ, Թիւրքիայում մի յառաջադիմական կուսակցութիւն կարող է դնել այնպիսի պահանջներ, որոնք Անգլիայում նման են պահպանողականների, կամ նոյնիսկ յետադէմների: Սակայն դա չէ խանգարում այդ կուսակցութիւնն անուանել յառաջդիմական՝ ի հարկէ Թիւրքիայի համար: Յառաջդիմական բառերը պարունակում են իրենց մէջ յարաբերական իմաստ՝ համաձայն տեղի ու ժամանակի:

Եթէ որեւէ սլաւոնական մանր ազգութիւն չէ մասնակցել 1848-ի յեղափոխութեանն Աւստրիայում, դա երբեք չի կարող հիմք ծառայել մի գիտնականի՝ անուանելու այդ ժողովուրդը ռէակցիոն, յետադէմ: Ի՞նչ կը հրամայէիք սլովակներին, օրինակ, ոտով-գլխով կլանուէին այդ յեղափոխութիւնով եւ իրենց ազգութեան անդամների 3/4 մասը գնդակի բաժին անել տային, կոտորել տային, չքանային աշխարհի երեսից իբր ազգ, որպէսզի Մարքսը բարեհաճէր կոչել նրանց յառաջադէմ ժողովուրդ եւ ոչ ռէակցիոն: Կ'ուզէի՞ք, որ 1905-06 թուերին Մոսկուայում եւ Կովկասում հրատարակուած սոցիալ-դեմոկրատական անգէն «զինուած ապստամբութեան» ժամանակ հայերը յիմարանային եւ ոտով-գլխով խրուէին այդ ապստամբութեան մէջ, մատնելով ջարդի երկիւղին հայերի առնուազը կէսը... Ո՛չ, ես ցանկանում եմ ազատ Ռուսաստան, ազատ ու երջանիկ Թիւրքիա, միայն մի պայմանով, որ ես էլ, իբր հայ ազգ, պաշտպանեմ իմ օրգանական ազգային ամբողջութիւնը եւ օգտուեմ այն բոլոր բարիքներից, որ տալիս է ապակենտրոն իրաւական պետութիւնը, որ այնուհետեւ ես էլ իմ ազգի ներսում, խաղաղ ու հանգիստ, կազմակերպեմ դասակարգային կռիւը յանուն ապագայ հաւասարասէր կարգերի:

Մի անհատ իրաւունք ունի եւ նոյնիսկ պարտաւոր է զոհաբերել իր եսն ամբողջութեան բարօրութեան համար, իսկ մի հաւաքական ամբողջութիւն, մի առողջ ազգութիւն ողջակիզել, որպէսզի միւս ազգութիւնները լաւ ապրեն՝ դա ոճիր է մարդկութեան դէմ:

Չկան ռէակցիոն ազգեր կամ ժողովուրդներ, այլ կան միայն ռէակցիոն անհատներ եւ դասակարգեր:

Վերեւում բերուած բոլոր փաստերը ցոյց են տալիս, թէ ինչպիսի թունաւոր ատելութիւն է տածում Կ. Մարքսը դէպի սլաւոնական մանր ազգերը: Թերեւս գտնուին մարդիկ, որոնք կարծեն թէ Մարքսը դէմ է ոչ բոլոր մանր ազգերին, այլ սլաւոնական մանր ժողովուրդներին, համարելով դրանց ռէակցիոն, յետադիմական եւ այլն: Բերենք այժմ մի երկու օրինակ էլ այն ատելութեան, որ նա ցոյց է տալիս, օրինակ, դէպի դանիացիները, Սկանդինաւիայի բնակիչները:

Մէրինգը[17] բերում է Մարքսի հետեւեալ խօսքերը, որոնք վերաբերում են 1860-ական թուերին, երբ Բիսմարկը վերակազմելով երիտասարդ Պրուսիայի բանակները, պատրուակներ էր որոնում Դանիայի ձեռքից խլելու Շլեզվիգ եւ Հոլշտայն նահանգները, եւ երբ ծնունդով դանիացի Մոլտկէն[18] իր առաջին զինուորական քաջագործութիւնը բանեցնում էր իր սեփական հայրենիքի դէմ, լինելով պրուսական բանակում իբր հրամանատար:

«Սկանդինաւիզմը կայանում է նրանում,- գրել է Մարքսը,- որ այդ երկրի ժողովուրդը ոգեւորւում է դաժան, ծովահինական, կեղտոտ, հին հիւսիսային նացիոնալիզմով, այն խոր ծածկամտութեամբ, որն իր վարմունքով, այսինքն՝ կոպտութիւն անելով դէպի կանայք, լինելով մշտապէս հարբած վիճակում եւ ցոյց տալով արիւնարբու կատաղութիւն, որին յաճախ փոխարինում է լալկան սենտիմենտալիզմը... Պատերազմը Դանիայի դէմ՝ իսկապէս յեղափոխական պատերազմ է» (8):

«Գերմանիան լաւ է անում, որ ճնշում է Դանիային: Դանիացիներն ու սկանդինաւցիներն հասարակ, թթու նացիոնալիստներ են: Գերմանիան պարտաւոր է կլանել նրանց, եւ լաւ է անում, որ նուաճողական պատերազմ է յայտարարել... Այդ ամբողջ քաղուածքն այնպիսի փառահեղ մտքեր է պարունակում իր մէջ, որ ամէն մի գերմանացի շովինիստ ուրախութեամբ կը ստորագրէ նրանց տակը:

Քննենք այժմ Մարքսի վերաբերմունքը դէպի իր սեփական ազգութիւնը, դէպի հրէաները, թէեւ ըստ պրոֆ. Մասարիկի[19] վկայութեան, Մարքսը մկրտուած հրէայի սերունդ է» (9):

«Հրէական հարցի մասին Մարքսը գրել է երեք անգամ. առաջինը 1844-ին «Հրէական Հարցի առիթով» յօդուածում, «Deutsche-Franz. Jahrbucher» թերթում, երկրորդը, «Սրբազան ընտանիք» գրքում (1845-ին) ուղղուած Հեգելի մի ուրիշ աշակերտի Բրունօ Բաուէրի դէմ, իսկ երրորդը «Նոր-հոեենսեան թերթում» 1848-1849 թուերին:

«Հրէական հարցի առիթով» յօդուածը Մարքսի հնագոյն աշխատութիւններից մէկն է, որի մէջ փայլում է նրա գրելու կտրուկ, յանդուգն եւ ինքնատիպ ձեւը: Դրանից զատ՝ նրանում փայլում է Հեգելի աշակերտն իր «հակադրութիւնների» պսպղուն բայց կեղծ տրամաբանութիւնով:

Բրունօ Բաուէրը Հրէական հարցը համարում էր ամբողջապէս աստուածաբանական հարց: Նա պնդում էր, որ պետութիւնը կրօն չպիտի ունենայ: Նա պիտի լինի բացարձակ անկրօն. այն ժամանակ նրա հպատակների քրիստոնեայ կամ մովսիսական լինելը նրա համար կը լինի բացարձակ անտարբեր, եւ հրէան ու քրիստոնեան կը հաւասարուեն օրէնքի առջեւ:

Մարքսը, քննադատելով Բաուէրին, ասում է, որ Բաուէրը կուում է քրիստոնեայ պետութեան, այսինքն՝ առհասարակ, կրօն ունեցող պետութեան դէմ, այն ինչ պէտք է կռուել առհասարակ պետութեան դէմ, որովհետեւ ներկայ պետութիւնը դասակարգային տիրապետութեան եւ կեղեքման գործիք է: Ճիշդ այսպէս էլ, կռուելով կրօնի ազատութեան համար, դուք չէք վերացնի հրէայի եւ քրիստոնեայի կրօնների տարբերութիւնը. պէտք է կռուել իր, այսինքն կրօնի դէմ, իբր այդպիսին, որպէս զի նա խանգարիչ տարր չհանդիսանայ հասարակութեան համար:

Մարքսը բոլորովին համակարծիք չէ Բ. Բաուէրի հետ, որ հրէական հարցը կրօնական հարց է: Այստեղ էլ, իբր միակողմանի տնտեսական մատերիալիստ, Մարքսն առաջ է մղում իր սիրասուն զաւակը, իր թէորին: Նա Հրէական հարցն ըմբռնում է համարեա՛ թէ անտիսեմիտների, հրէակերների նման: Հրէական հարցը կարծես նրա համար էլ, ինչպէս երբեմն դոկտոր Լիւգէրի[20] համար Վիէննայում, կապիտալիզմի կամ աւելի շուտ վաշխառուների հարց է:

«Ինչն է հրէութեան աշխարհական հիմունքը,- հարցնում է Մարքսը:- Գործնական կարիքը՝ էգօիզմը: Ո՞րն է հրէայի աշխարհական պաշտամունքը՝ սպեկուլացիան (կեղեքումը): Ո՞րն է նրա աշխարհային աստուածը՝ փողը»: «Ուրեմն,- եզրակացնում է նա,- Ազատուել սպեկուլյացիայից եւ փողից, այսինքն գործնական, իրական հրէութիւնից՝ կը լինէր ինքնազատագրում մեր ժամանակի համար»:

Դրա համար ի՞նչ պիտի անել: Պէտք է ստեղծել այնպիսի հասարակական կազմ, ասում է Մարքսը, որի մէջ հնարաւոր չլինի ոչ կեղեքում, ոչ էլ դրամ (ուրեմն՝ սոցիալիստական կազմ), եւ այն ժամանակ հրէայի գոյութիւնն անհնար կը լինի, որովհետեւ այդպիսի կազմում հրէայի կրօնական գիտակցութիւնն ու համոզումներն օդը կը ցնդին: Թէ հրէան, թէ քրիստոնեան,- ասում է Մարքսը,- պատմականօրէն սերուած էակներ են: Սակայն. «Հրէաներն ազատագրւում են այն չափով, ինչ չափով որ քրիստոնեաները հրէանում են», այսինքն դառնում են նրանց նման սպեկուլյանտ (կեղեքող) դրամապաշտ եւ էգօիստ: «Բուրժուական հասարակութիւնն իր խորքերից մշտապէս արտադրում է հրէաներ», այսինքն կեղեքիչներ, սպեկուլյանտներ ու դրամապաշտներ: «Ո՞րն է ինքնըստինքեան հրէական կրօնի հիմքը: Գործնական կարիքը՝ էգօիզմը»:

«Այդ պատճառով հրէաների միաստուածութիւնը էապէս բազմաթիւ կարիքների բազմաստուածութիւնն է, որը նոյնիսկ ուրացութիւնը դարձնում է աստուածային օրէնքի առարկայ: Բայց գործնական կարիքը, էգօիզմը, բուրժուական հասարակութեան սկզբունքն երեւան են գալիս մաքուր ձեւով՝ իբր սկզբունք, երբ բուրժուական հասարակութիւնը լիապէս զարգացնում է իր միջից քաղաքական պետութիւն: Իսկ գործնական պահանջի եւ էգօիզմի աստուածը դրամն է: «Դրամն Իսրայէլի խանդոտ աստուածն է, որի առջեւ չի դիմանայ ոչ մի այլ աստուածութիւն: Դրամն ստորացնում է մարդու բոլոր աստուածներին, դարձնելով նրանց ապրանք»:

Մարքսի կարծիքով՝ հրէան ազգութիւն չունի: Նրա ազգութիւնը վաճառականի, ընդհանրապէս դրամ ունեցող մարդու ազգութիւնն է: Հրէաների օրէնքը, որ ոտի տակ հող չունի, եւ մանաւանդ Թալմուտը, ոչ

այլ ինչ է, եթէ ոչ կրօնական ծաղրանկար ոտի տակ հող չունեցող բարոյականութեան եւ իրաւունքի, զուտ ձեւական ծիսականութիւն, որով զգեստաւորում է իրեն էգօիզմի աշխարհը: Հրէական թալմուտականութիւնն ընդհանուր էգօիզմի ճիզուիտականութիւնն է: Ճարպիկօրէն զանց առնել օրէնքը - ահա այդ աշխարհի կարեւորագոյն վարդապետութիւնը: Հրէութիւնն իբր կրօն, այլեւս չի կարող զարգանալ, որովհետեւ գործնական պահանջի աշխարհայեացքի կատարելութիւնը տնտեսականումը չէ, այլ գործնականում. նրա իմաստութիւնն իսկ գործնական է: Հրէութիւնը չի կարող ստեղծել նոր աշխարհ, որովհետեւ էգօիզմի գիտակցութիւնը կրաւորական է ինքնըստինքեան, նա ընդլայնում է միայն սոցիալիստական յարաբերութիւնների զարգացման հետ միատեղ:

Հրէութիւնն իր զարգացման գագաթնակէտին հասել է բուրժուական հասարակութեան կատարելագործութեան ժամանակ եւ այն էլ միմիայն քրիստոնէական աշխարհում: Քրիստոնէութիւնը մարդու բոլոր ազգային, բնական բարոյական եւ թէորիական յարաբերութիւնները դարձնում է արտաքին: Միայն քրիստոնէութեան ժամանակ բուրժուական հասարակութիւնը կարող է լիապէս բաժանուել պետական կեանքից, ազատուել մարդկային բոլոր կապերից եւ նրանց տեղ դնել էգօիստական պահանջներ, մարդկային աշխարհը բաժանել ատոմների, իրար թշնամօրէն հակադիր անհատների:

Քրիստոնէութիւնն առաջացել է մովսիականութիւնից եւ նորից այժմ ձուլուել է նրա հետ: Սկզբից ի վեր՝ քրիստոնեան թէորետիք հրէա էր: Այդ պատճառով էլ հրէան գործնական քրիստոնեայ է. «Եւ գործնական քրիստոնեան նորից դարձաւ հրէա», ի հարկէ կապիտալիստական սոցիալական կարգերի շնորհով:

«Քրիստոնէութիւնը հրէութեան բարձրագոյն միտքն է, իսկ հրէութիւնը քրիստոնէութեան ստոր ուտիլիտար (օգտասէր) գործադրութիւնն է»:

Քրիստոնէութեան առաքինութեան էգօիզմը, որ ծարաւի է յաւիտենական ողորմութեանը, իր գործնական վերջաւորուած ձեւով դառնում է հրէական ֆիզիքական էգօիզմ. երկնային կարիքը դառնում է երկրային, սուբեկտիվիզմը (ներաշխարհ) դառնում էգօիզմ (եսասիրութիւն): Հրէայի յամառութիւնը եւ դիմացկունութիւնը բացատրւում է ոչ թէ կրօնով, այլ նրա կրօնի մարդկային հիմքով: Հրէայի կրօնը գործնական կարիքի իդէալական արտացոլացումն է: Եւ որովհետեւ հրէայի իսկական էութիւնը իրականացել է բուրժուական հասարակութեան մէջ, այդ պատճառով էլ այդ հասարակութիւնը չի կարող համոզել հրէային, որ նա էապէս կրօնական էակ չէ:

«Երբ հասարակութեանը կը յաջողուի ոչնչացնել հրէայի գործնական էութիւնը, շահագործութիւնը եւ նրա նախադրեալները, այն ժամանակ հրէան այլեւս անհնար կը լինի, որովհետեւ հրէութեան սուբեկտիվ հիմքը՝ գործնական պահանջը կը մարդկայնանայ, որովհետեւ կը վերանայ ընդհարումը մարդու անհատական, զգայական գոյութեան եւ նրա տեսակի կամ սեռի գոյութեան միջեւ»:

«Հրէայի հասարակական ազատագրումը միաժամանակ հասարակութեան ազատագրումն է հրէութիւնից» (10):

Մարքսն այնպէս է ներկայացնում հրէութիւնն, ինչպէս Վիէննայի դոկտոր Լիւրգերը կամ ինչպէս Կրուշեւանը[21] եւ Պուրիշկեւիչը[22] Ռուսաստանում. իբր թէ հրէութեանը յատուկ է կեղեքումն ու շահագործումը այն աստիճանի, որ նրա կրօնի էութիւնն անգամ գործնական էգօիզմ է: Մինթ նոյն գործնական էգօիզմը չէ նաեւ Մահմետի կրօնի, քրիստոնէութեան, բուդդայականութեան եւ, կարելի է վստահօրէն պնդել, բոլոր կրօնների հիմքերը: Կրօնը վերուստ տրուած չէ, այլ ծնունդ կեանքի պահանջների, մի տեսակ միջոց գործնականում կեանքի կոիւը մղելու գերբնական զօրութիւնների օժանդակութեամբ: Հրէութիւնը, այն էլ հրէութեան մի չնչին մասը, կապիտալի ներկայացուցիչները իրենց բնաւորութեան այդ վատ գծերն ստացել են՝ շնորհիւ իրենց կրած երկիազարամեայ դեգերումների, տառապանքների, լլկանքների ու հալածանքների:

Վերջապէս զուտ անտիսեմիտական է Մարքսի այն դիրքը, որ բռնել է նա դէպի հրէաները, որովհետեւ ամէն տեղ հրէայ ասելով, նա ըմբռնում է լոկ շահագործութեամբ պարապող, նրա համար կարծես գոյութիւն չունի հրէայ բանուոր, հրէայ արհեստաւոր, որոնք այսօր համաշխարհային պրոլետարիատի շարքերում հսկայական դեր են կատարում եւ համարեա՛ ամէն տեղ առաջին դիրքերում են կանգնած:

Ի հարկէ՝ մենք չենք կասկածում, որ Մարքսն իր համոզումներով անտիսեմիտ էր. նա, իբրեւ սոցիալիստ, չէր կարող անտիսեմիտ լինել: Սակայն նրա թէորին՝ տնտեսական մատերիալիզմը եւ նրա ցենտրալիզմն ստիպել են նրան ընկնել նոյն սխալ, նոյն կեղծ տեսակէտի վրայ, որի վրայ կանգնած են անտիսեմիտները, ի հարկէ բոլորովին այլ դրդապատճառներից ստիպուած:

Բացի այդ Հեգելեան դպրոցի ամենափայլուն ներկայացուցիչներից մէկը՝ Լիւդվիգ Ֆոյերբախը[23], որի ազդեցութիւնը չափազանց զօրեղ էր Մարքսի եւ Էնգելսի սկզբնական գործունէութեան, կամ աւելի ստոյգ է ասել, նրանց զարգացման ու բնութագծերի կազմակերպութեան վրայ, նոյնպէս զբաղուել է Հրէական հարցով եւ տուել է հրէաների նոյնատեսակ նկարագիր, միայն աստուածաբանական բացատրութիւններով: Մարքսն իր ուսուցչի նկարագրական եւ գործնական մասերը վերցրել եւ ապա Հեգելի[24] փայլուն, բայց տրամաբանօրէն կասկածելի «հակադրութիւն»-ներով համեմել ու կազմել է իր յօդուածը «Հրէաների մասին»:

«Մարքսի բացատրութիւնները փայլուն են, բայց համոզեցուցիչ չեն,- իրաւացի կերպով նկատում է պրոֆ. Մասարիկը:- Իսկապէս ասած, նրանք շատ աւելի ճարպիկ են, քան այդ վայել էր մի այդպիսի կարեւոր հարցի էապէս լուրջ քննութեանը» (11):

«Հրէութեան մէջ Մարքսը տեսնում է միմիայն կապիտալիզմի, շահագործման խնդիր: Հրէութեանը կապող միակ տարրը կրօնն է, նրա էգոիստ կրօնն իր «ակն ընդ ական»-ով: Նա բացարձակ մերժում է հրէութեան մէջ ազգային որեւէ կապ: Ճշմարիտ է, հրէութիւնը կորցրել է իր մայրենի լեզուն, բայց ինչպէս արդէն ապացուցել ենք, միայն լեզուով չի սահմանափակւում ազգութիւնը: Կան եւ այլ որոշիչ պարագաներ, որոնց մէջ «ազգային ոգին» առաջնակարգ

տեղ է բռնում: Իսկ այդ միատեսակ ազգային ոգին հարստօրէն կայ, գոյութիւն ունի հրէութեան մէջ: Բոլոր հրէաները գիտակցում են, որ իրենք մի ազգ են, թէեւ ցրուած ու յարահալած: Հրէութիւնն ամէն տեղ ունի մի այնպիսի ցայտուն ազգային բնոյթ, որը չնկատել՝ դիտող մարդու համար անհնար է: Իսկ նրանց գրեթէ երկհազարամեայ տառապանքներով հիւսուած անցեալը... Իսկ ներկայ տառապանքների ու արցունքի ծովը, որի մէջ միւս բոլոր ազգութիւնները թերեւս վաղուց խեղդուած կը լինէին...:

Մարքսը յատկապէս դէմ չէ հրէութեան, այլ, դէմ լինելով առհասարակ բոլոր մանր ազգութիւններին, նա կողմնակից է հանդիսանում նաեւ հրէաների ձուլման: Եւ այդ իր կանխակալ տեսական համոզումը նա համեմում է այնպիսի սրամիտ մտքերով, ինչպէս այն, որ քրիստոնէութիւնն արտադրում է իր սեփական հրէաները, այսինքն իր շահագործիչները:

Մինչեւ օրս էլ Կ. Կաուցկին, Մարքսի այդ տաղանդաւոր աշակերտը, հրէութիւնը համարում է ոչ թէ ազգային մի միութիւն, այլ լոկ կրօնական համայնք, որի միակ կապը կրօնն է՝ յուդաիզմը կամ մովսիսականութիւնը: Այն ինչ մկրտուած կամ քրիստոնէութիւնը ընդունած հրէան բացարձակ ոչնչով չի տարբերւում մովսիսական հրէայից ազգային բնոյթի տեսակէտից: Այդ համոզումը հեգելեան դպրոցի՝ Ֆոյերբախի, Բրունօ Բաուէրի եւ Մարքսի թողած պատմական ժառանգութիւններից մէկն է, աւելի շուտ մի նախապաշարում, քան մի համոզում:

Սլաւոնական, սկանդինաւեան եւ հրէական ազգութիւնների մասին Մարքսի գրութիւններից բերած կտորները լիապէս բաւական են ցոյց տալու Մարքսի թշնամական տրամադրութիւնը դէպի մանր ազգերը: Այդ կտորներից պարզ երեւում է նրա կարծիքը, նրա երկրպագութեան առարկան՝ կենտրոնացումը: Մանր ազգութիւնները դատապարտուած են մեռնելու. նրանք պիտի ձուլուեն խոշոր ազգութիւնների մէջ. մարդկութիւնը, տնտեսական պայմանների կենտրոնացման հետ միասին պիտի կենտրոնանայ աստիճանաբար. մանր ազգերը, ձուլուելով, պիտի կազմեն աւելի եւ աւելի խոշոր ազգեր եւ երեւի այդ պրոցեսի տրամաբանական ելքը լինելու է ամբողջ մարդկութեան մէկ հօտ եւ մէկ հովիւ դառնալը:

Այսպէս ուրեմն՝ «Մանիֆէստից» մեր բերած յայտնի կտորի բոլոր մթութիւնները պարզուեցին: Մարքսը դէմ է հայրենիքի գաղափարին. մանրիկ, ջոկ-ջոկ հայրենիքներ չպիտի գոյութիւն ունենան, որովհետեւ նրանք վնասակար են իբր ներկայ բուրժուական պետական միութիւններ, որքան նրանք արագ չքանան, այնքան աւելի կ'արագանայ մասնաւոր սեփականութեան վերացումը, որովհետեւ ներկայի պետութիւնները մասնաւոր սեփականութեան ժանդարմներն են: Այստեղ էլ աշկարայ է Մարքսի սխալը. նրա համար պետութիւնը, պետական տերիտորիան իր սահմաններով, իր սահմանային բերդերով, իր զօրքերով, իր մաքսատներով և ամբողջ վոհմակ պաշտօնեաներով՝ նոյնն է ինչ որ հայրենիքը, ազգ կոչուած՝ մի մեծ մարդկային համախմբման բնակավայրը: Եւ նա դէմ է այդ հայրենիքին, որովհետեւ բանուորն այնտեղ սեփականութիւն չունի: Հայրենիքները (ի հարկէ Մարքսի հասկացած հայրենիքները) հանդիսանում են խոշոր խոչընդոտներ սոցիալիզմի իրականացման: Ուրեմն՝ պիտի տապալին այդ հայրենիքները:

Նա դէմ է եւ ազգութեան գաղափարին: Ազգութիւնը եւս դէմ է տնտեսական կեանքի կենտրոնացմանը: Նա, առհասարակ, ապակենտրոնացնում է մարդկութիւնը եւ ոչ նպաստում նրա ամբողջութեանը: Ինչ էլ որ լինի, օր աւուր կենտրոնացող տնտեսական յարաբերութիւնները հրամայօրէն կենտրոնացնում են ազգերին, նրանց միաձուլում, մի ամբողջութիւն կազմում. ստիպում նրանց իրար խառնելու, մէկ հօտ եւ մէկ հովիւ կազմելու: Սոցիալիզմի արագ իրականացման տեսակէտից, ուրեմն, անհրաժեշտ է մանր ազգութիւնների ձուլումը կամ, ինչպէս ասում են, ասիմիլիզացիան: Բանուորութիւնը, ինչ վերաբերում է մանր ազգութիւններին, պիտի տրամաբանօրէն լինի ապազգային, եթէ ոչ, նա չի կարող ընդունել ուսուցչի տածած քէնն ու արհամարհանքը դէպի մանր ազգերին: Տրամաբանօրէն մտածելով, պիտի ասենք, որ վերջ ի վերջոյ, խոշոր ազգերի պրոլետարներն էլ պիտի դառնան ապազգային, բոլորը պիտի կլանուեն մարդկային ամբողջութեան մէջ:

Այստեղ էլ աշկարայ է Մարքսի սխալը: Նա չի ըմբռնել ազգային կոչուած խնդիրը: Ազգը եւս՝ նա շփոթել է պետութեան գաղափարի հետ: Պետութիւններն, այո՛ կենտրոնանում են եւ, թերեւս, եթէ մարդկային կեանքի զարգացումն այսպէս ընթանայ, շարունակուեն կրկին կենտրոնանալ: Բայց ինչպէս մի այլ տեղ մենք ապացուցել ենք (12), կենտրոնացման հետ միատեղ, պատմութեան ամբողջ ընթացքում, ընթանում է եւ ապակենտրոնացումը: Այդ կրկնակի շարժումը՝ կենտրոնացում եւ ապակենտրոնացում, ծառայում է հիմք եւ դրդապատճառ ֆէդէրացիայի սկզբունքը դաւանողներին: Պետութիւնները կարող են կենտրոնանալ, հսկայական չափերի հասնել, համապատասխանելով տնտեսական կեանքի փոխանակութեան կամ շրջանառութեան համաշխարհային բնոյթին, իսկ այդ հսկայական ամբողջութիւնների ներսում գաւառներն ու նահանգները, համայնքներն ու շրջանները, իբր ազգային ու երկրային միութիւններ, կ'ապակենտրոնանան, կը լինեն ինքնավար, կը լինեն կիսագերիշխան, իբր դաշնակից մասեր եւ դա խիստ համապատասխան կը լինի տնտեսական մի շարք այլ երեւոյթների բնոյթին՝ արտադրութեան ապակենտրոնական կամ տեղական բնոյթին:

Ազգերը չեն, որ ենթակայ են կենտրոնացման, այլ պետութիւնները, որոնց ներսում ազգերին սպասում է եղբայրական ֆէդէրացիան կամ անհատական՝ արտահողային (էքստերիտորիալ) սկզբունքով եւ կամ ազգ-երկրային խառն կազմով:

Իսկ մեծամեծ պետութիւններին ճակատագրօրէն սպասում է կամ ջարդ ու փշուր լինել՝ մանրանալ եւ կամ պահել իրենց արտաքին ամբողջութիւնը, ներսում ընդունելով ապակենտրոնական Ֆէդէրատիվ կամ դաշնակցական (դաշնակցային - ԿԽ) կազմ:

(Խաժակ, Գարեգին, Ինչ է ազգութիւնը, Կ. Պոլիս, 1912, էջ 76-95)

(1) Զունենալով մեր ձեռքի տակ Մարքսի ու Էնգելսի

երկերի մեծ մասը, մեզ պակասած կտորները մենք քաղում ենք Մասարիկի, Պասմանիկի, Պոսսէի[25] գրքերից եւ այլ աղբիւրներից:

(2) Gesammelte Schriften von K. Marx und Fr. Engels, III Band.

(3) Gesammelte Schriften... III Band S. 249.

(4) Այդ մասին մենք խօսել ենք մեր «Դէպի Ֆէդէրացիա» գրքում:

(5) Gesammelte Schriften, III. հատ, Nationale Revolutionen, էջ 109

(6) Նոյն, էջ 245 — Ungarn.

(7) Տե՛ս «Ազգային հարցը սոցիալիստ-դեմոկրատների դատաստանի առջեւ» գրքոյկը, էջ 9.

(8) «Geschichte der deut. Sozialdemokratie» IB. S 374 I Aufg.

(9) Տե՛ս «Մարքսիզմի փիլիսոփայական եւ ընկերաբանական հիմքերը» գիրքը, երես, 406.

(10) Հրէական հարցին վերաբերեալ վերլուծումը մենք առաջ ենք բերել ըստ պրոֆ. Մաստրիկի, տեղ տեղ ուղղակի թարգմանաբար: Տե՛ս նրա յիշուած գիրքը, էջ 409-415:

(11) Նոյն գրքոյկը, էջ 413:

(12) Տե՛ս «Դէպի Ֆէդէրացիա» գրքի «Կենտրոնացում ու ապակենտրոնացում» գլուխը:

Հղումներ

1 Karl Marx (1818-1883 թթ.), գերմանացի փիլիսոփայ, տնտեսագէտ, հասարակագէտ, գրող, պոետ, քաղաքական լրագրող, սոցիոլոգ եւ հասարակական գործիչ - Կխ:

2 Friedrich Engels (1820-1895 թթ.), գերմանացի փիլիսոփայ, Կարլ Մարքսի ընկերը, համագործակիցը եւ համահեղինակակիցը: Էնգելսը Մարքսի հետ միասին զարգացրել է այն ուղղութիւնը, որն այժմ յայտնի է մարքսիզմ անունով - Կխ:

3 Bruno Bauer (1809-1882թթ.), գերմանացի փիլիսոփայ, աստուածաբան, Հեգելի ուսանող, արմատական ռացիոնալիստ եւ քննադատ - Կխ:

4 Mikhail Alexandrovich Bakunin (1814-1876թթ.), ռուսական յեղափոխական Նարոդնայա Վոլիա կազմակերպութեան հիմնադիրներից, անարխիզմի խոշորագոյն տեսաբան - Կխ:

5 František Palacký (1798-1876թթ.), չեխ պատմաբան եւ Աւստրիայի գիտութիւնների ակադեմիայի անդամ, Աւստրիայի Ռայխստագի պատգամաւոր: Չեխիայի ազգային վերածնդի շարժման նշանաւոր գործիչ, «Ազգի Հայր» տիտղոսակիր - Կխ:

6 Բան (Ban, Бан, Bán), տեղական կառավարիչի կամ պաշտօնյայի տիտղոս, որը համազօր է փոխարքայի (կամ վարչապետի), որն օգտագործուում էր կենտրոնական եւ հարաւային Եւրոպայի մի քանի նահանգներում - Կխ:

7 Ban Josip Jelačić von Bužim (1801-1859թթ.), Խորուաթիայի կառավարիչ (1848-1859թթ.) - Կխ:

8 Camarilla, արքունիք, ազդեցիկ պալատականների խումբ - Կխ:

9 Kossuth Lajos (1802-1894թթ..), Հունգարիայի նշանաւոր պետական գործիչ, վարչապետ, ֆինանսների նախարար, յեղափոխական, մասնագիտութեամբ՝ իրաւաբան, լրագրող: Պայքարել է Հունգարիայի անկախութեան համար Հաբսբուրգների դէմ - Կխ:

10 Bernhard von Bülow (1849-1929 թթ.), գերմանական պետական գործիչ, դիւանագէտ: 1900-1909 թթ. եղել է ռայխսկանցլեր եւ Պրուսիայի մինիստր-պրեզիդենտ: Նրա կանցլերութեան ժամանակաշրջանում, նրա տեղեկութեամբ եւ անմիջական մասնակցութեամբ է իրականացուել հարիւր հազար հերերոյի ու տաս հազար նամայի կոտորածը Նամիբիայում՝ հերերոների եւ նամայների ցեղասպանութիւնը, 1904-1908 թթ.: Այստեղ ուշագրաւ է Գ. Խաժակի զգօնութիւնը զանգուածային ոչնչացման հարցերի նկատմամբ - Կխ:

11 Новое время (Նոր ժամանակ), ռուսական թերթ: Տպագրուել է 1868-1917 թթ. Պետերզբուրգում: Տարածել է սոցիալ-տնտեսական եւ քաղաքական նիւթեր Մարքսի «Կապիտալ»-ի մոտիւներով: Թերթը աչքի է ընկել նաեւ իր ռասիստական հայացքներով - Կխ:

12 Schlesien, պատմական սլաւոնական երկրամաս Լեհաստանում՝ Օդեր գետի մօտ - Կխ:

13 Jan Hus (1371-1415 թթ.), չեխ եկեղեցական ռեֆորմատոր (բարենորոգիչ), բարձրաստիճան հոգեւորական, Կաթոլիկ եկեղեցու հակառակորդ, պապականութեան կատարած շահագործումների դէմ քննադատ, պայքարող: Նրան այրեցին խարոյկի վրայ - Կխ:

14 Josef Nikolaus Guntram Fürst zu Windisch-Grätz (1819-1876 թթ.), Աւստրիական կայսրութեան բարձրաստիճան սպայ՝ գեներալ եւ բոհեմեան խոշոր հողատեր: Նա Վինդիշ-Գրատցի արքայազն Ալֆրեդ I-ի եւ նրա կնոջ Էլէոնորայի որդին էր: Գեներալ Վինդիշգրեցը ճնշել է 1848 թ. Պրահայում չեխերի ապստամբութիւնը, որի ընթացքում սպանուել է նրա մայրը, իսկ ինքը՝ վիրաւորուել է - Կխ:

15 Karl Johann Kautsky (1854-1938 թթ.), Գերմանական Սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան (SPD) եւ Երկրորդ Ինտերնացիոնալի առաջնորդ, մարքսիզմի հոչակաւոր տեսաբան - Կխ:

16 Daniel Pasmanik (1869-1930 թթ.), Ուկրաինայի հրէա, սիոնիստ, բժիշկ, բժշկագիտութեան դասախօս եւ գրող: Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի ժամանակ (1917-1921 թթ.) Պասմանիկը կանգնեց Դենիկինի եւ Վրանգելի սպիտակ բանակի կողքին, որոնք ի դէպ, պատասխանատու էին համարւում հրէաների կոտորածների համար: Աւելի ուշ Պասմանիկը հեռացուեց սիոնիստական շարժումից - Կխ:

17 Franz Erdmann Mehring (1846-1919 թթ.), գերմանացի հրապարակախօս, մարքսիստ, քաղաքական գործիչ, պատմաբան: Գերմանիայի կոմունիստական կուսակցութեան հիմնադիրներից է: Ուսումնասիրել է հին յունական եւ գերմանական դասական փիլիսոփայութիւնը, քննադատել է Հարտմանի, Ֆրիդրիխ Նիցշէ, Արթուր Շոպենհաուերի եւ այլ, այսպէս կոչուած՝ «իդեալիստ» փիլիսոփաների հայացքները: Հրատարակութեան է պատրաստել Մարքսի եւ Էնգելսի երկերն ու նամակները, գրել է Մարքսի կենսագրութիւնը - Կխ:

18 Helmuth Karl Bernhard von Moltke (1800-1891 թթ.), պրուսական եւ գերմանական ռազմական գործիչ, գեներալ-ֆելդմարշալ, ռազմական տեսաբան, գերմանական միլիտարիզմի գաղափարախօս: Մոլտկէն Բիսմարկի աջակցութեամբ ամրապնդել է պրուսական բանակը: 1858-1888 թթ. եղել է գլխաւոր շտաբի պետ եւ հրամանատար՝ Դանիայի (1864 թ.), Աւստրիայի (1866 թ.) եւ Ֆրանսիայի (1870-1871 թթ.) դէմ պատերազմներում: Իր երկերում առաջ է քաշել պատերազմների անխուսափելիութեան եւ նրանց «քաղաքակրթող» դերի մասին տեսութիւններ - Կխ:

19 Tomáš Garrigue Masaryk (1850-1937 թթ.), չեխոսլովակեան պետական գործիչ, փիլիսոփայ, Պրահայի համալսարանի փիլիսոփայութեան պրոֆեսոր, աւստրիական ռայխստագի պատգամաւոր, Չեխոսլովակիայի Հանրապետութեան նախագահ (1918 թ.): Առաջին աշխարհամարտի նախօրէին աւստրիական հակասեմականութեան դէմ ոտնձգել է հրապարակային ելոյթներ: 1918 թ. եղել է Չեխոսլովակիայի հակախորհրդային, ազատագրական ապստամբութեան կազմակերպիչներից: Նոյն թուականին ընտրուել է Չեխոսլովակիայի Հանրապետութեան նախագահ - Կխ:

20 Karl Lueger (1844-1910թթ.), Վիէննայի քաղաքապետ (1897-1910թթ.), աւստրիական Քրիստոնեա- սոցիալիստների ղեկավար, որը նաեւ հակասեմական գաղափարների ակտիւ հետեւորդ էր: Կ. Լիւգէրի անտիսեմական գաղափարները որոշակի ազդեցութիւն են գործել երիտասարդ Հիտլերի հայացքների ձեւաւորման վրայ - Կխ:

21 Pavel Aleksandrovich Krushevan (1860-1909 թթ.), ռուս լրագրող եւ պետական պաշտօնեայ: Նա ակտիւ «սեւ հարիւրեակային» էր եւ յայտնի էր իր ծայրահեղ աջ, ազգայնական եւ բացայայտ հակասեմական հայացքներով: Նա «Սիոնի երեցների արձանագրութիւնները» աղմկալի գրքի հրատարակիչն էր - Կխ:

22 Vladimir Mitrofanovich Purishkevich (1870-1920 թթ.), ռուս քաղաքական գործիչ, յայտնի է իր աջ ուլտրա-նացիոնալիստական եւ հակակոմունիստական հայացքներով: Ղեկավարներից է «Սեւ հարիւրեակ» կիսառազմական կառոյցի, 1905 թ. ռուսական յեղափոխության ժամանակ: Ծառայել է Պետդումայում: Ֆելիքս Յուսուպովի եւ Դմիտրի Պալովիչի հետ մասնակցել է Գրիգորի Ռասպուտինի սպանութեանը 1916 թ. վերջին: 1917 թ. փետրուարեան յեղափոխութիւնից յետոյ «Սեւ հարիւրեակի» միակ ակտիւ առաջնորդ՝ Պուրիշկեւիչն ի վերջո միացաւ Սպիտակ շարժմանը եւ մահացավ տիֆից 1920 թ. – Կխ:

23 Ludwig Andreas von Feuerbach (1804-1872 թթ.), գերմանացի փիլիսոփայ, մարդաբան, աթէիստ, Քրեագետ, քրեական իրաւունքի մասնագետ - Կխ:

24 Georg Wilhelm Friedrich Hegel (1770-1831թթ.), գերմանացի փիլիսոփայ, գերմանական դասական փիլիսոփայութեան կարկառուն ներկայացուցիչներից մէկը, օբյեկտիւ իդեալիստական հիմքի վրայ դիալեկտիկայի համակարգուած տեսութեան հիմնադիրը - Կխ:

25 Arvid Rutger Fredriksson Posse (1820-1901 թթ.) շուէդ պետական գործիչ, Շուէդիայի վարչապետ (1880-1883 թթ.), Շուէդիայի գիւղատնտեսութեան թագաւորական ակադեմիայի, ֆիզիոգրաֆիկ ընկերութեան եւ Ռազմածովային գիտութիւնների թագաւորական ընկերութեան անդամ - Կխ:

Խօսքէն անդին

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Հարց կը տրուի, թէ խօսքէն անդին ի՞նչ գործ կ՚ընենք, կամ ի՞նչ գործ պիտի ընենք:

Եւ հարցադրումը կարծես կը միտի նսեմացնել խօսքը, առանց որուն ի հարկէ գործը չի կրնար գոյութիւն ունենալ:

Չէ՞ որ, ի սկզբանէ էր բանն...

Թէեւ այս իրականութիւն է կեանքի բոլոր մարզերուն մէջ, սակայն կեդրոնանանք հայ կեանքին, ազգային կեանքին վրայ:

Ճի՛շտ է, շատ կը խօսինք: Եւ բոլոր խօսքերը նոյնարժէք չեն: Անպայման իմաստուն խօսքեր ալ չեն: Սակայն կրնա՞նք առանց խօսքի անցնիլ գործի: Գործը ի՞նչ իմաստ կ՚ունենայ, եթէ չէ առնչուած խօսքի մը, այսինքն նպատակի մը՝ կարիքի մը:

Ճի՛շտ է, առածը կ՚ըսէ՝ քիչ խօսէ, շատ գործէ, իսկ միւս առածը՝ խօսքը առանց գործի մեռեալ է: Ասոնք ժողովրդական իմաստութեան ապացոյցներ են, որոնք սակայն վերապահութեամբ վկայակոչելու ենք, երբ մեր հարցերը կը քննարկենք:

Մեր պատմութեան ներկայ փուլին, հարցերու բարդութիւնը կը պատրաստէ, որ երկար մտածենք մեր անելիքին մասին: Այնքան ալ դիւրին չէ արագ կողմնորոշուիլ ու գործի անցնիլ:

Մեզ շրջապատող թէ՛ նիւթական եւ թէ՛ բարոյական պայմանները կը ստիպեն մեզ մանրակրկիտ քննութեան ենթարկել զանոնք եւ զգուշութեամբ յանգիլ եզրակացութիւններու: Մեր երկրին վրայ ամեն կողմէ կը բանեցուին ամեն տեսակ ճնշումներ՝ յարձակում, բռնագրաւում, տնտեսական շրջափակում, նոյնիսկ մշակութային խեղաթիւրում, որոնք կը սահմանափակեն մեր քայլերը:

Այդ բացասական երեւոյթներուն արագ հակազդելով կրնանք աւելի բարդացնել մեր կացութիւնը, լուծելու տեղ աւելի անլուծելի դարձնել մեր խնդիրները:

Մեր հայրենիքի իրավիճակին կը վերաբերին այս մտահոգութիւնները առաջին հերթին:

Սակայն ինչ կը վերաբերի մեր համայնքային, քաղաքական, կազմակերպական կամ կրթամշակութային առօրեայ աշխատանքային հարցերուն, իրաւամբ մենք պարտաւոր ենք աւելի ազդեցիկ դառնալ, աւելի արագ շարժիլ, աւելի գործադրելի լուծումներ գտնել ու գործե՛լ: Եթէ չենք յաջողիր այդպէս ընելու, այդ չենք կրնար անվարան վերագրել մեր պայմաններուն, մեր շրջապատին: Մենք մեր մէ՛ջ փնտռելու ենք մեր դանդաղումներու, յապաղումներու եւ թերացումներու գլխաւոր պատճառները:

Եթէ չենք գտներ անհրաժեշտ մարդուժը, եթէ կը պակսի անհրաժեշտ նիւթուժը, մանաւանդ եթէ չունինք գործադրութեան յստակ ծրագիր, մենք միայն մե՛զ կրնանք այպանել:

Մեզ՝ գուցէ առաջին հերթին այն մարմինները, զորս ընտրած ենք եւ որոնց վստահած ենք մեր աշխատանքներու կազմակերպումը:

Սակայն անպայման նաեւ մեզ՝ շարքայիններս, անդամներս, համակիրներս ու մասամբ նորին, եթէ մենք չենք ընդառաջեր ստանձնելու մեզի առաջարկուող պարտականութիւնները, ձեռնարկները եւ այլն, եթէ չենք մասնակցիր կատարուող դրամահաւաքներուն, եթէ հեռու կը պահենք մենք մեզ մեր հաւաքական կեանքէն: Մարմինները անզօր կը մնան առանց հանրութեան, որ մենք ենք: Իսկ հանրութիւնն ալ պարտազանց կը մնայ իր իսկ մարմիններուն նկատմամբ:

Ուստի, ժողովներու մէջ թէ ժողովներէ դուրս, երբ իրաւամբ դիտել կու տանք, թէ խօսքէն անդին գործի չենք անցնիր, ամենէն առաջ մենք մեզի՛ հարց տանք, թէ մե՛նք ինչ կրնանք ընել անձնապէս, ի՛նչ կրնայ ընել մեզմէ իւրաքանչիւրը:

Եւ խօսքէն անդին՝ առաջին հերթին մե՛նք ըլլանք գործի անցնողը: ■

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՑ ԵՐԵՒԱՆ

(հատուած)

Անցեալը չեն սպաններ:

Գաղափարապէս հզօրներն ու ներկայով ու ապագայով հարուստները՝ կը ձգեն զայն խաղաղ: Անայլայլ՝ իր սուտին ու իրաւին մէջ: Կը համարեն դէպի ետ արձակուած նետերը՝ գաղափարական անթոյլատրելի թշուառութիւն, ներկային առջեւ՝ ճշմարտութեան անզէն վիճակ: Երէկը իր հագուստներէն հանուեցնելն ու այսօրուայ շորերով հագուեցնելը՝ մտքի կիսամերկ երեխաներու խղճուկ խաղ մըն է, աւազներու վրայ պատ բարձրացնելու յիմար փորձ մը:

Անցեալը չեն սպաններ:

Եթէ կը վախնաք իր ճշմարտութիւններէն՝ զատ հարց:

Գեղեցկութեան ու Գիտութեան աւելի հեռու և աւելի խոր էջքերով՝ կ՝ամչցնեն անցեալը, եթէ անպայման հարկ է: Առավելագոյն փայլով և ներքին առավելագոյն կրակներով կ՝անշքացնեն՝ անցեալը, եթէ անպայման հարկ է: Առավելագոյն փայլով և ներքին առավելագոյն կրակներով կ՝անշքացնեն՝ եթէ անհրաժեշտ է:

Հոգիին ու ժամանակին գրածը՝ դուք կ՝ուզէք ջնջել հիմա տպարաններով: Չի՛ ջնջուիր: Գրուածը գրուած է, ըսուածը՝ ըսուա՛ծ: Անցեալը կրնա՛յ դէպի ներկայ ճառագայթել, անցնիլ իր զօրութեամբ՝ իմաստներու նոյնիսկ յարձակողականի: Բայց ներկան՝ անցեալէն ոչի՛նչ կրնայ փոխել, ոչ մէկ բանով ազդել վրան: Գաղափարական որևէ ցորեն դէպի առաջ կը նետեն և ոչ թէ դէպի ետ:

Այս ի՛նչ միջամտութիւն է նաև դէպի ետ, դէպի երէկուան խօսքը, գործը: Եւ սակայն ձեզմէ աւելի պոռացող կա՛յ ամէն տեղ, վասն ոչ-միջամտութեան: Խաղաղ համակեցութեան այս երջանի՛կ օրերուն, ինչո՞ւ այս շատ անխաղաղ ընթացքը, ոչ ոք երջանկացնող: Խաղաղ համակեցութեան մէջ նորէ՞ն պայման է ուրեմն, որ մէկը մեռցուի, որպէսզի միւսին կեցութիւնը չըլլայ անխաղաղ: Միայն մարդ մը և ուրիշ մարդու մը դիմա՞կն են ուրեմն խաղաղ համակեցութիւնը լաւագոյնս իրագործողները: Պիտի շարունակէ՞ սուտ ըլլալ այդ աշխարհահամբաւ խօսքը, թէ պիտի հաճի՞ք կիրարկել զայն նաև դուք:

ԵԴՈՒԱՐԴ ՊՕՅԱՃԵԱՆ,
2 ՆԱՄԱԿ, 1.- ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆԻՆ,
2.- ՍՈՎԵՏԱՀԱՅ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՑ,
ՊԷՅՐՈՒԹ 1964, էջ 21-22:

1990 թվականի օգոստոսի 8-ին
Հայ Յեղափոխական Դաշնակցությունը հայտարարեց,
Հայաստանում կազմակերպական կառույցի վերահաստատման մասին:

ԴՐՕՇԱԿ